ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՀԱՅԵՐԸ

ԱԶԳԱՅԻՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

ԿԳ.

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՀԱՅԵՐԸ

ՆՐԱՆՑ ԱՆՑՅԱԼԸ, ՆԵՐԿԱՆ ԵՒ ԱՊԱԳԱՆ

ՎԻԵՆՆԱ
ՄԽԻԹԱՐԵԱՆ ՏՊԱՐԱՆ
1911.

9(=91.99)
Ա-70

ՊԵՏՈՒՄՈՒ է 1961 թ.

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՀԱՅԵՐԸ

ՆՐԱՆՑ ԸՆՑԵԼԸ· ՆԵՐԿԱՆ ԵՒ ԱՊԱԳԱՆ

ՄԱՍ Ա·

Ա II/32184
Գ-2892

ԳՐԵՑ

Հ· ԱՌԱՔԵԼԵԱՆ



ՎԻԵՆՆԱ
ՄԽԻԹԱՐԵԱՆ ՏՊԱՐԱՆ
1911.

ԱԶԴ

Ներկայ աշխատութիւնը մի հրապարակական դասախօսութիւն է, որն ես կարդացի Թարփզում Ամերիկական միսիօնարների ժողովարանի դահլիճում, "Լսարանական" ընկերութեան հրաւէրով, 1897 թ. Նոյեմբերի 14/26ին:

Լրացուած եւ զանազան փոփոխութիւնների ենթարկուած նա տպուեց մաս մաս "Հանդէս Ամսօրեայ"ի մէջ 1899 թուին, եւ այժմ ելս արտատպուած լոյս է տեսնում առանձին գրքով*:

Հ. Ա.

---

* Ցուսալով, որ բազմազբաղ հեղինակն քիչ ժամանակէն տրամադրելի կ'ընէ խմբագրութեանս գործոյս Բ. եւ Գ. մասերն ալ, եւ այնպէս ի միասին իբրեւ ամբողջութիւն մը լոյս կը տեսնեն մէկ հատորի մէջ, մինչեւ օրս տպագիր թերթերն մնացին խաւարի մէջ. կ'ընծայենք զանոնք այժմ ի լոյս, վստահ թէ պիտի կարդացուին դարձեալ հետաքրքրութեամբ աւելի ընդարձակ շրջանակէ մը: Բ. եւ Գ. մասերն խոստացած է մեզ Ցարգ. հեղինակն առաջիկայ տարին աւարտել, որոնք ժամանակին լոյս կը տեսնեն Հանդիսի մէջ:

ԽՄԲ. "ՀԱՆԴԻՍԻ"

ԱԹՈՒՈՒԹԻՒՆԸ ԿԱԶՄԵԼԻՍ ԻՆՉ ՕԳՆԱԿԱՆ ԵՆ ԵՂԵԼ ՀԵՏԵՒԵԱԼ ԱՂԲԻՒՐՆԵՐԸ

1. Voyages très curieux et très renommes faits en Moscovie, Tartarie et Perse (1633—1637) par le Sr. Adam Olearius, Amsterdam, 1727.
2. Voyages de Mr. le Chevalier Chardin en Perse et autres lieux d'Orient, Louen, 1723, Amsterdam, 1735.
3. Պատմութիւն Նոր Ջուղայու որ յԱսպահան, աշխատասիրեալ ի պ. Յարութիւնէ Թ. Տէր Յովհաննէսեանց. Նոր Ջուղայ, 1880։
4. Պատմութիւն Հայոց Չամչեանի, Վենետիկ, 1784։
5. Die Erdkunde von Karl Ritter, Berlin, 1838.
6. Պատմութիւն Ռաքել Վարդապետի Դավրիժեցւոյ, Վաղարշապետ, 1896։
7. Акты Кавказ. археограф. коммиссіи Т. I. Тифлисъ 18.
8. Քնար Հայկական, Միանսարեանի, Ս. Պետերբուրգ, 1868։
9. Описаніе переселенія Армянъ аддербиджанскихъ въ предѣлы Россіи, Сергѣемъ Глинкою, Москва 1871.
10. "Շուրջ-Նամէ" ձեռագիր աշխատութիւն Թէհման Միրզայի 1872 թ. Շուշի։
11. Г. А. Езовъ, Сношенія Петра Великаго съ армянскимъ народомъ, С.-Петербургъ 1898.
12. Եւ մի քանի ուրիշ երկասիրութիւններ. որոնք յիշուած են աշխատութեանս մէջ։

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՀԱՅԵՐԸ, ՆՐԱՆՑ ԱՆՑԵԱԼԸ, ՆԵՐԿԱՆ ԵՒ ԱՊԱԳԱՆ

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

Ի թիւս այն դժբախտ պատմական պատճառների, որոնք արգելել են հայկական կեանքի կանոնաւոր զարգացումը, որոնք առաջ են բերել մի տեսակ խորթութիւն՝ զանազան երկիրներում բնակող հայերի մէջ, այնպէս որ այդ խորթութիւնը շատ անգամ ատելութեան եւ թշնամութեան է հասել, մինն եւս այն անմխիթար երեւոյթն է, որ մենք, հայերս, միմեանց ճանաչելու ձգտում չենք ցոյց տալիս, միմեանց ուրախութիւններին եւ ցաւերին մասնակից չենք լինում։ Օրինակ, վեր առնենք նոյն իսկ ձեզ. Ղարադաղցի[1] հայը միշտ մի տեսակ խորթութիւն, թշնամութիւն է տածում դէպ ի Թավրիզեցի հայը, սա եւս նոյնպէս. Ղարադաղցին՝ նոյն աչքով չէ նայում Ղարաբաղցու վրայ, ինչպէս նայում է իր համաքաղաքացի Ղարադաղցու վրայ. հայ-լուսաւորչականը նոյն աչքով չէ

---

1 Ղարադաղ մի գաւառ է, որ գտնւում է Ադրբէջանում, եւ սահմանակից է Ղարաբաղին։

նայում հայ-կաթուղիկէի եւ հայ-բողոքականի վրայ, ինչպէս եւ վերջիններս առաջնի եւ միմեանց վրայ։

Բայց ո՞վ է Ղարադաղցին եւ Ղարաբաղցին. ո՞վ է հայ-լուսաւորչականը եւ հայ-կաթուղիկեայն, հայ-բողոքականը. մի՞թէ ամէնքն եւս մի եւ նոյն ցեղից չե՞ն, մի եւ նոյն ազգի զաւակներ չե՞ն. մի՞թէ ամէնքն եւս իրանց քրիստոնէութիւնը չընդունեցի՞ն Գրիգոր Լուսաւորչուց. մի՞թէ ամէնքն եւս մի եւ նոյն լեզուով չե՞ն խօսում. մի՞թէ նրանք մի եւ նոյն պատմութիւնը չունի՞ն։

Անշուշտ, այդպիսի մի խորթութիւն, այդպիսի մի վնասակար բաժանում տեղի է ունենում միշտ անկիրթ ժողովուրդների մէջ։ Եթէ մի հասարակութիւն կամ ժողովուրդ անհատական կեանք է վարում, եթէ նա չէ հետաքրքրւում միւս հասարակութիւնների կեանքով, եթէ նա իր ոյժը, բարօրութիւնն ընկերական կեանքի մէջ չէ տեսնում, կը նշանակէ թէ նա դեռ լուսաւորութեան ստոր աստիճանի վրայ է կանգնած։ Հայերի մէջ չկայ բարոյական միութիւն, բարոյական համերաշխութիւն, որը միակ գրաւականն է ազգի զարգացման. հետեւաբար, մի տեղի Հայի ստացած անարգանքն եւ անպատուութիւնը՝ միւս տեղի Հային չէ դիպչում, չէ վշտացնում, այդ կողմից մենք Հրեաներից անգամ յետ ենք մնացել։ Մի քանի տարի առաջ Քութայիսում մի Հրեայ ամբաստանուեց, թէ նա իբր թէ արիւնաքամ է արել մի քրիստոնեայ

երեխայի. մի ամբաստանութիւն, որ քրիստոնեաների ֆանատիկոսութիւնը մեղանչաբար բարձել է այդ հալածեալ ժողովրդի վրայ. այդ ժամանակ համարեա՝ ամբողջ հրէական աշխարհը ոտքի կանգնեց եւ ամէն ջանք գործ դրեց, թենայելով ոչնչ՝ սրբելու ազգից այդ կեղծ ամբաստանութիւնը։

1871—1872 թուին սարսափելի սով էր Պարսկաստանում։ Եւ դեռ լաւ յիշում եմ այն քամնելի եւ զարհուրելի տեսարանը, որին ականատես եղայ Թաւրիզի փողոցներում։ Սովի երեսից, Պարսկաստանի խորքից, Հայերը փախչելով ածապարում էին գաղթել դէպ ի Ռուսիա, բայց մեծ մասը ճանապարհին սովամահ լինելով, միայն մի փոքր մասը Թաւրէզ էր հասել։ Մերկ, գողդոջուն, գերեզմանի դռնին մօտեցած՝ նրանք թափուած էին փողոցներում հաց խնդրելով։ Թաւրիզի սակաւաթիւ հայ ժողովուրդն ածապարեց ժողովրդի աւերման այդ ճնացորդը պատսպարել եւ փրկել, բայց եթէ անգղիական ազգի օգնութիւնը հասած չլինէր, Սպահանում համարեա բոլոր Հայերը կը կոտորուէին։ Լոնդոնից ահագին գումարներ էին ուղարկուում, որոնցով անգղիական հիւպատոսները հաց էին մատակարարում թշուառներին, եւ այդպիսով նրանք ազատեցին համարեա բոլոր պարսկական ազգը, նրա հետ եւ Հայերին։ Բայց Ռուսաստանի կամ Թիւրքիայի որ Հայը օգնութեան ձեռք կարկառեց իր հարազատ եղբօր։ Ոչ ոք։ Եւ երբ սովից յետոյ Հայերը

գունդ գունդ գաղթեցին մեր երկիրը, Նախիջեւանի եւ Երեւանի կողմերը, ով ածապարեց մի յանձնաժողով կազմել եւ շթողնել, որ թշուառները մեռնին տենդից, վարակիչ հիւանդութիւններից, եւ այլն։ Ոչ ոք։ Ես կարող եմ ասել, որ մինչեւ անգամ չգիտէին թէ Պարսկաստանի Հայերը ենթարկուել են մի այդպիսի աղէտի եւ ոչ ոք տեղեկութիւն չունէր այդ մասին։ Ընշուշա, այդ բոլորն առաջ է գալիս նրանից, որ մենք ոչինչ տեղեկութիւն չունենք այն մեր եղբայրների մասին, որոնք ապրում են երկրագնդի զանազան կողմերում։ Դեռ մի 10 տարի առաջ Թիւրքա-Հայաստանը մեզ համար terra-incognita էր, իսկ այսօր այդպիսի terra-incognita է եւ Պարսկա-Հայաստանը, Միայն վերջին պատերազմի պէս մի զարհուրելի ցնցում հարկաւոր էր, որ ստիպէր մեզ տեղեկութիւններ հաւաքել Թիւրքիայի Հայերի մասին, նրանց կենաքով հետաքրքրուել, դասախօսութիւններ կարդալ, թղթակցութիւններ գրել, եւայլն։

Մենք նման ենք այն ճարտարապետին, որ կամենալով մի հին շինութիւն նորոգել, ուշք չէ դարձնում հիմքի վրայ. մենք կամենում ենք, ձգտում ենք լուսաւորել ժողովուրդը, բայց անծանօթ ենք այդ ժողովրդին։ Շինութիւնը կարող է գեղեցիկ դուրս գալ, բայց կարող է եւ շուտով փլչել, որովհետեւ հիմքը խախուտ էր։

Դրան նման է եւ այն ձեւը, որով մենք կամենում ենք լուսաւորութիւն տարածել մեր

ազգի մէջ։ Հիմքը՝ ինքն ժողովուրդն է, իսկ մենք չգիտենք այդ հիմքը որքան հաստատուն է։ Մենք չգիտենք իսկապէս ինչ է հայ ազգը, որովհետեւ մենք չգիտենք նրա թիւը, չգիտենք նրա դրութիւնը, չգիտենք այն պայմանները, որոնց ենթարկուած է նրա կեանքը զանազան երկիրներում, այն յատկութիւնները, որոնք սեպհական են նրան։ Մինչեւ անգամ մեր լեզուն, մեր գրականութիւնը զանազան տեղերում՝ ուրոյն ուրոյն ուղղութիւն են ստանում։ Ինչ վիճակի մէջ է դրած Թիւրքիայում հայ դպրոցական գործը, ինչ ուղղութեամբ է գործում այնտեղ մամուլը, որքան բարեյաջող է ժողովրդի տնտեսական դրութիւնը, ինչ տեսակ տարրներով է նա շրջապատուած, եւ այլն, մինչ այժմ եւս սրանց մասին մեր ունեցած տեղեկութիւնները՝ միայն կցկտուր եւ անկապ բաներ են։ Այս կողմից եւս առաւել անգէտ են Թիւրքիայի Հայերը մեզ՝ Ռուսահայերիս եւ Պարսկահայերիս վերաբերմամբ։ Գաւառներում միայն մի բան գիտեն, — թէ իրենցից հեռու կայ մի հայութեան կենդրոն՝ — Էջմիածինը, եւ ուրիշ ոչինչ։

Իսկ մինչեւ վերջին սոսկալի աղէտները, մինչեւ վերջին կոտորածները՝ կրօնական հալածանքը դեռ մեծ դեր էր խաղում Թիւրքիայի Հայերի մէջ. Հայ-լուսաւորչականը հալածում էր Հայ-կաթուղիկէին եւ Հայ-բողոքականին. սա եւս նրանց, բայց այն՝ ինչ որ դարերի ընթացքում չկարողացաւ կատարուել, վերջին սոսկալի

ազէտը՝ դժբախտութիւնը կատարեց. այլա-
դաւան Հայերի մէջ հաստատուեց եղբայրական
համերաշխութիւն, միութիւն։ Եւ ինչի՞ համար
էին հալածում Հայերը միմեանց. կրօնական
համոզումների համար։ Բայց այդ շատ սխալ է
եւ ահա ինչ պատճառով։

Կրօնը անհատական խղճի ազատութեան
գործ է. ուրեմն մենք չպէտք է գործ ունենանք
նրա հետ եւ դիպչինք նրան։ Ամէն մարդ պէտք
է ազատ լինի իր Աստուածն իր համոզմանը հա-
մեմատ պաշտել։ Շատ հասկանալի կը լինէր,
եթէ դուք հալածէիք բողոքական եւ կաթուղի-
կեայ Հային ոչ թէ հաւատի, դաւանութեան
համար, այլ եթէ նա ուրանում էր իր ազգայ-
նական պայմանները, այն է՝ իր լեզուն, պատ-
մութիւնը, անցեալը, հայութեան ընդհանուր
ապագան. հալածեցէք բողոքական, կաթուղիկեայ
քարոզիչներին, եթէ նրանք աշխատում են հայ
մատաղ սերնդի սրտից ջնջել ազգայնութեան
գաղափարը, բայց մի հալածէք նրանց, եթէ
նրանք համոզուած լինելով, որ քրիստոնէական
կրօնի այս կամ այն դաւանութիւնն կամ ձեւն
աւելի ճշմարիտ է, աշխատում են այդ համոզ-
մունքը տարածել եւ ուրիշների մէջ. այդտեղ՝
շատ շատ՝ զայրացէք եւ պախարակեցէք հայ-
լուսաւորչական հոգեւորականութիւնը, որ պոր-
տաբոյծ, անգործ կեանք վարելով, չէ կարողա-
նում մրցել այլադաւան հոգեւորականների
հետ եւ բարոյական ազդեցութիւն գործել իր
հօտի վրայ։

Ես արդէն կարդում եմ ձեզանից շատերի դէմքի վրայ արտայայտուած զարմանքը. մի թէ ես հերքում եմ ազգային եկեղեցու նշանակութիւնը. գիտեմ նոյնպէս, որ մեր quasi — ազգասէրները կարող են կնքել ինձ եւ դաւաճան, ուրացող անունով, որ ես իբր թէ նշանակութիւն չեմ տալիս "Հայոց Ազգային Եկեղեցոյն": Ոչ, ես մեծ նշանակութիւն եմ տալիս ազգային եկեղեցուն եւ չեմ կարող չտալ, որովհետեւ Հայոց ազգային եկեղեցին մի այնպիսի հաստատութիւն է, որ ցոլացնում է իր մէջ ազգի բազմադարեան կեանքը, այն է՝ նրա կրած տանջանքները, ցաւերը, ուրախութիւնները, մի խօսքով, ազգի հոգեբանական՝ ուրեմն ամենակարեւոր կողմը, ազգի անցեալը, պատկերը, պատմութիւնը: Ես այդ շատ լաւ գիտեմ, բայց գիտեմ նոյնպէս, որ ոչ մի՝ փոքր ի շատէ խելքը գլխին կրթուած Հայ-կաթուղիկեայ, Հայ-բողոքական՝ չէ կարող ուրանալ ազգային եկեղեցին, չէ կարող չճանաչել Գրիգոր Լուսաւորչին, Մեծն Ներսիսին, Սահակին, Մեսրոպին, Ներսէս Շնորհալուն, Ներսէս Լամբրոնացուն, որոնք նոյնքան թանգ պէտք է լինին՞ եւ են Հայ-կաթուղիկէի, Հայ-բողոքականի համար, ինչքան են Հայ-լուսաւորչականի համար: Ես միայն կամեցայ հասկացնել ձեզ, որ դաւանաբանական հարցերի համար չպէտք է մի եւ նոյն ցեղի, ազգի անդամները, եղբայրները միմեանց հալածեն:

Այս բոլոր ասածիցս յետոյ գալիս եմ իմ առաջուայ խօսքին թէ՝ ազգի լուսաւորութեան

համար հոգացողները պէտք է ծանօթ լինեն այդ ազգի ներկայ դրութեան հետ, եւ թէ իւրաքանչիւր ձեռնհաս եւ հասկացող Հայի սեպուհ պարտաւորութիւն է ազգի անդամներին միմեանց հետ ծանօթացնել։ Երբ մենք մի ընդհանուր գաղափար կ'ունենանք Հայութեան վիճակի մասին, այն ժամանակ մեր գործը չափազանց կը հեշտանայ, որովհետեւ մեր գործունէութիւնը հետեւանք կը լինի բարեխիղճ ուսումնասիրութեան։ Ցանպատրաստից գործելը մեզ միշտ մեծամեծ վնասներ է տուել. երբ Հայ պատրիարքարանին հարկաւոր էր տեղեկագիր ներկայացնել Եւրոպական պետութիւններին՝ Թիւրքիայի Հայերի քանակութեան եւ առհասարակ դրութեան մասին, նա չգիտէր ո՛ր ջուրը ընկնէր. նա ծանօթ չէր ժողովրդի հետ։

Վերջին տարիներս ժողովրդի հետ ծանօթանալու ձգտումը հետզհետէ աճում է։ Այժմ մեր պարբերական մամուլն իր մշտական թղթակիցների ձեռքով անընդհատ տեղեկութիւններ է հաղորդում Թիւրքիայի Հայերի մասին. այդ ծանօթութեան հիմքը դրին Թիֆլիսում կարդացուած հրապարակային դասախօսութիւնները, օրինակ՝ Գ. Արծրունու, Ա. Թոխմախեանի, Ս. Մանդինեանի, որոնք բաւականին նպաստեցին գործին։ Եւ ճշմարիտ՝ հրապարակային դասախօսութիւնն ամենաւելի միջոցն է նպատակին հասնելու։ Այս եւս այդ ճանապարհն ընտրեցի՝ ծանօթացնելու ձեզ Հայ ազգի մի բեկորի հետ։

Ա.

Հայտնի է պատմութիւնից, որ ոչ մի պատմական ազգ այնքան մեծ ազդեցութիւն չէ ունեցել Հայերի վրայ, այնքան սերտ միջամտութիւն չէ գործել նրանց՝ մինչեւ անգամ ընտանեկան գործերի մէջ, որքան պարսկական ազգը։ Դեռ ամենահին պատմական ժամանակներում, Պարսիկները մեծ դեր են խաղացել հայ պատմութեան մէջ։ Մենք գիտենք, որ Հայաստանը դեռ թագաւորական իշխանութիւն ունենալուց յառաջ՝ տարեկան իբրեւ հարկ վճարում էր Պարսկաստանին 20.000 երիվար։ Մեր Արշակունի հարստութեան հիմնադիրը, այդ փառաւոր թագաւորութեան նախահայրը, որ այնքան երկար ժամանակ իշխեց Հայաստանում, միխսքով՝ Վաղարշակը՝ — Պարսից թագաւորի եղբայրն էր։ Քանի որ Պարսկաստանի մէջ տիրում էր Հայաստանի թագաւորների ազգական ցեղը, այդ տերութիւնները միմեանց հետ հաշտ էին եւ միմեանց օգնում էին, բայց երբ Պարսկաստանում սկսեց տիրել Սասանեան ցեղը, օրինակ՝ Հայոց Խոսրով թագաւորի ժամանակ, Հայաստանը փախստականներին եւ հալածականներին իբրեւ ապաստանարան էր ծառայում։ Այդ երկու երկիրների մէջ փոխադարձ յարաբերութիւնները դիւրացնում էր եւ այն հանգամանքը, որ երկուսն եւս համակրոն էին, բայց երբ Հայաստանն ընդունեց քրիստոնէութիւնը, այն ժամանակ խտրութիւնը մեծացաւ եւ հետզհետէ մինչեւ յայտնի թշնամութեան հասաւ,

որի արգասիքն քաջ Վարդանի եւ իր ընկերների անմահ գործն եղաւ, երբ Նրանք մայրենի եկեղեցու եւ հողի համար նահատակուեցան:

Ի հարկէ այդպիսի մերձ յարաբերութիւնները չէին կարող առանց մեծ ազդեցութեան մնալ հայկական գրականութեան, լեզուի եւ առհասարակ ազգային բնաւորութեան վրայ: Դեռ քանի որ հայկական տառերը չէին գըտնուած, Հայաստանի շատ տեղերում պարսկական գրերն էին գործածւում, Հայոց չաստուածների շատերը Պարսից չաստուածներն էին: Դեռ մինչեւ այսօր եւս զանազան սովորութիւնների եւ տօների մէջ հեթանոս Պարսիկների հետքը մնացել է Հայոց մէջ: Ես հաշուել եմ մեր լեզուի մէջ մի եւ նոյն ուղղագրութիւնը, նշանակութիւնն ունեցող մօտ երկու հարիւր պարսիկ բառեր, զոր օրինակ՝ կանգ, սուգ, հազար, ճրագ, բրինձ, ճար, մարդ, դուխտ, դրախտ, խորտիկ, բազուկ, ակահ(ներհուն), նիազ, քէշ, յաշտ, նշանգ, բախտ, ճետ, խազմ, պարսատակ, դեւ, պանիր, թագ, գոհար, գպիր, նկար, խմոր, (հ)ամբար, շտապ, թոներ, հուր, տապար, բարակ, զոր, փաշաման, եւն:

Ահա ինչ է ասում գերմանացի գիտնական Կարլ Ռիտտեր՝ իր հռչակաւոր երկրագիտութեան գրքի մէջ:

"Նաեւ Սասանեանք, Զրադաշտի վարդապետութիւնը, ինչպէս եւ մոգութիւնը՝ առանց ազդեցութեան չմնացին հայկական գրականութեան վրայ, եւ դրա համար այն ժամանակուայ

պարսկական գրութեան անհետանալուց յետոյ (Օմարի տիրապետութեան ժամանակ), հայ ձեռագիրների մէջ մնացել է շատ բան, որ լոյս է սփռում այդ շրջանի եւ գրականութեան վրայ։ Երբ Հայաստանի՝ աւելի անկախ Արշակունեաց թագաւորութիւնը ոչնչացաւ եւ Պարսկաստանի հողից աքսորուած Արշակունի իշխաններն ապաստանեցին Հայաստան, որպէս զի այդ երկրից՝ իրանց երջանիկ հակառակորդներին յափշտակուած դահի վրայից դուրս վանեն, այդ միջոցին Սասանեանք՝ մոգերի միջոցով սկսեցին քարոզել հաւատափոխութիւն. եւ այդ մի վանդալոր օրինակ եւ յաջորդութիւն պիտի դառնար մահմեդական Արաբների ձեռքում, որոնք յաջորդեցին նրանց։ Այդ ժամանակ Շապուհ թագաւորը կամեցաւ թրի զօրութեամբ մոցնել Հայաստանի մէջ մոգութիւնը կամ մազդեզանց օրէնքը։ Սասանեանք շատերին դաժանին, հնայելով որ քրիստոնեայ հեղինակները մոգերի դէմ ասուած հակամառական գրուածներ էին տարածում, զոր օրինակ՝ գիտնական հայ հոգեւորականները — Եղիսէ, Արծան, Արծրունի եւ այլք։ Վարդան զօրավարի Պարսից դէմ ունեցած պատերազմի պատմութեան մէջ, որ նկարագրել է Ե. դարի կիսում Եղիշէ Վարդապետը, մի պատմութիւն որ պարունակում է իր մէջ Հայերի հերոսական պատերազմն եւ հաստատամտութիւնը, որոնց՝ ուժով կամենում էին բռնադատել՝ Յիսուսի Վարդապետութիւնը Զրադաշտի հրապաշտութեան հետ փոխանակել. այդ պատմութեան մէջ պահպանուել է Հայաստանի պարսիկ մարզպան Վէհմիհրներսէհի հրամանը, որ յորդորում է հայ քրիստոնեաներին Զրադաշտի կրօնն ընդունելու, եւ որի մէջ բացատրուած է այդ կրօնի վարդապետութիւնը։ Եւ որովհետեւ գայթագղութիւնը շատ հրապուրիչ էր, վասն զի ուրացման հետ կապուած էին շատ քաղաքական արտօնու-

թիւններ, ուստի եւ, ինչպէս տեսնւում է Շապուհ Բ.ի Արշակի հետ ունեցած կռուի պատմութիւնից, որ պատահեց Դ. դարու կիսում, Հայաստանի ականաւոր իշխանազուններն՝ ուրացող Մեհրուժանի եւ Արծրունիների միջոցով, եւ Վահան Մամիկոնեանի ձեռքով, ուրացին քրիստոնէութիւնն եւ Հայաստանի երկրների վրայ հրամանատար կարգուեցին Սասանեանց տիրապետութեան ժամանակ։ Առաջինը ստացաւ Վասպուրականը, մի մեծ գաւառ, որ ընկնում է Վանայ լճի հարաւում, մինչ Երասխը եւ Ուրմիի ծովակի եզերքը՝ Ատրպատականում, երկրորդը՝ դարձաւ զօրապետ կամ հրամանատար Հայաստանի։ Այն ժամանակ քրիստոնէութեան եւ հայ ազգի դէմ ատելութեամբ լցուած Մեհրուժանը՝ Պարսից թագաւորի մի հրամանը հրատարակեց Հայաստանի մէջ, որով արգելւում էր կարդալ հայերէն եւ յունարէն լեզուներով գրուած գրքերը. եւ որպէս զի աւելի շուտով իր նպատակին հասնի, նա 381 թուին հրամայեց բոլոր այդ գրքերը հրոյ ճարակ տալ։

"Այդ էր Հայաստանի վիճակը, որն ի նկատի ունի ժամանակակից Ամմիանոսը, երբ նա խօսում է Հայաստանի մեծ մասի, կամ իր խօսքով՝ այն երկրի մասին, որ Պարսստանի դէմ ատելութեան եւ պատուար է, որն Արտաշատի հետ, Յովհաննոս կայսեր ամօթալի հաշտութեան շնորհիւ, շուտով ընկաւ Սասանեանց, կամ ինչպէս ինքն ասում է՝ Պարթեւների իշխանութեան ներքոյ (Amm. Marc. XXV. 7, 12). Unde postea contigit, ut vivus caperetur Arsaces, et Armeniae maximum latus Medis conterminans, et Artaxata inter dissensiones et turbamenta raperent Parthi.) Սակայն պէտք է դանդաղանել այդ բռնութեամբ նուաճուած ամբողջ Հայաստանի մեծ կէսը, այսինքն արեւելեան Հայաստանը, որին պատմագիրները Պարսկա-Հայաստան անուն են տալիս, մի

եւ նոյն անունով այն վարը գաւառից, որն մինչեւ այսօր եւս նմանապէս կոչւում է Պարսկա-Հայաստան, որովհետեւ այդ անուամբ նա կոչւում է Մովսէս Խորենացու աշխարհագրութեան մէջ 9երորդ գաւառ, Armenia Persica, որ ընկնում է Պարսի եւ Ասորստանի մէջ, եւ որտեղ գտնւում են հազարաւոր Հեր եւ Զարեւանդ գաւառները, որոնց գլխաւոր քաղաքն է այսօր Սալմասկամ Սաղմաստ։»[1]

Միեւնոյն աշխարհագիրը, խօսելով հայկական լեզուի մասին, ասում է.

«Հայաստանի հին ժողովրդական երգերն իրենց ծագման մէջ խիստ յարաբերութիւն եւ ազգականութիւն ունին ի հնումն հազակուած Պարսից Ֆիրդուսի Շահնամէի երգերի հետ։»

Հին Պարսկաստանի՝ Հայաստանի վրայ ունեցած ազդեցութեան մասին այս կարճառօտ բացատրութիւնը տալուց յետոյ, դառնանք մեր բուն նպատակին, այն է տեսնենք թէ այն Հայերը, որոնք այսօր բնակւում են Պարսկաստանի զանազան քաղաքներում, ո՞րտեղից յառաջ եկան. կամ բացատրենք այժմեան Պարսկահայոց ծագումը։ Սակայն Պարսկահայ ասելով չպէտք է հասկանալ հին Հայաստանի այն մասը, որ Խորենացու աշխարհագրութեան 9րդ գաւառն է եւ պարունակում է իր մէջ այժմեան Ատրպատական գաւառը. մեր խօսքն այն Հայերի մասին է, որ իրենց բնակութիւնը հաստատել են բուն Պարսկաստանի կամ Ատրպատ-

---

1 Die Erdkunde von Karl Ritter, 10. Theil, Bd. VII. Berlin 1843. Drittes Buch, West-Asien.

տանի մէջ, գլխաւորապէս Սպահան, Համա-
տան, Շիրազ, Թէհրան եւ այլ քաղաքներում,
եւ որոնց ծագումն աւելի մօտ դաղթականու-
թեան արդիւնք է։ Այդ Հայերը դաղթեցին
Հայաստանից Պարսկաստան ԺԷ. դարում՝ մեծն
Շահաբբասի թագաւորութեան ժամանակ եւ
նրա բռնակալ հրամանով, մինչդեռ Ատրպա-
տականի կամ բուն Պարսկահայքի մէջ գտնուած
Հայերը շատ հին ժամանակից ի վեր բնակուել
են այդ երկրում, եւ ամբողջ դարերի ընթաց-
քում ենթակայ են եղել շատ աղէտների եւ
տառապանքի։ Ատրպատականի մէջ եղած քա-
ղաքները — Թաւրէզ, Մարանդ, Ուրմիա, Խոյ,
Մարաղա, Սալմաս դեռ պատմական ամենահին
ժամանակում յայտնի են եղել իբրեւ բազմա-
մարդ հայ քաղաքներ. այսպէս գիտենք, որ
Քրիստոսի երկոտասան առաքեալներից մինը
Յուդա կամ Թադէոս՝ Հայաստան եկաւ եւ այդ-
տեղ մեռնելով, թաղուեց Ուրմի քաղաքում։
ԺԵ. դարում՝ Լենկթիմուրի արշաւանքից յե-
տոյ, երբ յայտնուեց բռնակալ Յուսուփ ամի-
բան, որ Հայաստանն արեան ծով դարձրեց,
Թովմաս Մեծոբեցի ականատես պատմագրի
վկայութեան համեմատ, Ատրպատականում
Հայերի մեծ բազմութիւն կոտորուեց, օրինակ՝
1425 թուին Յուսուփի որդի Աքանտարը՝ առ-
նելով Ուրմի քաղաքը, որի բնակիչները կէսից
աւելի Հայ էին, նոյն Թովմաս Մեծոբեցու ասե-
լով, կոտորեց բոլոր Հայերին եւ ոչ մի հաա
եւս թողեց, բաց ի մանուկներից եւ աղջիկնե-

րից։ Ատրպատականի մէջ գտնուած Հայերի շատութեան մի ուրիշ ապացոյցն եւս այն է, որ երբ ԺԴ. դարում, 1333 թուին, Յովհան Քռնեցի կոչուած Վարդապետը հաստատեց Ունիտորների կարգը, որ այնքան շփոթութիւնների պատճառ դարձաւ, այդ կարգին պատկանող վարդապետներն իրանց վարդապետութեան քարոզութեան համար իբրեւ կենդրոն ընտրեցին Թաւրէզ, Մարաղա, Սուլթանիյէ քաղաքները Նախիջեւանի հետ։

Սուլթանիյէ եւ Ռէյ քաղաքների վրայ փոքր ինչ աւելի պէտք է կանգ առնենք։ Զգիտենք, ինչ հիման վրայ՝ մի քանի պատմագիրներ ասում են, որ իբր հին ժամանակներում Հայաստանի վերջին թագաւորներն իրանց պալատն այդտեղ էին պահում, եւ այդ ժամանակ 400 եկեղեցիներից աւելի կար այդ քաղաքում, եւ թէ այդ եկեղեցիների աւերակներն մինչեւ այժմ տեսնւում են։

Այստեղ յառաջ կը բերենք երկու վստահելի ճանապարհորդների կարծիքները Սուլթանիյէի մասին։ Շարդէն, իր գրքի Գ. հատորի մէջ գրում է։

"Սուլթանիյէ քաղաքը շինուած է մի լեռան ստորոտում. հեռուից շատ գեղեցիկ է երեւում, բայց մօտիկից ոչ։ Մի քանի հասարակական մեծ շինութիւններ կան՝ ճարտարապետութեան եւ քանդակագործութեան տեսակէտից. նա 3000 տուն ունի։ Բնիկներն ասում են, որ այդ քաղաքը յառաջ կէս մղոն տեղ էր բռնում, դէպ ի արեւմուտք, եւ այն եկեղեցիները, մզկիթները, աշտա-

բակները, որոնց աւերակները տեսնւում են այդ կողմում՝ այդ քաղաքի մասն էին կազմում։ Այդ կարող է նշմարիա լինել, որովհետեւ Պարսից պատմագիրները հաւատացնում են, որ Սուլթանիյէն տէրութեան ամենամեծ մայրաքաղաքն էր, եւ աշխարհում շատ քիչ քաղաքներ կան, որոնք այդքան շատ աւերակներ ունենան։

"Պարսկաստանի պատմագրներից ոմանք ասում են, որ այդ քաղաքը Պարթեւների ամենահին քաղաքներից մին է, եւ նրա հիմնադիրն անյայտ է։ Ուրիշներն ասում են ընդհակառակն՝ որ առաջին հիմքն ձգուեց Լոհրասպի իշխանութեան ժամանակ, Եզրաս Խանի հրամանով եւ թագաւորութեան ժամանակ, որ Հալաքու Խանի թոռն էր, եւ որովհետեւ քաղաքի շինութիւնը չվերջացաւ նրա կենդանութեամբ, նրա որդի Խանդու Սուլթանն աւարտեց շինութիւնը ԺԴ. դարի սկզբում, եւ կոչեց Սուլթանիյէ, այսինքն արքայական քաղաք։ Սակայն ես լսեցի շատ տեղեակ անձերից, որ այդ քաղաքը Սուլթանիյէ անունն սկսել է կրել միայն այն օրից՝ երբ Պարսկաստանի վերջին թագաւորները, որոնք նոյնպէս Սուլթան էին կոչւում, իրանց բնակութիւնը հաստատեցին այդտեղ։ Շահաբբաս Մեծն փոխադրեց մայրաքաղաքն այդ տեղից Սպահան ԺԶ. դարի վերջում։

"Եւրոպայի այժմեան մի քանի հեղինակներ համաձայն կերպով պնդում են, որ Սուլթանիյէն կառուցուել է Տիգրանակերտի աւերակներից. եթէ այդ ճիշդ է, ուրեմն կարելի է ասել, որ այժմեան անունը կազմուել է իր հին անուից. էրդ՝ հին պարսկերէն նշանակում է «աղ». Տիգրանակերտ նշանակում է Տիգրանի քաղաք, որն, ինչպէս ամէն մարդ գիտէ, Հայաստանի թագաւոր էր։ Սակայն ես չգիտեմ, ինչպէս Սուլթանիյէն կարելի է Տիգրանակերտի տեղ ընդունել. Տակիտոսը ասում է, որ

Տիգրանակերտը Սիզերից (Մծբին) 37 մղոն հեռու էր, իսկ այդ քաղաքը գտնւում է Միջագետքում, Տիգրիս գետի վրայ՝ Նինուէից 35 մղոն հեռու։

"Սուլթանիյէն շատ անգամ աւերուեց. առաջին անգամ Խօջա Մէշիդ Պարսկաստանի թագաւորից, որին պատմագիրները կոչում են Գիւզան, որովհետեւ նա ապստամբել էր եւ զէնք էր վերառել այդ թագաւորի դէմ. ապա Թիմուրլէնկն աւերեց։ Խմայէլ Սօֆիի նախորդները, սկսեալ հիճրէյի 700 թուականից, այն է 1300ից, մի քանի ժամանակ այդտեղ հաստատեցին իրանց բնակութիւնը. եւ ասում են, որ մի քանի դար առաջ, Հայաստանի վերջին թագաւորներն այդտեղ էին հաստատել իրանց աթոռները, եւ նրանց ժամանակին չորս հարիւրից աւելի եկեղեցիներ կային։ Այդ եկեղեցիների շատերի աւերակները դեռ տեսնւում են, բայց ամբողջ մնացած մի հատ չկայ, եւ ոչ եւս մի հատ քրիստոնեայ է բնակւում այդտեղ։"

Մի այլ հեղինակ՝ Ադամ Օլէարիոս, որ ճանապարհորդեց Պարսկաստան 1633—1639 թուին՝ ուրեմն Շարդէնից առաջ, ահա ինչ է գրում։

"Սուլթանիյէ քաղաքը հեռուից շատ գեղեցիկ է երեւում՝ մի քանի սիրուն շինութիւնների, բազմաթիւ զանգակատների[1] եւ մեծ սիւների պատճառով, բայց ներսից բոլորովին անապատ է, եւ բոլոր պարիսպները քանդուած են։ Առաջ, նա Պարսկաստանի ամենամեծ եւ գեղեցիկ քաղաքներից մին էր եւ կէս մղոնից աւելի երկայնութիւն ու-

[1] Արդեօք Օլէարիոսի ժամանակ դեռ կանգուն էին եկեղեցիների զանգակատները, թէ՝ զանգակատուն ասելով հասկանում է մինարէները. չգիտենք, հատնանան է վերջին ենթադրութիւնը։ Տան. Թարգմ.

Ա 39184

ներ, որուն նշաններն այսօր էլ տեսնուում են Համատանի ճանապարհի վրայ, քաղաքից կէս մղոն հեռու, մի աշտարակաւոր դռան վրայ, որ ըստ աւանդութեան քաղաքի դուռն է եղել։

"Սուլթան Մահմէդ Խօդաբէնդ, երբ միացրեց Հնդկաստանի, Ուզբէկների եւ Թիւրքիայի մի մասն իր պետութեան հետ, հին Տէքրէ-Գէրդ քաղաքի աւերակներով շինեց այդ քաղաքը, եւ դարձրեց իր կայսրութեան մայրաքաղաք։ Խօջա Բէշիդ, Պարսկաստանի թագաւորը, որին Յովսէփ Բարբարուս (Jos. Barbarousse) անուանում է Գէ-ղ-ղ, քանդեց Սուլթանիյէ քաղաքը բնակիչների ապստամբութեան պատճառով, իսկ Լենկթիմուր բոլորովին կործանեց. ամենազեղեցիկ շինութիւնն այժմ մի մզկիթ է, ուր գտնուում է Խօդաբէնդի գերեզմանը. նա երեքդռնանի է եւ ամենեւին անագից կամ պղնձից չէ շինուած, ինչպէս ասում է Թիզարբիւսը, այլ յղկուած պղպջաքից։ Ամբողջ քաղաքը այժմ 6000 բնակիչ ունի։"

Ընձամբ կամենալով ստուգել այդ իրողութիւնը, ես մի քանի անգամ Թէհրան գնալիս, երբ իջեւանել եմ Համանուն Սուլթանիյէ գիւղում, հետազօտութիւններ եմ կատարել. բազմաթիւ աւերակները, մինչեւ այսօր դեռ կանգուն մնացած, թէեւ կիսաւեր, հռչակաւոր "Սուլթանիյէ" մզկիթը, լայնատարած եւ ահագին շրջակայ դաշտերը, թուրք բնակիչների աւանդութիւնը՝ թէ յառաջ Սուլթանիյէի բնակիչները քրիստոնեայ են եղել, վերջապէս տեղացիների հաստատմամբ, աւերակների մէջ խաչքարներ եւ այլ քրիստոնէական նշաններ գտնելը — այդ բոլորը ցոյց է տալիս, որ Սուլթանիյէն՝ արդարեւ՝ մի ժամանակ հզօր

եւ մեծ քաղաք է եղել, որի բնակիչների մեծամասնութիւնը քրիստոնեաներ են եղել։ Այդ մասին մենք ունինք եւ մի աւելի հաստատուն պատմական փաստ։ Մեզ յայտնի է, որ 1330 թուին, Հռովմի Պապը, Սուլթանիյէ քաղաքի արքեպիսկոպոս Նշանակեց Յովհաննէս կոր անունով եկեղեցականին (Jean de Cor)։ Արքեպիսկոպոսական աթոռ հաստատելը մի քաղաքում՝ ցոյց է տալիս, որ քրիստոնեաների մեծ բազմութիւն պէտք է եղած լինէր այդտեղ. այդ քրիստոնեաները Հայ էին, որոնց մի մասը՝ երեւի Ունիտորների ջանքերով՝ ընդունեցին կաթուղիկէականութիւն [1]։

Երեւում է նոյնպէս, որ Հայեր եղել են նաեւ հռչակաւոր Ռէյ քաղաքում։ Ասիայի այդ ամենահռչակաւոր քաղաքի մասին, որի աւերակներն այսօր գտնւում են Թէհրանի մօտ, պատմագիրները հրաշալիք են պատմում։ Ինն երորդ դարում Ռէյ քաղաքն ունէր 96 թաղ, իւրաքանչիւր թաղ ունէր 46 փողոց, իւրաքանչիւր փողոց — 400 տուն եւ 10 մզկիթ կար 6400 դպրոց, 16.600 բաղնիք, 15.000 աշտարակ, 12.000 ջրաղաց, 17.000 ջրանցք, 13.000 քարվանսարայ։ Մեծ շահավաճառ քաղաք էր, եւ կոչւում էր "Տիեզերքի վաճառատունը,„ ուստի եւ անկասկած է՝ որ այդտեղ Հայերի մեծ բազմութիւն պէտք է լինէր։ Ռէյը կործանուեց ԺԱ. եւ ԺԲ. դարում Թաթարներից։

[1] Nouvelles Annales des Voyages par V. de S.-Martin. Paris 1852, Octobre.

Պարսկաստանի Հայերի ծագման, ուրեմն եւ ԺԷ. դարի մեծ գաղթականութեան պատմութիւնն աւանդել է մեզ յետագաներիս Առաքել Վարդապետ Դավրիժեցին, որ իր պատմութիւնը գրել է 55 տարի յետոյ։ — Առաքել Վարդապետը, բնիկ Դավրիժեցի՝ որի ցեղը մինչեւ այսօր եւս յարատեւում է այդ քաղաքում, Էջմիածնի միաբան էր։ Հայոց ՌՃ, այսինքն՝ փրկչական 1651 թուին՝ Փիլիպպոս Կաթուղիկոսի հրամանով սկսեց գրել իր ժամանակի անցքերի պատմութիւնն եւ չորս տարի աշխատելով՝ բաց թողեց, բայց այդ Կաթուղիկոսի մահից յետոյ, յաջորդ Յակոբ Հայրապետի ստիպմամբ դարձեալ ձեռնարկեց այդ գործին եւ աւարտեց իր պատմութիւնը 1662 թուին։

Այդ պատմութիւնն ամփոփում է իւր մէջ վեթնամեայ մի շրջան, այն է 1601ից մինչեւ 1662 թիւը։ Նրա մէջ հաղորդուած փաստերին մենք պէտք է ամենայն վստահութեամբ հաւատ ընծայենք, որովհետեւ ինքը պատմագիրը կամ ականատես է եղել կամ լսել է ականատեսներից։ Այդ պատմութիւնը տպուել է անմիջապէս իր վերջանալուց 7 տարի յետոյ, այն է 1669 թուին, Հոլանդայի Ամստերդամ քաղաքում՝ Ոսկան Վարդապետի ձեռքով։

Այդ մեծ գաղթականութիւնը սկսուեց 1586 թուին եւ կատարուեց 1604—1605 թուին, այսինքն մեզանից ճիշդ 294 տարի

առաջ։ Դարձեալ մի անգամ եւս թշուառ հայ ազգը կորստեան անդնդին մօտեցաւ, դարձեալ մի անգամ եւս հայ ազգը զգաց, որ իր գլխին ծաներացել է նախախնամութեան աջն եւ հասել է իր վերջին օրը. կարծես երկնային եւ երկրային բոլոր ոյժերը — սով, ժանտախտ, հուր, սուր եւ թուր միաբանել էին՝ այդ բազմաչարչար նահատակ ժողովուրդը ջնջելու եւ բառնալու երկրիս երեսից...։ Բայց յառաջ մեզ հարկաւոր է մի որոշ գաղափար տալ այն ժամանակուայ քաղաքական դրութեան եւ Հայաստանի վիճակի մասին, որպէս զի գաղթականութեան պատճառն ակներեւ լինի։

Բ.

1453 թուին մայիսի 29ին մի սարսափելի եւ չարագուշակ լուր դղրդեց համայն Եւրոպան։ Սուլթան Մէհէմմէտ առել էր Բիւզանդեան կայսրութեան մայրաքաղաք՝ հռչակաւոր Կ. Պոլիսը։ Արեւելեան անբարոյականացած, կնատ եւ քծնող կայսրութիւնը զառամելով, վատնելով իր ոյժը շռայլութեան, ղեղխութեան եւ անառակ կեանքի մէջ, չկարողացաւ դիմադրել Օսմանեան ցեղի վայրագ բայց թարմ ոյժին. նա ընկաւ, տապալուեց եւ նրա աւերակների վրայ մահմետական աշխարհն իր յաղթանակի դրօշը կանգնեցրեց։ Այդ օրից Փոքր Ասիան եւ Հայաստանը, որ միշտ իր աշխարհագրական դիրքի պատճառով զանազան ազգերի պատերազմի եւ սրշաւանքի թատերաբեմն է հանդիսացել, այլ

եւս մի բոպէ հանգստութիւն չդտաւ։ Դեռ նոր էր առել Սուլթան Մէհէմմէտ Գ. Պոլիսը՝ եւ ահա Հայաստանի սահմաններում գլուխ բարձրացրին երկու հզօր ամիրաներ։ Առաջինը կոչւում էր Ջհանշահ, որ տիրապետել էր ամբողջ Պարսկահայքին — Ատրպատական աշխարհին եւ Կորճէքին, Սիւնեաց, Արցախի, Արարատի եւ Վասպուրականի երկրներին, եւ իր համար մայրաքաղաք էր շինել Թավրէզ քաղաքը. իսկ իր որդի Հասան-Ալուն փոխանորդ էր կարգել Նախիջեւանի քաղաքում։ Հետզհետէ ընդարձակելով իրիշխանութիւնը, Ջհանշահ արշաւեց եւ Պարսկաստան կամ Իրաք-Աճեմը, առաւ Շիրազ, Քիրման եւ վերջապէս Սպահան մայրաքաղաքը, անցաւ Խորասան, գրաւեց մինչեւ անգամ Սամարգանդ, նուաճեց այնտեղի Թաթարներին կամ Թուրքմէններին եւ իրեն Պարսկաստանի թագաւոր հռչակելով, դարձաւ իր մայրաքաղաքը Թավրէզ։ Երկրորդ ամիրան էր Ջհանգիր սուլթան, որ տիրում էր Միջագետի եւ Փոքր Ասիայի վրայ եւ նստում էր Դիարբէքիր քաղաքում։ Այսպիսով ամբողջ Հայաստանը գտնւում էր այդ երկու ամիրաների կամ Օսմանցիների եւ Պարսից բռնակալութեան ներքոյ. եւ որովհետեւ այդ երկու պետութիւններն անդադար միմեանց հետ կռւում էին եւ փոփոխակի յաղթող կամ յաղթեալ հանդիսանում, ուստի եւ թշուառ Հայաստանը մերթ ընկնում էր Օսմանցիների, մերթ Պարսից ձեռքն եւ շարունակ հեծում ու տառապում էր, երկու կը-

բակի մէջ մնալով։ Ջահան Շահի մահից յետոյ, որ եղաւ 1465 թուին, նրա որդի՝ Հայոց մարզպան Հասան Ալու եւ Ջհանգիր ամիրայի որդի՝ Ուզուն Հասանի մէջ պատերազմ ծագեց. եւ այս վերջինը յաղթելով առաւ Թավրէզ եւ տիրեց բոլոր Ատրպատականի, ինչպէս եւ Պարսկաստանի վրայ։ Այնուհետեւ Պարսից եւ Օսմանցւոց մէջ շարունակ կռիւ էր լինում, փոփոխակի յաջողութեամբ. եւ Ատրպատականն ու Հայաստանը զանազան անձանց եւ իշխանների իշխանութեան ներքոյ է ընկնում, մինչեւ որ, վերջապէս, 1491 թուին, Արդաբիլ քաղաքի Շէյխ՝ Հայտարի որդի Խմայիլը զօրանալով, Թագաւորեց Պարսից վրայ, գրաւեց Թավրէզ եւ Ատրպատականն ու Ատրատեան աշխարհը, եւ 1500 թուին իր աթոռը հաստատելով Ասպահան քաղաքում, կոչուեց Շահ Խմայիլ Սէֆէվի, եւ այսպէս Սէֆէվի հարստութեան հաստատողն եղաւ։ Այն օրից սկսուեց Ղզլբաշների տիրապետութիւնը։

Շահ Խմայէլի դէմ պատերազմ հրատարակեց Օսմանեան մեծ սուլթան Սէլիմն 1513 թուին. եւ յաղթելով նրան՝ յետ առաւ Թավրէզ քաղաքն եւ այդտեղի բոլոր արուեստագէտներին, մեծ մասամբ Հայերից, 3000 հայ ընտանիք, քաշեցրեց Կ. Պոլիս։ Այդ թուականից սկսած մինչեւ 1586 թիւը թշուառ Հայաստանն եւ երկիցս թշուառ հայ ազգը մի օր, մի ժամ, մի բոպէ հանգստութիւն չունեցաւ Պարսից եւ Օսմանցւոց սրերի եւ կոտորածի երեսից։

Սուլթան Սէլիմ տիրեց Հայաստանի մեծ մասի վրայ, սկսած Թավրէզ քաղաքից մինչեւ Կարին, բայց Շահ Իսմայէլի որդի Շահ Թահմազը 1550 թուին յետ առաւ, գրաւեց Վան քաղաքը, ասպատակեց Արարատեան աշխարհը, հասաւ մինչեւ Բարձր Հայք, աւերեց Էրզրումի երկիրը մինչեւ Երզնկայ, եւ շատ Հայեր ի գերութիւն վարեց։ Բոլոր Հայաստանը հեծում էր այդ բռնակալի տիրապետութեան ներքոյ։ Նրա մահից յետոյ Օսմանցւոց սուլթան Մուրատը մեծ զօրքով խաղաց դարձեալ Հայաստան, յետ կորզեց բոլոր երկիրները, ինչպէս եւ Երեւան, Նախիջեւան, Թավրէզ. եւ այդ վերջին տեղերից 60 հազար Հայ եւ Պարսիկ գերի վարեց Յունաստանի կողմերը։ Աւելի սարսափելի եւ աղէտալի եղաւ 1579ի պատերազմը, երբ Օսման փաշա զօրապետն ասպատակեց Աղուանից երկիրը՝ Շիրուան, առաւ Շամախի, Գանձակ, Պարտաւ, Զարաբերդ, Խաչէն, Վարանդա, Դիզակ գաւառները եւ բազմաթիւ Հայերին սրով խողխողեց։ Պարսից Շահը՝ Խուդաբէնդ չդիմանալով՝ փախաւ Խորասան եւ երբ թագաւորեց 1586 թուին նրա որդի Աբասը, կամ Շահաբբաս Առաջինը, աճապարեց Օսմանցւոց Սուլթան Մուրատի հետ հաշտութիւն անել, պատանդ տալով։ Այդպիսով երկու տէրութիւնների մէջ խաղաղութիւն հաստատուեց, գոնէ առ ժամանակ, եւ այդ հաշտութեան զօրութեամբ, բոլոր գրաւուած երկիրները մնացին Օսմանցւոց ձեռքում, այնպէս որ Հայաստան

համարեա ամբողջապէս ընկաւ Օսմանցւոց տիրապետութեան ներքոյ։

Այդ անդադար ասպատակութիւնները, պատերազմները սարսափելի կերպով աւերեցին երկիրը, եւ թափած արեան հեղեղներն ապականեցին նրան։ Աղուանից, Արցախի, Փայտակարանի եւ Ատրպատականի գաւառներում՝ մահ տարաժամ ընկաւ 1579 թուին, որին յաջորդեց մի սարսափելի սով։ Այդ աղէտների երեսից բնակիչների մեծ մասը կոտորուեց։ Ահա ինչ է գրում ականատես Յովհան Ծարեցի կոչուած Վարդապետը։

"Վայ պատժապարտիս, զի մահուամբ եւ սրով եւ սովու կոտորեալ մարդկան, մարմինք նոցա անյագ գազանաց կերակուր եղեն. եւ շունք վայրենացեալք արտաքոյ շինի կենդանի մարդիկ եւս սրային, եւ դայլք ի ճանապարհի եւ ի շինամիջի, ի տունս մտեալ զմարդիկ ի ննջելն արտաքս քարշէին եւ ուտէին. եւ ի սովորիլ նոցա ի նոյն ի մէջ խաշանցն մտեալ, զխաշնարածսն ուտէին, իսկ զխաշանցն ինչ ոչ մեղանչէին։ Իսկ զմի մահուամբ եւ սովու եւ սրով մեռելոցն եւ գերելոց բնաւ ոչ կամիմ ընդ թիւ բերել եւ ընդ գրով արկանել, բայց թէ զիմ դքարտէզս եւ զմեղան առաջի ձեր արկիցս բան դպրացս Դաւթի, որ առ Երուսաղէմաւ։"

Սովն այնքան սաստկացաւ որ մարդիկ՝ ծածուկ սպանում էին երեխաներին եւ նոցա միսը խաշելով լափում էին։

Մի ուրիշ ականատես պատմագիր — Թադէոս վարդապետ Սերաստացին հետեւեալ կերպով է նկարագրում Ղզլբաշների գործած աւերումները։

"Ի լանալ Հաղարամեան թուականիս մերոյ շարժեցաւ ի վերայ աշխարհիս Հայոց ազգ Ղզլբաշից, մանրել եւ մաշել զմեացորդս Արմենաց։ Ազէաք գործոց վնասու սոցա առաւել են քան զանկիթամուրայն, զոր կարծեմ թէ չիք տեսեալ ուրուք ի հողածնացս։ Եւ զի հանապազ զամն ողջոյն յաւեր քաղաքաց եւ ի կողոպուտ բնչից եւ անուամբ հարկաց ի յետին անանկութիւն ածին զազգ մեր։ Զմեռաւորս իւրեանց, զոր Շահն կոչեն, առաւել քան զասասուած պաշտեն. այլ սա մեզ Փարաւոն եղեւ, եւ առաւել քան զՍենեքերիմ եւ զՆաբուգոդոնոսոր, ոչ գիւղ եթող՝ եւ ոչ քաղաք, զոր ոչ աղարտեաց. եր՝ զի հրով տուչորէր, եւ եր՝ զի քանդեալ ի հիմն հասուցանէր զշինուածս ամրոցաց եւ աւանից, եւս առաւել զեկեղեցիս եւ զվանորայս, սպան եւ զբազումս յերիցանց եւ ի կրօնաւորաց։"

Ահա այդ դրութեան մէջ էր Հայաստանը եւ Պարսկաստանի քաղաքական վիճակն այդպէս էր դասաւորուած, երբ թագաւորեց Շահ-Աբբաս Մեծը։ Այդ ժամանակ դեռ բուն Պարսկաստանում Հայ չկար։ Հայերի մեծ մասը ամենահին ժամանակներից բնակւում էր Ատրպատականի աշխարհում, որի մայրաքաղաքի՝ Թաւրիզի մէջ 7000 տուն Հայ կար։ Հայերը այդ քաղաքում 12 անուանի եկեղեցիներ ունէին. եւ այսօրուայ հռչակաւոր Հազարթ Սկարի մղկիթն ուրիշ բան չէ, եթէ ոչ Հայոց Ս. Յովհաննէս մայր եկեղեցին, որի սիւները դեռ կանգուն են, ինչպէս եւ սեղանը, որ Պարսիկները ծածկել են։ Եկեղեցիների մի քանիսի տեղերը դեռ յայտնի են, օրինակ

Ս. Աստուածածնի մատուռը, որ այժմ քաղաքից դուրս մի այգու մէջ է. Ս. Խաչի եկեղեցին, որի տեղը այսօր Ամ-Մէյդանի է կոչւում, այսինքն ձիերի վաճառանոց։ Թավրիզից յետոյ ամբողջ Ատրպատական գաւառը լի էր Հայերով, Հայ եկեղեցիներով, վանքերով. անուանի էին Սալմաստ, Մարաղա, Խոյ, Երդաբիլ, Որմի, Դուխարզան քաղաքները եւայլն։ Սալմաստի եպիսկոպոսութիւնը կաթուղիկոսութեան հաւասար դիրք ունէր։

Արարատեան աշխարհում, ի բաց առեալ Նախիջեւանը, Շամախին եւ Երեւանը, անուանի էր Ջուղայ աւանը կամ գիւղաքաղաքը, կամ ըստ օտար պատմագրների՝ Ջուլֆայ, Ջուլֆա, Երասխ գետի հիւսիսակողմում, Գողթան գաւառում։ Ջուղայի ծագումը շատ հին է. Մովսէս Խորենացի (Գիրք Ա.) իր պատմութեան մէջ յիշում է թէ Տիգրան Երուանդեան Հայոց թագաւորը 565 տարի Քրիստոսից առաջ, նա՝ որ յաղթեց Աժդահակին եւ ժամանակակից էր Կիւրոսին, գերի անելով Աժդահակի տիկնոջ Անուշին, կանանց, պատանիներին եւ 10.000 հոգի, բերաւ բնակեցրեց Գողթան գաւառում եղած գաստակերտների եւ աւանների մէջ, որոց թւում յիշում է եւ Ջուղայ — "աւան առ եզերբ գետոյն Երասխայ։" (Խորեն. պատմ. Հայոց. Վենետ. 1827, էջ 123։)

Երկար ժամանակ Ջուղայի մասին պատմութեան մէջ ոչ մի ձայն չէ լսւում թէ նա ո՞ր եւ է դեր խաղացած լինի։ Երեւի մինչեւ ԺԵ

եւ Ժ.Զ. դարը նա մնացել է իբրեւ մի հասարակ գիւղաքաղաք, բայց այդ ժամանակից յետոյ սկսում է հռչակուել իբրեւ վաճառականական անուանի քաղաք եւ նրա բնակիչներն իբրեւ հարուստ եւ ժիր վաճառականներ "խօջա" մականունով։ Ցեսենենք ինչ տեսարան էր ներկայացնում նա։ Ջուրն զետեղուած էր, ինչպէս եւ այսօր կարելի է տեսնել աւերակներից, մի խոր ձորակի մէջ, կարմիր ժայռերի մի սարի գառիվայրի վրայ. նրա աջ կողմով, ամբողջ երկարութեամբը հոսում է Երասխ գետը. սարի ժայռերը, որոնցով նա շրջապատուած է համարեա երեք կողմից՝ քաղաքի երկու ծայրերումն եւս այնքան մօտեցած են Երասխին, որ կազմում են նեղ անցք եւ այդ անցքերի տեղը շինուած են մուտքերը, որոնք նոյն իսկ բնութիւնից դժուարանցանելի եւ ամուր լինելով՝ պահպանում էին բերդերով եւ դարպասներով։ Գլխաւոր մուտքը լինում էր արեւելեան դարպասով, երբ փոքր ինչ անցնում էին Երասխը կամրջով, առաջ այն հռչակաւոր հոյակապ պատմական կամրջով, որի մասին փոքր ինչ յետոյ կը խօսենք, իսկ յետոյ, այն է ԺԵ. եւ Ժ.Զ. դարերում, շարժական կամրջով։ Այդ շարժական կամուրջն հետեւեալ կերպով էր շինուած։ Երասխի երկու ափերում կանգնած էին երկու մեծ շինութիւններ, որոնք քարվանսարայներ էին վաճառականների համար։ Պարսկաստանից, Հնդկաստանից եկող կարաւաններն գալիս կանգ էին առնում գետի միւս ափում,

քարվանսարայում, որի մէջ կային շատ օթեւանններ եւ շտեմարաններ. ամբողջ գետի վրայով, այն է գետի լայնութեամբ, երկու քարվանսարայների մէջտեղ ձգուած էր մի երկաթէ հաստ շղթայ, որի միջոցով բանում էր նաւակը, ինչպէս գործադրւում է եւ այժմ: Երկու հաստ սիւներից, որ շինուած էին քարվանսարայների առաջ, կապուած էր այդ շղթան, որ ամէն երեկոյ կողպւում էր բանալիով եւ բանալին յանձնւում քաղաքապետին. այս զգուշութիւնը նրա համար էր, որ ոչ ոք, կամ անծանօթ մարդ չկարողանայ յանկարծ կամ գիշերով մտնել քաղաքը: Այդ կերպով եկաւորներն եւ ապրանքը տեղափոխւում էին ջուղայի քարվանսարայը, որտեղից ուղարկւում էին Պարսատան, Եւրոպա, Ռուսաստան եւայլն: Քարվանսարայների եւ սիւների աւերակներն դեռ կանգուն են այսօր: Այդպէս ամէն կողմից լաւ պատսպարուած էր ջուղան. գլխաւոր դարպասի բերդի գլխին միշտ հսկում էր մի պահապան, իմաց էր տալիս՝ եթէ որ եւ է վտանգ էր սպառնում քաղաքին. իւրաքանչիւր նոր եկող պէտք է պահապանին յայտնէր իր անունն եւ միայն քաղաքապետի թոյլտուութեամբ կարող էր մտնել:

Ահա մի կողմից Երասխ գետով, միւս կողմից ժայռերով եւ սարերով շրջապատուած մի այսպիսի փոքր զառիվայրի վրայ պարփակուած էր ջուղան. այդ տեղն այնքան փոքր եւ նեղ է, որ շատ դժուար է հաւատալ թէ այդտեղ 8000 տուն կար, ինչպէս գրում է.

տներն այնքան փոքր են, որ աւելի թռչունի բունների են նմանում, քան մարդկանց բնակարանի։ Ցները երկյարկանի, շատ պարզ եւ կոպիտ ճարտարապետութեամբ շինուած են ոչ միայն տափարակի վրայ, այլ նաեւ ժայռերի, սարի լանջերի վրայ. եկեղեցիները նոյնպէս շատ փոքր են, դռները այնքան փոքր, որ մտնելու համար պէտք է սողալ։ Մի քանի տներ շինուած են այնպիսի ժայռերի վրայ, որտեղ այծեամները միայն կարող են մագլցել։

Շարդէն ասպետը, որ այցելեց Ջուլֆան 1673 թ. Ապրիլի 13ին, ուրեմն Ջուղայի աւերուելուց 68 տարի յետոյ՝ իր պատմութեան Բ. Հատորին մէջ (էջ 303, 1811) այսպէս է խօսում։

"Երասխի եզերում գտնուում է Հին-Ջուլֆան (որին աշխարհագիր Հաճի Խալֆան, կոչուած եւս Քեաթիբ Չելէբի՝ իր "Ջհան-Նումայ, գրքին մէջ՝ Ջուլֆաթ անունն է տալիս,) աւերեալ քաղաք, որ մի քանի հեղինակներ կարծում են լինել այն, որ հներն կոչում էին Արրիամէն։ Իրաւունք ունին Հին կոչելու, օրվհետեւ բոլորովին աւերեալ եւ կործանեալ է։ Այդտեղ այլեւս ոչինչ ճանաչել չէ կարելի, բաց ի իր ունեցած մեծութիւնը. նա շինուած էր մի լերան գագաթի վրայ, դեռի երկարութեամբ եւ նրա եզերին։ Մուտքերը, որոնք բնականաբար դժուարանցանելի եւ ամուր են, պահպանուած էին շատ բերդերով։ Քաղաքն ունէր 4000 տուն, ինչպէս ասում են Հայերը, սակայն աւերակներին նայելով կէսից աւելի չպէտք է ունենար. տների մեծ մասն ծակեր եւ գետնափորներ են, սարերի մէջ այրեր, աւելի յարմար հօտերի քան թէ մարդկանց բնակարան լինելու։ Ես չեմ

կարծում որ աշխարհի մէջ Հին-Ջուղայից աւելի անպտուղ եւ զզուելի տեղ լինի. այնտեղ չկայ ոչ խոտ, ոչ ծառ։ Ճշմարիտ է, շրջականերում աւելի բարեբեր եւ արգասաւոր վայրեր կան, բայց դարձեալ ճշմարիտ է, որ նրանից աւելի չոր եւ քարոտ քաղաքի տեղ չէ կարող լինել։ Դրա փոխարէն տեսքը գեղեցիկ է, նմանելով երկար ամիսթէատրոնի։ Այժմ միայն 30 ընտանիք կայ, բոլորն էլ հայ։ Շահաբաս Մեծն աւերեց Ջուղան եւ ամէն ինչ որ արուեստն նպաստել էր նրան ամայացնելու։„

Ջուղան կառավարում էր տնային կամ նահապետական կառավարութեամբ, այն է նահապետների կամ իշխանների ժողովով, որին նախագահում էր քաղաքագլուխը։ Շահաբասի աւերման ժամանակ Ջուղայի քաղաքագլուխն էր անուանի խօջա խաչիկը, որի գերեզմանը գտնւում է Ջուղայի գերեզմանատան մէջ, այսպիսի տապանաքարով. "սուրբ խաչս բարեխօս է առ Քրիստոս մեծ եւ անուանի քաղաքապետ խաւջայ խաչիկին որ ի Ռ եւ Ծ Գ թվականիս հանգեաւ ի Քրիստոս խաւջայ խաչիկին եւ կողակցին Մարիամի։„ Սրանից երեւում է, որ խօջա խաչիկն վախճանուել է հայկական 1053 թ. կամ փրկչական 1604 թ. ուրեմն Ջուղայի գաղթականութիւնից մի քիչ առաջ։

Ջուղայի արեւմտեան ծայրում ընկած է նրա հռչակաւոր գերեզմանատունը, որի կանգուն խաչքարերը այնպէս ուղիղ գծի վրայ դասաւորուած են, որ հեռուից զօրքի գունդ ես կարծում։ Իւրաքանչիւր խաչքարի մեծ մասը գետ անմաշ մնում է, ահա ինչ է գրում Քաջ-

բերուն։ "տապանաքարերի նկարները գեղեցկաքանդակ խաչեր են, իսկ երկրորդականը պատկերներ... արձանագրութիւնները վերաբերում են 1031, 1042 եւ այլ հայկական թուականներին։ Բայց կան, ասում են 7—8 երորդ դարու տապանաքարեր։ Առաջին թուականները, ուրեմն արձանագրուած են նախ քան Շահաբասի գալուստը, որ արշաւեց Արարատեան դաշտի վրայ 1604 փրկչական թուականին...։" (Փորձ, 1877, Nr. I.)

Սակայն մենք, որ այցելեցինք Ջուղան 1884 թուին՝ գտանք արձանագրութիւններ եւ ՋՂԹ, ՋՀԷ, ՋՀԲ (999, 977, 972) կամ 1550, 1528, 1523 թուականների։

Ջուղայի բնակիչներն բոլորն էլ Հայ-Լուսաւորչական էին, բայց կային եւ կաթուղիկեայ Հայեր. դեռ այսօր կանգուն է մի փոքր կաթուղիկեայ եկեղեցի եւ այժմեան Ջուղայի բնակիչներն աւանդաբար ասում են, որ օտար կրօնաւորներ եւս բնակւում են եղել Ջուղայում եւ եղել են նոյնպէս օտարազգիներ, որովհետեւ գերեզմանատան մէջ մեզ պատահեց կարդալ եւ մի անգղիացի Լորդի տապանագիրը։

Հոչակաւոր Ամենափրկիչ եկեղեցին քաղաքից բաւականին հեռու է, մի ժայռի գլխին շինած։

Ջուղայից ոչ հեռի Երասխի վրայ երեւում են դեռ այն հոյակապ կամրջի մնացորդ աւերակները, որ հնում հոչակաւոր էր եւ կապում էր Արեւելքն Արեւմուտքի հետ։ Այդ կամրջի

վրայով կատարուում էր աշխարհի ահագին վաճառականութիւնը։ Նրա սկիզբն եւ հիմնարկութիւնը շատ հին է. օրինակ Խսիդոր Սեւիլիոսը՝ Աղեքսանդր Մակեդոնացուն է հիմնարկու համարում, ասելով որ Օգոստոս կայսեր ժամանակ վերանորոգուեց այդ կամուրջը։ Նա այնքան հռչակաւոր էր Հռովմայեցւոց մտ, որ Օգոստոսի ժամանակից Վիրգիլիոս բանաստեղծն իւր Ենէականի մէջ յիշում է ասելով. indomitique Dahae.

Et pontem indignatus Araxes, որպիսի լատինական պարբերութիւնը՝ Գեր. Եղուարդ Հիւրմիւզեան այսպէս է թարգմանել։

"Մեղմիկ ալիքն անդ Եփրատայ հոսէին,
Անդ հեռագոյնն ազգ ի բնակիչքս Մորին,
Եւ երկեղիւրն Հռենոս եւ Տայք անոր կուռք.
Եւ Երասխայն ի կամրջայ բմբոստ հուռք։
(Վիրգիլ. Ենէական, եր. 401—402)։"

Նոյնպէս Ստացիուսը յիշում է այս կամրջի մասին այսպէս՝ "et patiens lati jam pontes Araxes" "եւ լայնարձակ կամրջից չարչարուող Երասխը"։

Այս կամրջի մասին յիշում է եւ Ղազար Փարպեցին, ասելով.

"Զարմիհր Հազարաւուխտ՝ ոսոսիկ եւ բաղում այրընտիր զօրաք դիմեալ անցանէր ստիպով ընդ կամուրջ գետոյն Երասխայ, եւ ի գիւղաքաղաքին որ կոչի Արտաշատ բանակէր այն օր." (Ղազ. Փարպ. Վենետիկ 1793, էջ 250)։

Ինչպէս երեւում է այդ հռչակաւոր կամուրջը գոյութիւն է ունեցել մինչեւ ԺԴ. դարը,

վասն զի Լենկթիմուրի արշաւանքի ժամանակ նա դեռ կանգուն էր, եւ նա անցաւ իր զօրքով Նրա վրայով 1396 թուին, ու պաշարելով Երինջակ բերդն, անցաւ Վրաստան։ Շէրէֆ-Էդդինը, Լենկթիմուրի արշաւանքի պատմիչը, աւանդել է մեզ այդ կամրջի նկարագրութիւնը։

"Կամուրջը հիմնած է տաշած ժայռի վրայ անխախտ ամրութեամբ, վերեւը զարմանալի հարթ եւ քարերը միացած են այնպէս կանոնաւոր եւ ամուր կերպով, որ ամենահնարագէտ ճարտարապետը պէտք է զարմանայ։ Կամարներն այնքան բարձր եւ երկայն են, որ մէնի հիմքերի որուքը 60, միւսինը 50 պարսկական բազուկ է։ Կամարի սաւորին մասումը շինուած է քարվանասայ, իսկ երկու ծայրումը գրուներ՝ զարմանալի դեղեցկութեամբ"։

Այս պատմիչը կամրջին տալիս է "Եօղդայի կամուրջ" անունը։ Ինչպէս երեւում է այդ խօսքերից, կամուրջն ունեցել է երկու աշք կամ կամար. այս ապացուցանւում է նոյնպէս եւ նոր պատմագիր՝ արքայազն Բէհմէն-Միրզայի հետեւեալ վկայութեամբ։

"Էմիր Թէյմուր Կարգանը (Լենկթիմուր) 789 թուին հիջրէի (1387/8 փրկչ.) զօրքը քշելով եկաւ Աարպատական եւ դիմեց դէպի Նախիջեւանի կողմն եւ անցնելով Մարանդից եւ Դարա-Դիզ ձորից, հասաւ Աբազ գետին եւ նրա վրայի "Զէյա-ուլ-Մուլք" կոչուած կամրջից իջաւ. եւ այդ կամուրջ է, որ տաշած քարից է շինած, եւ երկու մեծ ու լայն թաղ (կամար) ունի, որ նրա լայնութիւնը 60 գեալ է. եւ որովհետեւ նա մօրուքն դրել էր առնել Երինջաղի (Երինջակ) բերդն[1], որի մէջ ամրա-

[1] Երինջակի ամրոցն կամ Երինջակաբերդը հռչակաւոր է մեր պատմութեան մէջ Ամրաս խոստովանող արքայի

ցած էր Սուլթան Ա.Հմատի զօրքը, ուստի հրամայեց իր զօրքին պաշարել այդ բերդը, եւ զօրքը թէեւ դրսի բերդին տիրացաւ ու աւերեց, բայց միջնաբերդը առնել չկարողացաւ. եւ որովհետեւ շատ անառիկ բերդ էր, ուստի անհնար եղաւ գրաւելն եւ Ամիր Թէյմուրն հրամայեց, որ սարդարներն հերթով պաշարեն բերդն մինչեւ առնուի. մինչեւ տասն տարի ամբողջ Ամնջաղի բերդն պաշարուեց եւ միայն 10 տարուց յետոյ, այն է 799 թ. հիջրէի, սովն ստիպեց բնակիչներին անձնատուր լինել։» (Հեռագիր պատմութիւն պարկերէն։)

Այս բոլորից ակնյայտնի է, որ գէթ մինչեւ 1400 թ. կամ մինչեւ ԺԵ. դար՝ կամուրջը ողջ է եղել եւ դրանից յետոյ կործանուել է։ Գաղթականութեան ժամանակ կամուրջն արդէն գոյութիւն չունէր եւ անցնում էին նաւակներով ու լաստերով, ինչպէս վերեւում բացայայտեցինք։ Ուռաքել Վարդապետ, որ ժամանակակից էր Շահաբաս Ա.ոյն, իր պատմութեան մէջ ոչ միայն չէ յիշում կամրջի քանդելն այդ թագաւորի ձեռքով. (ըստ ժողովրդական աւանդութեան՝ կամուրջն շինել է Խօջա Խաչիկն, իսկ կործանել է՝ Շահաբասը,) այլ մինչեւ անգամ կամրջի մասին ոչ մի խօսք չէ ասում, այլ ընդ հակառակն շատ բացայայտ կերպով յայտնում է, որ այդ միջոցին Երասխի վրայ ոչ մի կամուրջ չկար, քանի որ նկարագրում է Հայերի քաշած անօրինակ տառապանքը գետն անցնելիս

կոտամահ տանջանքներովն 914 թ.։ Հայաստանի ամենանառիկ ամրոցներից մին էր եւ ԺԲ. դարում Ռուսպէական ազգի ժառանգական կալուածն։ Այդտեղ յիշուած դրսի բերդն Երնջակ քաղաքն է, որ այժմ աւերակ է։

եւ շատերի հեղձամահ լինելը։ Նոյնպէս Եւրոպացի մի քանի ճանապարհորդներ, ինչպէս Տավէրնիէ 1655ին, Շարդէն 1673ին եւ Տուրնըֆոր 1700ին, նաւակներով անցան Երասխն եւ ոչ մի կամուրջ չտեսան։

Ահա ինչ է ասում Շարդէն։

"Երասխ այն հռչակաւոր գետն է, որ բաժանում է Հայաստանը Մեդիայից (Ադրպատականից)։ Այդ գետը մեծ է եւ շատ արագ։ Նա ուռչում է իր հոսանքի ընթացքում շատ փոքր վտակներով եւ հեղեղներով։ Զանազան ժամանակ նրա վրայ կամուրջներ են շինել ջուղայից վերեւ ու ուրիշ տեղեր, բայց որքան ամուր եւ հաստ են եղել, ինչպէս երեւում է դեռ մնացած կամարներից, չեն կարողացել դիմադրել գետի հոսանքին։ Այնքան կատաղի էր, երբ մտակայ տարերի ձիւնի հալուելով մեծանում էր, որ ոչ մի թուրք, ոչ մի շինութիւն չէր մնում։ Մենք անցանք Երասխը մի մեծ նաւակով, որ 20 ձիի եւ 30 մարդի անցնելու համար էր շինուած։ Զմեռը, երբ ջուրը քիչ է, ուղտերով են անցնում։ Ծանծաղուտն ջուլֆից կէս մղոն է, մի տեղ, որ շատ լայն է, ուստի եւ հանդարտ է հոսում"։

Այսպէս ուրեմն Հին-Ջուղան՝ թէեւ շինուած անապատ տեղում, զուրկ բուսականութիւնից եւ աւազուտ՝ մի գեղեցիկ տեղ չէր կարող լինել, բայց ԺԶ. եւ ԺԷ. դարում նա մի հռչակեալ եւ ծաղկեալ վաճառականական քաղաք էր, ինչպէս վկայում են եւ Եւրոպացի շատ ճանապարհորդներ — Տավէրնիէ[1], Շարդէն[2],

---

1 Tavernier, Six voyages, 1. c. I. ed. 1718.

2 Chardin, Voy. en Perse, Amsterdam 1735.

Տուրնֆոր[1], Ուզլէյ[2]. Հանվայ[3] եւ այլք, թէեւ այսօր աղքատութեան եւ աւերման մի տխրալի պատկեր է ներկայացնում։ Ջուղան մի յարմար վաճառականական եւ փոխադրական կենդրոն էր Հնդկաստանի, Միջին Ասիայի եւ Պարսկաստանի հետ մի կողմից, իսկ միւս կողմից Ռուսաստանի, Եւրոպայի հետ։ Այդ է պատճառն, որ Ջուղայի Հայերն միջնորդ էին Արեւելքի եւ Արեւմուտքի մէջ, ուստի եւ մեծ հարստութիւններ էին դիզում։ Նոցա փարթամութեան եւ ճոխութեան ապացոյց կարող է լինել մասամբ եւ այն հանգամանքը, որ գաղթելով Պարսկաստան եւ հաստատուելով Նոր-Ջուղայում՝ դարձեալ նոյն փարթամութեան եւ շքեղութեան մէջ լող էին տալիս նրանք։ Երեւում է, որ արուեստներն եւս բաւական ծաղկած էին Ջուղայում. Այսպէս է, որ երբ Շահաբբաս այցելեց Ջուղայ, Հայերը զարմանալի շքեղութեամբ ընդունեցին Նրան եւ Ջուղայ մտնելուց՝ աղ ու հացի հետ միասին մի ոսկէ սկուտեղի մէջ՝ մի ողկոյզ խաղող ներկայացրին։ Շահաբբաս կարծելով որ բնական խաղող է, ձեռքը մեկնեց, որ վեր առնի եւ ուտի, բայց զարմանքով տեսաւ, որ ոսկուց շինուած էր արուեստական կերպով, բայց այնքան գեղեցիկ, որ բնականից անկարելի էր զա-

1 Tournefort, Relation d'un voyage du Levant Amsterdame, 1718.

2 W, Ouseley, Travaux, London 1823, 4 vol. III. p. 429—432.

3 S. Hanway, Reisen in Persien, Hambourg 1754, Th. II.

նազանել։ Ահագին խաչքարներ գերեզմանների վրայ, Ամենափրկիչ եկեղեցին հիանալի քանդակագործուած՝ նոյնպէս ապացոյց են արուեստների բարգաւաճման։ Իսկ Ջուղայեցւոց փարթամութեան իբրեւ ապացոյց, յիշենք այստեղ Առաքել Վարդապետի խօսքերը Շահաբբասի Ջուղայ գալու մասին։

"Եւ ի գալն յորժամ հասին ի գիւղաքաղաքն Ջուղայ, ամենայն բնակիչքն Ջուղայու բազում, եւ զանազան եւ պէսպէս յօրինուածովք պատրաստութիւնս հոգացեալ՝ ելին ընդ առաջ Շահին սրպէս վայելէ թագաւորի։ Իշխանք եւ ծերք եւ երիտասարդք, ի զարդ եւ ի զէնս ոսկեհուռն սրբատեսիլ հանդերձից պճնապարգեալք ընդ առաջ ընթանային։ Եւ նորաբողբոջ դեռահաս մանկունք ոսկի բաժակաւ զանուշահամ եւ զաղնիւ գինի մատուցանէին...։ Եւ զճանապարհս անցեալ արքայի զարդարեցին եւ յեղերք գետոյն մինչեւ ցապարանս խաջայ խաչիկին արկին փայանգազ առաթուր թագաւորին, պատուական եւ վայելուչ կումաշս (կերպաս), որոյ վերայ էանց թագաւորն եւ գնաց ի տուն խաջայ խաչիկին։ Եւ ի տան անգր. խաջայ խաչիկն զսակի սկուտեղ լցեալ ոսկւով եդեալ ի ձեռն որդւոյ իւրոյ մատոյց առաջի թագաւորին, նոյնպէս եւ ամենայն մեծամեծքն Ջուղայու մատուցին զընծայս, որպէս վայելէ թագաւորի, եւ զաւուրս երեք եկաց անդ շահն, եւ Ջուղայեցիք պատուեցին զնա համադամ կերակրօք եւ ծաղկեհամ գինեաւ։"[1]

Պէտք է յիշենք այստեղ, որ Երասխ գետից մինչեւ Ջուղայ՝ առ նուազն մի վերստ հեռաւորութիւն կը լինի։ Ջուղայեցիք անուանի էին բո-

[1] Առաք. Վարդ. էջ 24։

լոր Հայերի մէջ. ազգային գործերի վրայ նրանց իշխանները մեծ ազդեցութիւն ունէին. կաթուղիկոսներից բռնած մինչեւ հասարակ Հայերը նեղութեան ժամանակ ջուղայեցիներին էին ապաւինում: Իշխանների մէջ ալ անուանի էին խոջա Սաֆար, խոջա Խաչիկ, խոջա Դաղար եւ այլք. "Խոջա" բառն արեւելքում մինչեւ այժմ եւս տրւում է հարուստ եւ պատուաւոր ու հռչակ ունեցող վաճառականներին:

Տեսնենք այժմ ինչ դրութեան մէջ էր հայրապետական գահն այդ միջոցին: Ամբողջ հայ ազգի պատմական կեանքի մէջ չկայ այնքան վշտերի, տառապանքների եւ չարչարանքի մի տեսարան, որպիսին ցոյց է տալիս մեզ Էջմիածնի կաթուղիկոսական աթոռը: Ս. Գրիգորի յաջորդներից շատերն իրենց վարուց եւ առաքինութեան հետ կցել են համարեա միշտ եւ կենդանի նահատակների անունը:

Մեր պատմութեան ժամանակ Էջմիածինը բոլորովին անշքացած եւ թափուր դրութեան մէջ էր: Օսմանցւոց բդեշխների եւ հարկապահանջների լուծն այնքան անագորոյն եւ անտանելի էր դարձել, որ Դաւիթ Գ. կաթուղիկոսը չարաչար նեղուելով բդեշխների հարկապահանջութիւնից, որոնք պահանջում էին նրանից, իբրեւ ազգի գլխից, շատ գանձ, այլ եւս ճար չգտնելով, իրեն կաթուղիկոսակից ընտրեց 1593 թուին Մելքիսեթ Եպիսկոպոսին, որպէս զի երկուսը միասին ժողովարարութիւն անեն եւ աթոռի պարտքերը վճարեն: Հետզհետէ պարտքը դիզ-

ւում էր տոկոսների ծանրութիւնից, այնպէս որ հասաւ մինչեւ 50 հազար դահեկանի. երկրի մէջ փող չկար, թանգութիւնը, սովը պատել էր. կաթուղիկոսները հազիւ իրենց օրական ապրուստը կարողանում էին հայթայթել. հարկապահանջները դադար չէին տալիս, նեղում էին. այն ժամանակ թշուառ կաթուղիկոսները սկսեցին թափառել գիւղից գիւղ, քաղաքից քաղաք, թագնւում էին, մի տեղ չէին կարողանում մի գիշեր մնալ, այլ կարծես իբրեւ փախստական գողեր հալածւում էին անհնայաբար։ Ուրիշ ճար չգտնելով, կաթուղիկոսները սկսեցին եկեղեցիների սրբութիւնները զանազան վաճառականների եւ մահմետականների մատ գրաւ դնել եւ տոկոսով փող վեր առնել։ Մինչեւ անգամ Ս. Աբիստակէս Հայրապետի աջը, Ս. Ստեփանոսի աջը, Էջմիածնի տաճարի անօթներն, եւայլն։ Երբ այդ եւս չօգնեց, երկու կաթուղիկոսները խորհեցին գրել Ամդայ քաղաքի առաջնորդ անուանի Սրապիոն վարդապետին, որ մեծատան որդի էր, որ գայ աթոռը պարտքից ազատէ եւ կաթուղիկոսական պաշտօնն եւս ինքը վարէ։ 1602 թուին Սրապիոն եկաւ Ջուղայ, եւ Ջուղայեցիք խորհուրդ անելով տարին նրան Էջմիածին եւ ձեռնադրեցին կաթուղիկոս՝ Գրիգոր ԺԳ. անուամբ։ Շուտով մի եւ նոյն հալածանքներն եւ նեղութիւնները, որ կրում էին Դաւիթ եւ Մելքիսէթ կաթուղիկոսները, սկսեցին եւ Սրապիոն կաթուղիկոսի համար։ Թէ ինչ անտանելի չարչարանքներ կրեցին այդ երեք

թշուառ Հայրապետներն Օսմանցիների եւ մանաւանդ Պարսիկների ձեռքից, բաւական է այստեղ յիշել, որ 1605 թուին Սրապիոն կաթուղիկոսին Շահաբբասի հրամանով բռնեցին ջուղայում եւ մատնեցին տանջանքի, ամէն օր հրապարակի մէջ ոտերից կախելով եւ բրածեծ անելով։ Մի եւ նոյն Շահաբբասի հրամանով 1612 թուին դահիճները տարածելով Մելքիսէթ կաթուղիկոսին հրապարակի վրայ, չորս կողմից ցիցերի վրայ պրկելով, աքցանով կարեցին մարմնի միսն եւ դնելով բերանում, այնքան ծեծեցին, մինչեւ որ ստիպուեց ծամել իր սեպհական միսն եւ կուլ տալ։ Իսկ թէ ինչ սարսափելի վիճակի մէջ էր ընկած Էջմիածնի աթոռը՝ այդ բոլորի պատճառով, ահա ինչ է պատմում Ղազարոս Վարդապետը։

«...Ստուգաբանակ սուրբ աթոռս ամենեւիմբ ունայնացեալ էր ի ստացուածոց՝ եւ կողոպտեալ ի զարդուց. ոչ գիրք, զի ոչ էր անդ ժամասացութիւն եւ կամ ընթերցումն. ոչ զգեստ եւ ոչ շուրջառ, զի ոչ էր ժամակարգութիւն եւ պատարագ. մինչ զի Քրիստոսի իշմն տեղն՝ եւ սուրբ սեղանն եւս ոչ ունէին գծածկոցն. ոչ կանթեղք, զի ոչ գոյր լոյսն, այլ հանապազ ի խաւարի. բայց այլազգի մահմետական ոմն վառէր գնրազ ձիթոյ եւ դնէր ի վերայ բեմին. եւ այն եւս երբեմն երբեմն վասն անցաւորից ճանապարհորդաց. զի տեսանելով զայն զողորմութիւն արասցեն նմա. ոչ խնկարկութիւն, զի ոչ գոյր բուրվառ եւ խունկ, եւ սալայարկ յատակ եկեղեցւոյն քանդքանդեալ, եղեալ որջ գեղանց եւ սողնոց, եւ մեծամեծք լուսամուտքն՝ զորս ունի՝ ամենն ի բաց կայր առանց վանդակի,

ուստի մտեալ ի ներքս թռչունք ընուին զեկեղեցին ծուտովք եւ այլոք գուեխոք. զոր յամենայն հարկիւ սրբէաք. եւ ընդ այդն ընդ առաւօտն ի լուսանալն ձայնք թռչնոյն խափանէր զձայն ժամասելոյն։„

Որպիսի՞ եղկելի դրութեան եւ նուաստութեան մէջ էր ընկել հայ ազգը, երբ Հայկական աթոռի մէջ ճրագ էր վառում մի մահմետական, իսկ ամենայն Հայոց կաթուղիկոսի մարմնի միսը աքցանով էին պոկում . . . :

Այս ընդհանուր տեսութիւնից յետոյ անցնենք գաղթականութեան պատմութեան։

Մենք տեսանք, որ ամբողջ Հայաստանն եւ Արարատեան գաւառը հեծում էին Օսմանցւոց իշխանութեան ներքոյ, այնպէս որ բնակիչներից շատերը հարստահարութիւնների երեսից սկսեցին ուրիշ աշխարհներ փախչել, իսկ Արցախի եւ Ուտիացւոց աշխարհից, Շամախու եւ Գանձակի կողմերից բազմաթիւ Հայեր գաղթեցին Պարսկաստան։ Այդ գաղթականների մէջ անուանի էին — Սարուխան բէկ եւ իր եղբայր Նազարը՝ Ոսկանապատ գիւղից. Ջալալ բէկ եւ իր եղբօրորդին՝ Խաչէնի կողմից. Մելիք Սուջումն՝ Դիզակից. Մելիք Փաշեկ՝ Քաջեղ գիւղից. Մելիք Բաբէն՝ Բրետիս գիւղից, Մելիք Հայկազն՝ Խանաձոխ գիւղից։ Դիզակի գաւառից էլ շորս գիւղ խմբովին գաղթեց։ Դրանք բոլորը գնացին Ասպահան քաղաքը, որտեղ Շահաբբաս բնակեցրեց Նրանց։ Այդ եղաւ 1586 թուին։ Երբ Սրապիոն կաթուղիկոս դարձաւ, Մելքիսեթ կաթուղիկոսն իր հետ առնելով մի քանի եպիսկոպոսներ,

վճռեց գնալ Սպահան եւ այնտեղի Հայերի օգ-
նութեամբ աթոռը պարտքից ազատելու եւ նո-
րից կաթուղիկոսանալու հնարքը գտնել։ 1603
թուին նա մտաւ Սպահան, որտեղ Շահաբբասը
մեծ պատուով ընդունեց։ Մելքիսէթ եւ Դաւիթ
կաթուղիկոսները գիտէին, որ Շահաբբասը՝
Սպահան գաղթած քրիստոնեաների խորհրդով
կամենում է գալ նուաճել Հայաստանն եւ ա-
զատել Օսմանցւոց ձեռքից, ուստի մտածեցին
օգնել Շահաբբասի այդ դիտաւորութիւնն իրա-
գործելու։ Նրանք կարծում էին, որ մաքրելով
երկիրն Օսմանցիներից, իրենք եւս կ՚ազատուին
պարտքից եւ դարձեալ կը վարեն կաթուղիկո-
սութիւնը։ Առաքել պատմագիրն անէծք է թա-
փում կաթուղիկոսների վրայ այդ երկնած խոր-
հրդի մասին. "Խորհեցան, ասէ, խորհուրդ եւ
ոչ Ցերամբ, ըստ գրեցելումն, ի կորուստ անձանց
իւրեանց. կործանումն եւ ի տապալումն աշխարհին
եւ ի ջնջումն ազգին իւրեանց"։ Ի հարկէ,
անարդարութիւն է՝ այդ կաթուղիկոսներին հա-
մարել միակ պատճառն ապագայ աղէտների, այլ
այս ստոյգ է, որ Մելքիսէթ կաթուղիկոսի Սպա-
հան գնալն եւ Շահաբբասին յորդորելը գալ
ազատել երկիրն Օսմանցւոց ձեռքից, արագացրեց
գործի լուծումը։ Շահաբբաս շարունակ մտա-
ծում էր քանդել Օսմանցւոց հետ արած իր հաշ-
տութիւնն եւ Ատրպատական ու Արարատեան
աշխարհն ազատել նրանց ձեռքից։ Այդ դի-
տաւորութիւնն իրագործելու համար նա յաջող
առթի էր սպասում. նրան հարկաւոր էր հաւ-

աստի լինել, որ երկրի բնակիչները ձեռնտու կը լինեն իրեն. այդ բանի մէջ համոզեցրին նրան Սպահան փախած քրիստոնեաներն եւ Մելքիսեթը: Եւ ճշմարիտ, թշուառ ժողովրդեան հոգին բերանն էր հասել Օսմանցւոց ձեռքից:

"Վասն զի յոյժ չարաչար նեղութեամբ նեղէին զնոսա ազգն Օսմանցւոց ծանր հարկապահանջութեամբ, եւ կեղեքմամբ զրկէին եւ կողոպտէին, եւ հաւատոց կուռէծութիւն առնէին, եւ այլ բազում տառապանօք չարչարէին, ոչ միայն զազգս Հայոց, այլ եւ զազգն Վրաց եւ զմահմետականաց, եւ վասն այնր նեղութեան գնացին առ թագաւորն Պարսից, զի թերեւս նովաւ զդիւրութիւն ինչ գտցեն զերծեալք ի ծառայութենէն Օսմանցւոց":

Ադպիսի դրութեան մէջ գտնուող ժողովուրդը՝ միջոց չունէր մոռանալու թէ արդեօք նրա ցաւերը չթեթեւանան Օսմանցւոց ձեռքից Պարսից ձեռքն ընկնելով:

Գաղթականութիւնն առաջ բերող պատճառների մասին՝ մենք մի քիչ յետոյ կը խօսենք, ինչպէս եւ Շահաբբասի անձնաւորութեան մասին. իսկ այժմ տեսնենք, թէ ինչպէս կատարուեց այդ գաղթականութիւնն եւ Արարատեան աշխարհի աւերումն:

Մենք ասացինք, որ թէ Արարատեան աշխարհն եւ թէ ամբողջ Արարատականը հեծում էին տիրողների լծի եւ սարսափելի կեղեքումների ներքոյ, եւ դեռ 1586 թուին բազմաթիւ Հայեր Աղուանից աշխարհից, Դիզակի կողմից 4 գիւղ, եւ Դաշտ կոչուած գաւառի (Գողթան, Ագուլիսի մօտ) ժողովուր-

դեան երեք մասն դաղթեցին Պարսկաստան եւ Շահաբբաս բնակեցրեց նրանց նոյն իսկ Սպահանի մէջ։ Նոյնպէս 1603 թուին Մելքիսէթ Կաթուղիկոսն իր երկու եպիսկոպոսների հետ գնաց Սպահան եւ յորդորեց Թագաւորին դալ ազատել Հայաստանն Օսմանցւոց ձեռքից։ Այդ եկաւոր Հայերի եւ Կաթուղիկոսի վկայութիւնը համոզեցին Շահաբբասին, որ իր դիտաւորութիւնը կարող է հեշտութեամբ իրագործել, որովհետեւ բնիկ ժողովուրդն իր կողմն պէտք է լինի։ Տեսնելով Հայերի՝ իր արշաւանքի մէջ իրան օգնելու այդ պատրաստակամութիւնը, Շահաբբաս մեծապէս ուրախացաւ եւ արդէն պատրաստւում էր զօրաժողով լինել, երբ մի նոր յաջող առիթ ներկայացաւ եւ ստիպեց նրան աճապարել։ Սալմաստի իշխան Քիւրտ Ղազի խանը, իր մեծաւոր թաւրիզու Ալի փաշայից նեղուելով, կամեցաւ Պարսից կողմն անցնել, ուստի մի դեսպան ուղարկեց Շահաբբասին, թելադրելով նրան դալ Հայաստան եւ հանել Օսմանցիներին, խոստանալով ըստ ամենայնի ձեռնտու լինել նրան։ Ղազի խան դեսպանն ուղարկելուց՝ յայտնի կերպով ապստամբեց Ալի Փաշայից։ Ստանալով այդ հրաւէրը, Շահաբբաս անմիջապէս ժողովեց իր նախարարներին, խաներին եւ բազմաթիւ զօրք, եւ շտապով չուեց դէպ ի Թաւրէզ։ Իր հետ առաւ Հայերից շատերին եւ Մելքիսէթ կաթուղիկոսին։ Մինչդեռ Օսմանցիները ոչինչ չգիտէին եւ Ալի Փաշան իր 20 հազար զօրքով գնացել

էր Սալմաստ ապստամբ Ղազի խանի վրայ, ահա յանկարծ Շահաբբաս մտաւ Թաւրէզ եւ տիրեց. այդտեղից նա շուտով խաղաց Ալի Փաշայի վրայ եւ երբ սա ամաստարեց դառնալ՝ երկու թշնամի բանակները պատահեցին միմեանց Սոֆիանի դաշտում եւ կռիւը սկսուեց։ Յաղթուեց Ալի Փաշան եւ անձնատուր եղաւ Շահաբբասին եւ այդպիսով վերջինս տիրացաւ Ատրպատականին եւ այդ աշխարհում գտնուած պանդուխտներին, առաւել Հայերից, քշել տուեց Պարսկաստան։ Այս եղաւ 1603 թուին։

Պատերազմի դաշտից ազատուած օսմանեան զօրքը փախաւ եւ գնաց Նախիջեւան, միացաւ այդտեղի զօրքի հետ. եւ որովհետեւ նրանք լաւ գիտէին, որ շուտով Նախիջեւանի գաւառն եւս կ'ընկնի Շահի ձեռքը, ուստի կամեցան կողոպտել շրջակայ գիւղերը, մանաւանդ Ջուղան եւ ապա փախչել Երեւան։

Այս լսելով գիւղացիներն եւ Ջուղայեցիները, իրանց ստացուածքը վեր առնելով՝ պատսպարուեցին ամուր տեղերում եւ թաք կեցան լեռների մէջ, մինչեւ Շահաբբասից ուղարկուած զօրքն երկրի պահպանութեան համար՝ հասաւ։ Տեսնելով Պարսկական զօրքի արշաւանքը, Թաւրիզից փախած օսմանեան բանակը կողոպտելով ձեռքն ընկածը, փախաւ գնաց ամրացաւ Երեւանի մէջ, իսկ Նախիջեւանինը մնաց այդ քաղաքի մէջ։ Մի քանի ժամանակից յետոյ, յաջորդ 1604 թուին, Շահաբբաս իր նախարար Զըլֆիզար խանին մեծ

զօրքով ուղարկեց Նախիջեւանի վրայ։ Նա պաշարեց քաղաքն եւ կարողացաւ շուտով համոզել բնակիչներին եւ օսմանեան զօրքին՝ առանց պատերազմի անձնատուր լինելու. հրատարակեց, որ ամէն մարդ կարող է խաղաղութեամբ ապրել կամ գնալ ուր կամենայ։ Այս յայտնութեան վրայ փախստականները դարձան իրանց տեղերը։ Շուտով ինքն Շահաբբաս թաւրիզից մեկնեց Նախիջեւան գալու, եւ ճանապարհին մտաւ Ջուղայ, ուր նրան փառաւոր ընդունելութիւն արին Հայերն եւ երեք օր հիւր մնաց այնտեղ. ապա գնաց Նախիջեւան եւ մի քանի օր այստեղ մնալուց յետոյ չուեց դէպ ի Երեւան, որի մէջ պատսպարուել էին Օսմանցիներն եւ պատրաստւում էին պատերազմել։ Պարսկական բանակը հաստատուեց Երեւանի մօտ եւ պաշարեց քաղաքը։ Որովհետեւ բոլոր շրջակայ երկիրն իր իշխանութեան ներքոյ էր գրաւել եւ այդ երկիրը շէն էր եւ ամէն բարիքներով լի, հետեւաբար եւ բանակն առատութեան մէջ ծփում էր, ուստի եւ Շահաբբաս շատ չէր հոգում շուտով քաղաքն առնել, այլ իր զօրքի մեծ մասը զօրապետներով ուղարկեց օսմանեան իշխանութեան ներքոյ գտնուած ուրիշ քաղաքների եւ աւանների վրայ։ Զօրքը սփռուեց Արարատեան, Կարինի, Բասենի, Շիրակի, Գանձակի, Արտազի եւ այլ կողմերն, եւ աւերելով, քանդելով, կողոպտելով, անհամար բազմութիւն ժողովրդեան քշեց իւրաւ թափեց Պարսից բանակն Երեւանի ա-

ռաջ։ Խորամանկ Շահաբբաս կռուի ժամանակ միշտ քրիստոնեաներին, այսինքն Հայերին էր առաջ ձգում եւ ստիպում նրանց կռիւ տալ. եւ այսպիսով թշնամու գնդակները խեղճ Հայերի գլխին էին տեղում։ Ալլահվէրդի խան վէզիրը, որին Շահաբբաս ուղարկել էր Արծկէ քաղաքի վրայ, չկարողանալով այդ ամուր բերդն առնել, մտաւ Բզնունեաց գաւառը, Քաջբերունեաց երկիրը, Արճէշ, Վան, եւ բովանդակ աշխարհի մէջ սուր եւ հուր սփռեց, որքան կարողացաւ կոտորեց, մանաւանդ ծերերին եւ մանուկներին, եւ մնացածն ի գերութիւն վարեց։ Առաքել Վ.ի վկայութեան համեմատ՝ միայն Բզնունեաց, Առբերանի, Քաջբերունու եւ Ցոսպի գաւառներից գերած Հայերի թիւն 23.000 էր, թող կոտորուածները։ Այդ բոլոր գերուած ժողովուրդն իրանց գրաստների, ուլխարների եւ ձիերի հետ Ալլահվէրդի խանը բերաւ ածեց Պարսից բանակն եւ Շահաբբաս որոշելով եկաւորներին պանդուխտ բնակիչներից, քշել տուեց առաջիններին Պարսկաստան, իսկ ընիկներին դարձնելով իրանց տեղերը, ծանր հարկեր դրաւ նրանց վրայ։

Երեւանի պաշարման միջոցին, Սրապիոն կաթուղիկոսն այդտեղ էր։ Էջմիածնի աթոռի պարտատէր Օսմանցիները վախենալով, որ քաղաքն առնուի եւ իրանց պահանջը կորսուի, բռնեցին Սրապիոնին եւ չարչարելով պահանջում էին Մելքիսէթի եւ Դաւթի պարտքերն ասելով, թէ այժմ կաթուղիկոսն դու ես։ Խեղճ

Սրապիոն ինչ որ կարողացաւ, վճարեց եւ փախաւ Նրանց ձեռքից ու թաք կացաւ։ Երբ Շահաբբաս եկաւ Երեւան, Սրապիոն կաթուղիկոսը շատ ընծաներով Ներկայացաւ Նորան, բայց Շահը, որ մտքում դրել էր Մելքիսէթին տալ կաթուղիկոսութիւնը, վատ ընդունելութիւն արաւ, ուստի Սրապիոն երկիւղ կրելով, փախաւ Ջուղայ։

Վերջապէս ինամեայ պաշարումից յետոյ՝ օսմանեան զօրքը ոչ մի կողմից օգնութեան յոյս չտեսնելով անձնատուր եղաւ, եւ Շահաբբաս տիրեց Երեւանին, եւ իսկոյն մուսեսիկների բերանով հրատարակեց, թէ այսուհետեւ Հայոց երկիրը Շահինն է։ Այս բոլոր կռիւների եւ ապատակութիւնների ժամանակ Շահաբբաս խիստ կերպով հետեւեալ քաղաքականութիւնն էր ի գործ դնում. այն բոլոր ժողովուրդը, թէ մահմետական, թէ քրիստոնեայ եւ թէ երբայեցի, որ խաները քշել բերել էին Գանձակից, Արծկէից, Վանից, Մանազկերտից, Ալաշկերտից, Մաքուից, Կարսից, Էրզրումից եւ այլ տեղերից, նա ուղարկում էր Պարսկաստան եթէ զարիբական, այսինքն եկաւոր էին, իսկ ընիկներին ծանր հարկերի ենթարկելով յետ էր դարձնում իրանց տեղերը։

Դժբախտ եւ անխոհեմ Գաւիթ եւ Մելքիսէթ կաթուղիկոսները շուտով գտան իրանց յանցանքի պատիժը. Նրանք յորդորեցին Շահաբբասին գալ գրաւել Հայաստանն, եւ ձեռնտու եղան Նրան այդ գործում, յուսալով ազա-

տուել ծանր պարտքերից. բայց հազիւ Շահ-
աբբաս առաւ Երեւանը, որ կանչեց իր մատ
կաթուղիկոսներին եւ պահանջեց նրանցից վճա-
րել իրան այն գումարը, որ պարտ էին Օսման-
ցիներին։ Սոսկացին, ապշեցին կաթուղիկոսներն
եւ ապաշաւեցին, տեսնելով, որ ոչ միայն
պարտքից չեն ազատւում, այլ եւ իրանց ան-
խոհեմ ընթացքով աշխարհն աւերակ դարձ-
աւ, բայց շատ անագան էր այդ զղջումը.
նրանք ստիպուեցան մուրալ եւ ծանր տոկոսով
փող ճարելով, տալ Շահաբբասին։ Խնդճ Սրա-
պիոն կաթուղիկոսն եւս իր բաժինն ունեցաւ.
Շահի ծառաներն եկան բռնեցին նրան ջուր-
զայում եւ սկսեցին տանջել, ծեծել, բրածեծ
առնել հրապարակով ամբողջ օրեր, մինչեւ որ
ստացան իրանց ուզածն եւ բաց թողեցին։ Այդ
չարչարանքից ազատուելով, թշուառ Սրապիոնը
մի կերպով փախաւ Ամիդ, եւ հիւանդանալով
ցաւերից, յաջորդ 1606 թուին Ապրիլի 25ին
մեռաւ։

Սակայն Շահաբբասի յաղթութիւնների
եւ օսմանեան զօրքի պարտութեան լուրը շար-
ժեց Օսմանցւոց Սուլթանին եւ նրա նախարար-
ներին, որոնք ահագին զօրք գումարելով ու
սպարապետ կարգելով "ջղալ օղլի" կոչուած
Սինան փաշային ուղարկեցին՝ յետ առնել
գրաւուած երկիրները։ Շահաբբաս, որ այդ
միջոցին եկել էր Կարս, Շիրակի երկիրն եւս
նուաճելու, լսելով Սինան փաշայի Էրզրում
հասնելը, յետ դարձաւ եւ եկաւ Երուանդա-

կերտ կամ Ազշաղալէ։ Կռուելով եւ տեսնելով, որ անկարող է օսմանեան հզոր զօրութեան դէմ դնել, մի եւ նոյն ժամանակ չկամենալով զրկուել Հայաստանի ժողովրդից, այլ փափագ ունենալով պահել այդ ժողովուրդն իրան հարկատու եւ հողագործ, Շահաբբաս յարմար եւ պատեհ առիթ համարեց վերջապէս կատարել իր վաղուց երկնած խորհուրդը, այն է Հայաստանի բոլոր բնակիչները վարել Պարսկաստան։

Այդ կերպով Շահաբբաս մի ձեռքով երկու թռչուն էր բռնում. նախ օսմանեան զօրքը վտանգի տակ էր ձգում, զրկելով նրան պաշարից, գրաստից. երկրորդ իր երկիրն էր շէնացնում եւ աւերակ Հայաստանն այն ժամանակ կը ծառայէր իբրեւ պատուար Պարսկաստանին թշնամիների դէմ։ Ի հարկէ այդ տեսակ դիտաւորութիւնը յայտնապէս իրագործել շատ դժուար էր, ուստի Շահաբբաս դիմեց խաբէութեան. նա կանչեց իր մօտ Հայերի մեծամեծներին եւ առ երեսս ցաւակցութիւն ցոյց տալով նրանց վիճակի համար՝ յայտնեց որ ինքը պատրաստ է պատերազմել Օսմանցիների հետ, բայց նախ եւ առաջ պէտք է մտածել իր սիրելի ժողովուրդն ազատել ամէն վտանգից, ապահովացնել նրա ստացուածքը, ընտանիքն աւազակութիւնից եւ շիտոնել, որ վնասների ենթարկուի. ուստի ցանկանալով ժողովրդի բարիքը, նա մտածել է, որ ամենաաւելի միջոցն այն է, որ երկրի բոլոր բնակիչները, վեր առնելով իրանց ընտանիքը, ունեցած շարժա-

կան գոյքը, գնան մի ապահով տեղ մնան, մինչեւ ինքն պատերազմ կը մղէ Օսմանցիների դէմ. եթէ կը յաղթէ նրանց, այն ժամանակ կը դառնան իրանց տեղերը, իսկ եթէ կը յաղթուի, ինքը կը քաշուի իր երկիրն եւ նրանք կարող են Օսմանցիների տիրապետութեան տակ մնալ:

Հայերը հասկացան Շահաբբասի խորամանկութիւնն եւ թէ ինչ չար նպատակ էր ծածկուած այդ սիրալիր առաջարկութեան տակ: Այդ առաջարկութիւնը Շահն անում էր նրանց 1605 թուի աշնան, ուստի ձմեռայ մնանելը պատրուակ բռնելով, աղաչեցին, որ թոյլ տայ իրանց՝ ձմեռը մնալ, շուելու պատրաստութիւն տեսնել եւ թէ գարնան պատրաստ են կատարել հրամանը: Տեսնելով Շահաբբաս, որ իր աղուէսային հնարագիտութիւնը չաջողուեց, սկսեց գործել յայտնի համարձակ, եւ հրաման տուեց բռնութեամբ քշել ժողովուրդը: Խրաքանչիւր գաւառի վրայ մի մի վերակացու կարգեց, զոքք տուեց նրանց օգնական եւ հրամայեց, որ ամէն շունչ կենդանի վարեն քշեն Պարսկաստան, ով որ ընդդիմանայ, չինայեն, խփեն սպանեն:

Թողնենք, որ ինքն Ռաքել Վ.ը խօսէ:

"Եւ հրամայեաց Շահն, ուր եւ կարասցեն ձեռնարկել, արտասահման արարեալ վարեսցեն, եւ ոչ թողուցուն ամենեւին շունչ կենդանի, եթէ քրիստոնեայ եւ թէ մահմետական, գիւաւանողն բանիւ, եւ զոչ հաւանողն եւ զոտունդանողն հրամանաց թագաւորին, սրով եւ մահուամբ եւ գերութեամբ:

"Եւ զօրապետացն՝ յետ ընդունելոյ զայսպիսի աշխարհակործան եւ զասասիկ հրաման ի թագաւորէն, ելեալ իւրաքանչիւր զօրավար իւրով զնդաւն՝ դիմեցին յիւրաքանչիւր հրամայեալ գաւառսն աշխարհիս Հայոց. եւ իբրեւ հողմախառն հուր ընդ եղէգն ընթացեալ, հապճեպ տագնապաւ վաղվաղակի զամենայն բնակիչսն գաւառացն կորզեալք յիւրաքանչիւր բնակութեանց եւ արտասահման արարեալ յիւրաքանչիւր տեղեաց, իբրեւ զՅոլիրս բազմութեան հօտից եւ անդէզ գառաջեաւ արարեալ՝ բռնութեամբ վարեալ՝ առնեալ բերեալ հասուցին ի գաւառն Արարատեւ, եւ զլանջանիստ գաշան նորա լցին ծագէ ի ծագ, քանզի ի սոսրսահ լերանցն Գառնւոյ մինչ ի յեզն Երասխայ մեծի գետոյն, լայնութիւնն էր բանակին, իսկ զերկայնութիւնն գոլիմբ կշռեաց գու, բայց ես ասեմ աւուր միոյ ճանապարհ եւ յայլսբ տեսի՝ որ հինգ աւուր ճանապարհ էին գրեալ: Եւ էր նոր փոխեալ թուականն Հայոց եւ մտեալ ի ՌՆԴ. յառաջնում ամեանն Հայոց Կաւասարդի որ քշեցին զերկիրն: Եւ պարսիկ զօրքն, որք գնացին ի քշել զերկիրն, ուստի եւ հանեալ զժողովուրդս, քշէին, եթէ ի գեղօրէից եւ թէ ի քաղաքացն զամենայն շէնս, զտունս եւ զենակութիւնս հուրբ այրեալ անխնայաբար հրկէզ առնէին: Այլ եւ զամբարս խոտոց եւ դյարդի՝ զցորենոյ եւ զգաբոյ եւ զայլ պիտոյից, զամենայն այրեալ վատնէին: Այսպէս աւերեալ թափուր արարին զաշխարհն վասն զօրացն Օսմանցւոց՝ զի մի մնացէ ինչ ուռճիկ նոցա եւ վատնգեսցին նոքա: Այլ եւ ելեալ ժողովուրդքն դոյն տեսեալ սրտակտուրք լիցին, եւ մի դարձցին յետս:"

Այսպէս պարսկական վայրագ զօրքն ամայացնելով բովանդակ Հայոց երկիրը, բոլոր շինութիւնները կրակի ճարակ տալով, բոլոր

ուտելիքն եւ բնակիչների պաշարը փճացնելով, որպէս զի ոչ ոք այլ եւս չփափագէ դառնալ կամ մնալ, հարկանելով, սպանանելով բերին անմեղ, անտէրունչ ժողովուրդը լցրին Այրարատի ընդարձակ դաշտը, սպասելով, որ Շահաբբաս հրամայէ վարել Պարսկաստան։ Դաշտի շուրջը զօրքով պատած էր, որ ոչ ոք չկարողանայ փախչել։ Պարսիկները շմոռացան եւ Էջմիածինը կողոպտել աւերել, եւ երկու կաթուղիկոսներին մի քանի եպիսկոպոսների հետ թագնուած գտնելով, նրանց եւս քշեցին, բերին խառնեցին ժողովրդեան բանակի հետ։

Սակայն այդ ընդհանուր սրածութեան եւ թշուառութեան ժամանակ Հայի նախնական քաջութիւնը տեղ տեղ փայլեց, մանաւանդ հայ կնոջ հերոսութիւնն եւ քաջասրտութիւնը հրատարակուեց։ Բարոյականութիւնը, ամուսնական պատուի նախանձախնդրութիւնը, որով հայ ընտանիքը միշտ փայլել է աշխարհի երեսին, այստեղ եւս ցոյց տուեց իր զօրութիւնն եւ ապացուցեց, թէ որքան հայ ազգը ճնշուած, հարստահարուած, անկեալ վիճակի մէջ եւս լինի, դարձեալ նա ունի մեծ բարոյական ոյժ դիմադրելու դժբախտութիւններին, նա ունի այնպիսի հազուագիւտ յատկութիւններ, որոնք քաղաքակրթութեան եւ զարգացման ընդունակ ազգերին են միայն սեպհական։ Հայ կինն իր պատիւն անարատ պահելու համար, չէ վարանում մի րոպէ սարի ահագին բարձրութեան գլխից իրան անդունդը ձգել, կտոր կտոր

լինել, գաշտինը իր ձեռքով իր սիրտը մխել։ Այո՛, այդպիսի տեսարաններ տեղի ունեցան փրկչական 1605 թուին, աշնան, երբ Պարսից վայրագ զօրքը քշում էր Հայերին։ Քսան հազար հոգի Հայերից, այր եւ կին, փախչել պատսպարուել էին Գառնու գաւառի "Քոռաձարայ" կոչուած ձորի անառիկ այրերի մէկի մէջ, որի անունն Խ-ԽՇԱՌ էր, մի բարձրագագաթ տեղ։ Ամիրգունա խանն իր զօրքով եկաւ եւ որքան հրացան արձակել տուեց, չկարողացաւ առնել։ Զարահնար Պարսիկներին աջողուեց վերջապէս սարի գագաթից թագուն կերպով մի քանի զինաւորուած մարդ իջեցնել այրի դուռը, որոնք յանկարծ սուսերամերկ մտնելով բազմութեան մէջ, շփոթեցրին եւ սկսեցին կոտորել, մինչեւ մնացած Պարսիկներն եւս վայ հասան։ Պարսիկները կոտորում էին միայն տղամարդերին եւ պառաւներին, եւ խնայում էին երիտասարդ կանանց, տղաներին եւ աղջիկներին իրանց անասնական կիրքը յագեցնելու համար։ Սակայն թշուառները տեսնելով, որ պէտք է պղծութեան գարշանքին մատնուին, լաւ համարեցին մահն անպատիւ կեանքից, եւ մայրն իր ձեռքով իր աղջկան անդունդը գահավիժելով, ինքն եւս ետեւից միանում էր նրան։

"Բազումք ի նոցանէ պատէին զերեսս փակեալսք եւ ձորձալ իւրեանց եւ յանբաւ բարձրութենէն ի յայրէ անտի ի վայր արկանէին զինքեանս եւ մեռանէին։ Եւ վասն զի ի մէջ ձորոյն էր մայրի անտառախիտ ծառոյ, եւ ամենց յայնց՝

որք զինքեանս ի վայր արկանէին յայրէ անտի՝ եկեալ պատահէին ծայրից ոստոց ծառոց եւ արգելուին ի նոսա, ոմանց եւս ընդ փոքր մնեալ ի քամակն ելանէր ծիւղն, եւ ոմանց ի սիրան մնեալ ի թիկունս ելանէր։ Որքա եւս այսպիսի տաժանելի եւ դառն մահուամբ վճարեցան„ — ասում է Առաքել վարդապետ։

Այս կերպով Շահաբբասի նախարարներն անմարդաբնակ արին ամբողջ Հայոց աշխարհն եւ Արարատի դաշտը ծագէ ի ծագ լցուեց մարդով։ Թէ որքան մեծ էր ժողովրդեան բանակը, կարելի է եզրակացնել նրանից, որ Առաքել Վ.-ի ասելով, այդ բանակի լայնութիւնն էր Գառնու լեռների ստորոտից մինչեւ Երասխ գետը, իսկ երկայնութիւնն մի, իսկ ըստ ոմանց, հինգ աւուր ճանապարհ։ Եթէ ի նկատի ունենանք, թէ քանի երկիրներ, գաւառներ դատարկուեցին, այն ժամանակ բանակի մեծութիւնը մեզ չպիտի զարմացնէ։ Սկսեալ Շիրակի սահմաններից մինչեւ Լոռի, Նախիջեւանից մինչեւ Կուր գետ, Վաղարշակերտից մինչեւ Արտազ, Արտազ գաւառից մինչեւ Որմի եւ Թաւրէզ, ինչպէս եւ Բզնունեաց եւ Ռշտունեաց սահմանները, — ահա այն տարածութիւնը, որի վրայ գտնուած Հայերը դուրս հանուեցան։ Ցանկանէ անուանէ հետեւեալ գաւառներն ենթակայ եղան այդ դժբախտութեան։ Կարինի, Բասենի, Խնուսի, Մանազկերտի, Արծկէի, Արճիշի, Բերկրի, Վանի, Կարսի, Զարեհշատի, Շիրակի, Ապարանի, Համզաշէնամի, Լոռու, Գեղամի, Նախիջեւանի գաւառները, բոլանդակ

Արարատի դաշտը, Երեւանը, Կաղզուանի ձորը, Ալաշկերտի երկիրը, Մաքուի գիւղերը, Աղբակի, Սալմաստի, Խոյի, Որմու երկիրները, Թաւրիզի շրջակայ գիւղերաքը, այլ եւ Զիթբուլաղ, Ծաղկունաց ձոր, Գառնու ձոր, Ուրծայ ձոր, եւայլն։

Ժողովրդի վարիչները բոլոր ժողովուրդը լցնելով Էջմիածնի դաշտի մէջ, սպասում էին Շահաբասի հրամանին, որ Աղջաղալայ էր գանւում։ Լսելով, որ Մինան փաշան իր զօրքով հասել է Կարս, նա իսկոյն հրաման տուեց առաջ վարել ժողովուրդը դէպ ի Երասխ գետը, եւ ինքն էլ պնդեց նրա ետեւից, իսկ Օսմանցիներն էլ պնդեցին Շահաբասի ետեւից եւ աճապարում էին հասնել նրան։

Այդպէս, երեք մեծ բանակ եղան. առաջինը՝ ժողովրդինը, որ գնում էր առաջեւից. երկրորդը՝ Շահաբասի զօրքը, երրորդը՝ Օսմանցիների զօրքը։ Այդ բանակները միմեանցից մի օրւայ ճանապարհով բաժանուած էին։ Այսպէս, միմեանց ետեւից պնդելով, ժողովրդի եւ Շահաբասի բանակներն եկան հասան Ջուղայի սահմանը, Երասխ գետի ափը, իսկ օսմանեան բանակը հասաւ Նախիջեւան։

Այլ եւս ժամանակ չկար կորցնելու. մեալ գետի ափում անկարելի էր. Շահաբաս վախենում էր պատերազմել Օսմանցիների հետ, ուստի միակ միջոցն էր փախչել եւ անցնել Պարսկաստան։ Այդ պատճառով հրաման տուեց, որ շտապով ժողովուրդը անցկացնեն

գետի միւս ափն եւ ահա այդտեղ "եղեւ լալ եւ կրճտել ատամանց.„ այդտեղ պէտք է ժողովուրդը քամէր դառնութեան վերջին մրուրը:

Հայերի Երասխ գետից անցնելը:

"Մայր Արաքսի ափերով
Քայլամոլոր գնում եմ,
Հին հին դարուց յիշատակ
Ուսաց մէջը պտրում եմ:

"— Արաքս, ինչու՞ ծրկանց հետ
Պար չես բռնում մանկական,
Դու դեռ ծովը չը հասած,
Սրգաւոր ես ինձ նման:„

"— Մէջքը ուղղուց Արաքսը,
Փրփուր հանեց իր տակից,
Ամպի նման զոռալով,
Ասէս խօսեց յատակից:

"— Խիզախ, անմիտ պատանի,
Նիրհոս ինչու՞ դաբեւոր
Վրդովում ես, նորոգում՝
Իմ ցաւերը ցիւրաւոր:„

Դէ լսիր պատմեմ:

"1605 թուին Սեպտեմբերին, մի չարաբաստիկ օր, դեռ վաղորդեան արեւը չը ծագած, Արաքսի գետաբերանը ծագէ ի ծագ լցուած էր անհամար բազմութեամբ մարդկան: Ցզամարդ, կին, պառաւ, ծեր, մանուկ, նորատի գեղանի հայ կուսանք, կայտառ, քաջ հայ պատանիներ ազիզորմ կանանով լալիս ու գոռում էին: Պարսից Շահաբաս թագաւորը իր աւագանու հետ բազմած գետի ափին, հրաման տուեց, որ ժողովուրդն անցընեն գետից. խիզախ մուներիկներ ընկնելով բազմութեան մէջ, սկսեցին բարձրաձայն գոռալ — հրաման է Մեծ Շահաբաս Շահնշահից ան-

միջապէս անցնել գետը. յապաղողը խատիւ պիտի պատժուի. բազմաթիւ լաստեր, նաւակներ, որոնց մի մասը բերել էին Կասպից ծովից, լցրել էին գետի երեսը, սակայն անհամար բազմութիւնը անցնելու համար բաւ չէին, զօրականներն ստիպում էին շուշանալ, բայց ժողովուրդն տեսնում էր, որ անկարելի է մի օրում այդքան սարսափելի բազմութիւնը նաւերով փոխարկելը. գիտէր այս եւ Շահաբաս, ուստի հրամայեց, որ նաւերով ու լաստերով միայն զօրքի ծանր բեռները եւ հաւաքած աւարը տանին, իսկ ժողովուրդն թող լող տալով անց կենայ։ Այս հրամանը աւելի ազդու անելու եւ արհաւիրք սփռելու համար, սկսեցին որի ականջը, որի շրթունքը, որի ձեռը կտրել, իսկ հայ երեւելիներից մի երկուսի եւս գլուխը կտրելով, ցիցերի վրայ կանգնեցրին գետի եզերքին։ Զօրքն ամէն կողմից շրջապատելով ժողովուրդն, մղում էր նրան գետի բերանը. թշուառ Հայերը աղաչեցին, որ գէթ թոյլ տան ջրի ճանապարհները դնելը եւ հուն ու ծանծաղուտ տեղերը գտնել, բայց Շահի հրամանն անողոք էր. պէտք է անմիջապէս բոլորը ջուրը թափուին. Օսմանցիք եռեւից գալիս են, ժամանակ չկայ մտածելու եւ ապասելու։ Այս խիստ հրամանն ընդունելով պարսիկ վարիչ զօրքը իր անգթութիւնը կատաղութեան եւ գազանութեան հասցրեց. եւ ահա այդտեղ բացուեց մի քաղաքելի, աղեղողմ տեսարան, որ ոչ մի գրիչ չէ կարող նկարագրել։ Վարիչներն սկսեցին մահկանեռով, բերով, գաւազաններով եւ սրերով հարուածներ տալով ստիպել ժողովուրդն գետը մտնել. թշուառների ճիչը, աղաղակը, դառն ողբը, հեծութեան ձայնը աշխարհք էր վեր առել. նոցա աղաղակը երկինք էր հասնում. մահուան երկունքը պաշարել էին բոլորին. եռեւից վարիչները, գազանութիւնը, սուրը, առաջից սարսափելի գետը, երկու կողմից եւս

հաստատապէս մահ. ոչ մի կողմից փրկութեան յոյս չկայ, եւ ահա այդ սարսափելի յուսահատութեան մէջ հայրը թողեց, լքաւ իր զաւակը, տղամարդը իր կնոջը, մայրը իր աղջիկը, եղբայրը իր քրոջը. հարուստ, աղքատ, շինական, ազնուական, աշխարհական, հոգեւորական ապիոդորմ կսկանով թափուեցին գետի մէջ. գութը, ողորմութիւնը անհետացաւ. ամէն մարդ աշխատում էր իր կեանքը փրկել. շտապով սրընթաց եւ յորձանուտ գետի երեսը լցուեց գիակների, անմեղ զոհերի մարմիններով. ով լողալ գիտէր, մի կերպ ազատւում էր, ով չգիտէր, յատակն էր իջնում. օրհասական կռուից պաշարուելով, լուղորդները խափանում էին միմեանց փրկութիւնը. տղայք, աղջկունք, հիւանդներ ջրի երեսն իբրեւ խոխ լցուել էին, իբրեւ մրջիւն քշում էին. յղի կանայք ծանրութիւնից, ստնտեայ մայրերը մանուկներով ծանրաբեռնուած, ընկղմում էին եւ անհետանում. միմեանց ոտքերից բռնուելով, ջրի խորքն էին սուզւում. ջուրը քշում տանում էր իբրեւ փայտի տաշեղ։ Մնացեալները կամ լողանալով փրկւում էին եւ հասնում էին եզրը, կամ բռնելով նաւակների ծայրերից, ձիերի եւ գրաստների պոչից, մի կերպով դուրս էին գալիս։ Շփոթութիւնը գնալով սաստկանում էր. Պարսիկների բարբարոսութիւնը իր վերջին ծայրին հասաւ. Ներանք ողորմելի Հայերին սկսեցին տանջել եւ սատացուածքը ձեռքներից խլել։ Խղճալիների կոծն ու աղաղակը, օգնութեան ձայնը թնդացնում էր սարերն ու ձորերը, բայց ո՞վ էր լսում, ո՞վ էր գթում։ Ով բախտաւոր էր, մի ձի կամ մի գրաստ ունէր, կարողանում էր մի կերպ փրկուիլ, բայց հաղիւ հասնում էր միւս եզրը սրտատրոփ, այնտեղ նոր փորձանք, նոր բարոյական տանջանք եւ մահ սպասում էր. այնտեղ կամ Պարսիկն էր սպանում, իրան կինը եւ գոյքը յափշտակելու համար, կամ իր ընտանեկան գեղեցիկ աղջիկներին

եւ տղաներին դերի վարած էր տեսնում. անօրէն Պարսիկ զինուորները ընդհանուր խառնակութեան միջոցին յափշտակում էին հայ դեղտի կոյսերին եւ պատանիներին ու փախցնում, իրանց անասնական կիրքն յագեցնելու ու պղծելու համար։ Որքան մայրեր անպատուած մնացին, որքան հայ առաքինի կանայք բռնաբարուեցան. Աստուած միայն գիտէ։

"Ահա այսպիսի սարսափելի դառնութեան մէջ հայ ժողովուրդն անցաւ Աբրաքը, որի յորձանքն, անշուշտ, յորդացաւ ողբմելի հայ աղջիկների, երեխաների, պատանիների արտասուքով ու արիւնով։"

Ջուղայեցիների գաղթականութիւնն ընդհանուր ժողովրդի այդ մեծ տարագրութիւնից առանձին կատարուեց, մի քանի օրից յետոյ։ Շահաբաս յանձնեց վրացի իշխան Թահմազ Ղուլի Խէգին, որ պատանդ էր Պարսից մօտ եւ ուրացել էր քրիստոնէական հաւատը, չուեցնել Ջուղայեցիներին։ Գալով Ջուղա, մուհետիկների ձեռքով հրատարակեց Շահի հրամանն եւ ստիպեց անմիջապէս չուել. Ջուղայեցիներն երկար աղաչանքներով եւ թանկագին ընծաներով հաղիւ կարողացան համոզել նրան 3 օր ժամանակ տալ իրանց։ Որովհետեւ բեռնակիր անասունների թիւը շատ քիչ էր եւ բաց ի դրանից, Ջուղայեցիները լոյս ունէին վերադառնալու, ուստի իրանց հետ վերցնելով թանկագին իրերը, մնացած գոյքը գաղեցին եւ թաղեցին զանազան տեղերում։ Ամբողջ ժողովուրդն հաւաքուելով մի տեղ, Ս. Աստուածածնի եկեղեցու առաջ,

լացով, ողբով հրաժեշտ տուեց իր հայրենիքին եւ քահանաներն առնելով եկեղեցիների բանալին, ձգեցին Երասխի մէջ, նրա պահպանութեան յանձնելով իրանց հայրենիքը։ Երբ Թահմազ Ղուլի Բէգը բերեց հասցրեց Ջուղայեցիներին Երասխի ափը, Շահի բանակը, վերջինս մեծ կարեկցութիւն ցոյց տուեց նրանց եւ հրամայեց զօրքին օգնել ու ձիերով եւ ուղտերով անվնաս փոխադրել նրանց գետի միւս ափը. ապա իմանալով, որ Թահմազ Ղուլի Բէգն չէ կործանել Ջուղայի շինութիւնները, Շահը բարկացաւ եւ հրամայեց անմիջապէս վերադառնալ ու աւերել. շուտով կատարուեց այդ հրամանն եւ 15 օր ամբողջ հրդեհն աւերում էր Ջուղայի շինութիւնները։ Դրանով Շահաբբաս կամեցաւ միանգամայն կտրել ժողովրդի յոյսը՝ վերադառնալուց։

Ինչպէս երեւում է, Ջուղայեցիներն առանձին նեղութիւն չկրեցին տարագրութեան ժամանակ. նախ՝ որովհետեւ Շահն առանձին խնամք էր ցոյց տալիս նրանց, երկրորդ՝ հարուստ լինելով, նրանք ընծաների եւ փէշքաշների միջոցով կարող էին ազատ մնալ հարստահարութիւնից. վերջապէս, այն հանգամանքը, որ դեռ մինչեւ այսօր Նոր-Ջուղայում գտնւում են մեծածաւալ եւ թանկագին ձեռագիրներ, որոնք, անկասկած, Ջուղայեցիները բերել են իրանց հետ, պարզ ցոյց է տալիս, որ նրանք իրանց հետ կարողացան տեղափոխել եթէ ոչ իրանց ամբողջ գոյքն եւ հարստութիւնը, գոնէ նրանց մի նշա-

նաւոր մասը: Մնում է մի հարց լուսաբանել. ճիշդ որ ժողովուրդը սարսափելի նեղութիւններ կրեց եւ մեծ զոհեր ու վնասներ ունեցաւ Երասխն անցնելուց: Եթէ հաւատանք Առաքել վարդապետին, այո, ինչպէս եւ նկարագրեցինք, բայց կան եւ ուրիշ պատմաբաններ, որոնք ուղղակի ասում են, թէ ոչ մի վնաս չեղաւ: Նոր-Ջուղայի Ամենափրկչի վանքի մի ձեռագիր Աւետարանի յիշատակարանի մէջ, ահա ինչ է գրուած:

"Ի դառն եւ ի վշտաշատ ժամանակիս որ ոչ գրով կարելիք բաւել եւ կամ ծանուցանել զեղեալ չարիսն... եւս առաւել տառապեալ ազգիս մերոյ Հայոց, որ էր պատճառն այս զի ի Թուականից ՌԼԲ ամին եղաւ Ցարհատ փաշայն ի Սատամ պօլու հրամանաւ Սուլթան Մուրատին ինքաւ ի քաղաքն Երեւան, եւ փախոյց Տէր Երկրին զՄահմադ խանն Պարսից Թագաւորութեան Խուդաբանդ Շահին... ապա ի Թուականիս ՌԾԲ եկաւ Ապասշահն՝ որդի Խուդաբանդ Շահին վրէժխնդիր իւր Հայրենական աշխարհին, յաւուրս աշնանային յանկարծ ինքաւ ի Թաւրէզ, եւ դաւուրս տասն եւ հինգ կոտորեաց զազգս Օմարին, եւ էառ զերդն: Անտի ինքաւ ի Նախչուան, զայն եւս էառ օր մի, եւ ապա եկեալ ի վերայ Երեւանայ բերդին. եօթն ամիս պատերազմեցաւ բնդ նոսա եւ ապա կոտորեաց զամենեսեան եւ էառ զերդն: Յետ այնորիկ գնաց մինչեւ ի սահմանս Կարսայ բերդին, եկին զօրքն Պարսից աւերեցին զքաղաքն երկիրս՝ եւ գերեցին բազում Քրիստոնեայս յաւելի քան զերկու բիւրս: Յայնժամ եկաւ Ցղալի որդին Սատամ պօլու՝ անհուն եւ անհամար հեծելովք ի վերայ Շահաբբասին: Յորժամ զբազմութիւն նոցա ետես՝ հնարս խմացաւ եւ արար հրաման աւերելոյ աշ-

խարհիս Հայոց։ Եւաւ Ամիրգուներանն բաղում զօրք եւ եհան զամենեսեան ի տանէ, եւ ի Հայրենեաց, Հայք՝ Ցածիկք՝ Շիրակմանայ մինչեւ ի գաւառս Գողթան։ Վայ մեզ թէ յայնմ աւուր նեղութիւնն ով կարէ պատմել, թէ որպէս անողորմաբար տանէին զազգս Հայոց. ոչ թողուին որդիս բարձցէ (?) գծերացեալ ծնողն, կամ առցեն մարք զմանկունս իւրեանց։ Այնչափ շտապաւ վարէին, որ ոչ Հայր՝ զորդին գտանէր, եւ ոչ եղբայր՝ զեղբարս. եւ ոչ այր զկին իւր, եւ ոչ մայր զդուստրն իւր. բաղումք ծերք եւ տկարք կոխան եղեալ մեռանէին. եւ լինէին գէշ գազանաց։ Ցորժամ հասան ի մեծ գետն Երասխ, եկեալ խաղարս, թէ ահա հասին զօրք Օմարին, որ ոչ գոյ հնար ղերծանելոյ։ Ցայնժամ ահ մեծ անկաւ. ամենեքեան թափեցան ի ջուրն եւ անցին ի միասին, թագաւորն եւ զօրք իւր եւ Ռ-ամիկքն, եւ ոչ ոք վնասեցաւ խնամովն Աստուծոյ։ Աւերեցին զգիւղաղաղաքն Ջուղայ որ էր գեղեցկաշէն եւ հիանալի քաղաք...»

Հաւանական է սակայն, որ խօսքը վերաբերում է Ջուղայեցիներին, որովհետեւ Առաքել վարդապետի ասածներն հաստատում են եւ ուրիշ ականատես պատմաբաններ։ Վերոյիշեալ վանքի ձեռագիրների մէջ մնացել է մի ժամանակակից աշուղի յօրինած երգը, որ ահա.

"Եկայք Ադամայ որդիք ժողովեալ ի մի նստունք
Եւ ձեզ պատմեմ լալագին զողբ եւ զվոյծս Հայոց ազգին։
Ի Հայոց հազար թուին եւ յիսուն երեք յաւելին։
Եկաք աւերեաց պատկերին մուտ յամենանն Նաւասարդին։
Խուսար տիրեաց մեր Ազգին՝ բարկացաւ մեր Տէրն երկնային.
Որպէս կարկուտ ի յամպէն՝ նոխնպէս՝ զօրքն Պարսից իջին։

Գլուխ զօրաց էր նոցին՝ Շահաբաս Խուդաբանդ որդին,
Հազարապետ ընդ նոսա՝ Հէրեւան քաղաքն իշին:
Զորս կողմն վրան դրին զաւազ բերդն պաշարեցին,
Եօթն ամիս սիւաթ տուին՝ եւ եօթն օր վէր անցուցին:
Յորժամ տարին բոլորեցաւ՝ բօթատուն էրեկ կանգնեցաւ,
Թէ գէղալօղլի կասին վերայ քեզ կռիւ շարժեցաւ:
Շահաբասն ուրախացաւ՝ իւր զօրաց թիւն շիմացաւ,
Ելեն ու զրահ հագաւ՝ փողոստէգիսն զգեցաւ:
Թեսին հմայիլ կապեաց՝ խանեբուն խալաթ ուղարկեաց,
Վաթսուն հազար ձիաւոր՝ առ իւրեան զօրքն ժողովեաց:
Ժողովեաց Սուլթան ու Խան որք եկան նստան առ արքայն,
Երեք օր երեք գիշեր՝ տրտմութեամբ նստան ի դիվան:
Մին սուտ գրաքան գտան. նայեցուց նշան աւերման,
Ամենասուղ աչքն կուրանայ՝ ինքն անկանի ի խոր զընտան:
Արկին յետ հարցմունք ելան՝ նա էարը զարիւն ամենայն.
Ասաց աւերեցէք զերկիրդ՝ ու տարէք զմարդն Ասպահան:
Ամն... արդ այն՝ իւր զօրացն եհան հրաման,
Ի Անուշ քաղաքէն հետ՝ աւերեցէք մինչեւ Նախչուան:
Յորժամ առին հրաման՝ ազգն մահմետական,
Շարաթ էր լուս կիրակի՝ որ կրակ տվին Հարեւան:
Սարէբն ամին սուզ մտան՝ ծով եւ գետ ի լաց շարժեցան,
Շատ հարսն եւ աղջիկ տարան ի քաշան եւ ի ասպահան:
Շատ նաղդիլի ճոթ պատկեր՝ սէվադէմ պարսից ձեռք անկան,
Շատ զօրաւորք կտիշ նետողաց ազգէն սպանան:
Շատ զեղեցիկ ճոթ պատկեր՝ կապիք մանկունք յոտնատակ թաւալմամբ մեռան:
Շատունք արաստրն ընկան՝ Ջրախեթ առ Աստուած փոխեցան:
Ատ ըսվորսէ թիրաքիայ, ձեզ վկայ բերեմ զէուղայ,
Փոխան սաղմոսաց երգոց՝ բու աւերակի ձայն կու գայ:
Զգեղեցիկ ճոթ պատկերներն ինչ որ իմամովու գնոսա մնար,
Տարան ասպահան քաղաքն՝ խանեցին ի պիղծ թաթն որ կայր:»

ՊՇՐԱԿՈՒՅՑԻՆ ՀՇՅԵՐԸ

Այս երգի մէջ աչքի է ընկնում մի հանգամանք եւս. աշուղը Հայերին գաղթեցնելու պատճառը վերագրում է նրան, որ մի փալչի կամ հարցուկ խորհուրդ տուեց Շահաբբասին վտարել Հայերին: Որովհետեւ Հայերի գաղթականութիւնն առաջ բերող պատճառների քննութիւնը շուտով մեր քննութեան առարկայ պէտք է լինի, ուստի մենք հարկաւոր համարեցինք եւ աշուղի այդ կարծիքի վրայ ուշադրութիւն հրաւիրել:

Մի այլ ականատես, Հին-Ջուղայի մնոի Շամբ գիւղի բնակիչ եւ Դախավկայ վանքի միաբան Ստեփան վարդապետն ահա ինչ ողբ է յօրինել Հայերի գաղթականութեան առիթով.

"Ախոս քեզ Հայոց խեղճիկ ժողովուրդ,
Ցիրուցան ելաք անմեղ անխորհուրդ.
Դերի գնտման աք դէպ ի Խորասան,
Քաղցած ու ծարաւ, տկլոր թշուառական:

Խարիւք ու խազաք ցաւի դիմացաք,
Ձեր քաղցրիկ երկրէն ոտ դուրս չընդրաք.
Խրմի ձեր խօր մեր գերեզման թողաք,
Տընեն ու ժամերը ուրիշի տուաք:

Էս սիրուն դաշտերն, մեծ մեծ քաղքներն,
Քաղցրիկ ջրերն, ձեր շէն գեղերն,
Ո՞ւմ աք թողման դուք, որ գնտման աք.
Էսպէս կընեմ որ մոռանում աք:

Վախում ամ Էնպէս մոքերնուդ ընկնի,
Ինչքան որ ողջ աք մոքերնուդ չընկնի.
Բարի ձեր որդւոց թոռանց պատմեցէք.
Էսպէս խայրենիքն քանդած թողեցիք:

Մասիսի անունն, Նոյայ տապանի,
Աբարատ դաշտի, սուրբ Էջմիածնի,
Մեր խոր վիրապի, սուրբ Գեղարդ, Մուղնի,
Ջմոռանան մինչ ի օրն դատաստանի:

Աչքս կուրանար, չինքս կոտրուէր,
Ղոնդ Հայաստան, քեզ էսպէս չըտեսնէր.
Թէ մեռած էի, ինձ երանի էր,
Քան թէ կենդանի՝ աչքս բաց տեսնէր:»

Այս բոլորից կարող ենք այն եզրակացութիւնն հանել, որ գաղթող ժողովուրդը, մասամբ, մեծ տառապանքներ, նեղութիւններ եւ վնասներ կրեց գաղթականութեան ընթացքում, բայց Ջուղայեցիները, համեմատաբար, քիչ վնասներ կրեցին եւ քիչ հարստահարութիւններ ենթարկուեցին:[1]

Մեզ հարկաւոր է այժմ բացատրել այն պատճառները, որոնք առաջ բերին 1605ի մեծ գաղթականութիւնը, ինչպէս եւ նկարագրել Շահաբաս Ա.ին, որ հանդիսանում է մի խոշոր պատմական անձնաւորութիւն: Երկու խնդիրներն եւս բարդ են, որովհետեւ պատմագիրների կարծիքները նրանց մասին շատ հակասական են:

Արեւելքում, մահմետական աղգերի մէջ երկու թագաւորներ այնքան հերոսացած են, որ

---

1 Հայերի այս մեծ գաղթականութիւնն եւ նրա աղէտները նկարագրել է մի ականատես վկայ՝ Օգոստինեան կարգի կրօնաւոր Անտոն եպիսկոպոս Գուվէա եղբայրը (Frère Anthoine de Gouvea) որ այդ ժամանակ Սպանիայի Փիլիպպոս Բ. թագաւորի կողմից ուղարկուել էր դեսպան Շահաբասի մօտ: Գուվէայի գիրքը տպուած է Լուէնում 1646ին:

Նրանց յիշատակը մինչեւ այսօր եւս թնդում է եւ բոլոր հէքեաթների ու զրոյցների մէջ շարունակ լսւում է նրանց անունը եւ գրեթէ առասպելական քաջագործութիւնները։ Մինը Բաղդատի խալիֆայ Հարուն-էլ-Ռաշիդն է, միւսը՝ Շահաբբաս Ա.ը։ Այսօր եւս ճանապարհորդելով Պարսկաստանում եւ Անդրկովկասում, Թիւրքաստանում, Աֆղանիստանում, Անդրբայկալեան երկրում, որոնք Շահաբբասի ժամանակ Պարսկաստանի մասերն էին կազմում, կարող էք հանդիպել բազմաթիւ աւերակ եւ շատ տեղ դեռ կանգուն քարվանսարայների, կամուրջների ու մզկիթների, որոնք կոչւում են Շահաբբասի անունով։ Աւանդութիւնը ժողովրդի բերանով ասում է, որ Շահաբբաս կառուցել է 1001 քարվանսարայ, 1001 մզկիթ, 1001 կամուրջ. թէ ինչու անպատճառ 1001 թիւն է գործածւում, չգիտեմ. բայց այսօր եւս Պարսկաստանում առանց այդ քարվանսարայների անկարելի կը լիներ ճանապարհորդել, մանաւանդ կարաւանների համար։ Շահաբբաս կառուցել է այդ քարվանսարայները կարաւանների իջեւանի համար, առեւտրական յարաբերութիւնները դիւրացնելու նպատակով։

Ընդհանրապէս բոլոր մահմետական, թէ ժամանակակից եւ թէ ոչ-ժամանակակից պատմագիրները վերին աստիճանի գովասանքով են խօսում Շահաբբասի մասին, իբրեւ մի աշխարհաշէն, իմաստուն եւ արդար թագաւորի, որ իր մեծ գործերի համար "ջանեթ-մաքան„

(դրախտաբնակ) եւ "Մեծ" մականուան է արժանացել։ Դեռ հէքեաթներից գիտենք, թէ ինչպէս Շահաբասը գիշերները ծպտեալ իր վէզիրների հետ շրջում էր քաղաքներն եւ գիւղերը՝ ժողովրդի վիճակին վերահասու լինելու համար, ինչպէս անում էր Հարուն-էլ-Ռաշիդը իր ջաֆար վէզիրի հետ։ Սակայն Ռաքել վարդապետը նկարագրում է նրան բոլորովին այլ գոյներով, իբրեւ "անդնդային վիշապ, օձի բնաւորութիւն ունեցող, իբրեւ մի աշխարհաւեր եւ բռնակալ մարդ եւ խիստ ֆանատիկ մահմետական ու հալածող քրիստոնէութեան։" Ներկայ դէպքում մի քիչ սկեպտօրէն պէտք է վերաբերուել թէ Ռաքել վարդապետի եւ թէ մահմետական պատմագիրների կարծիքներին. առաջինը՝ հայ ազգին հասած աղէտների պատճառով կարող է դառնացած լինել Շահաբասի դէմ եւ հետեւաբար ոչ անաչառ, իսկ մահմետական պատմագիրները՝ ոգեւորուած լինելով կրօնական զգացումներով, նոյնպէս չեն կարող անաչառ պատմիչ հանդիսանալ եւ միակ այն հանգամանքը, որ Շահաբաս ջարդել եւ կոտորել է գեաւուրներին, բաւական է մոռացնել տալու նրա բոլոր պակասութիւնները։ Դիմենք ուրեմն նաեւ ուրիշ պատմագիրների։

Մի նոր պարսիկ պատմաբան, որի երկասիրութիւնները դեռ անյայտ են մնացած, բայց որին կարելի է կատարելապէս հաւատ ընծայել, որովհետեւ նա իր խօսքերն հիմնում է դիւա-

նական գործերի եւ թղթերի վրայ, հանգուցեալ նասրէդդին Շահի հօրեղբայր՝ մի քանի տարի առաջ Շուշի քաղաքում վախճանուած արքայազն իշխան Բէհման Միրզան, որդի հռչակաւոր Աբբաս Միրզա գահաժառանգին, իր մի ձեռագիր հեղինակութեան մէջ, որ կոչւում է "Շուքր-նամէ„ եւ որը պարունակում է իր մէջ Կովկասեան եւ Արարատեան երկրի Ե. դարեայ պատմական անցքերը համառօտ կերպով, Ջինգիզ Խանից սկսած մինչեւ Աղա Մահոմմէտ Շահ Ղաջարը, հետեւեալ կերպով է խօսում Շահաբբասի բնաւորութեան մասին:

"Կարդալով Շահաբբասի ձեռքով կատարուած այս կոտորածի, գերեվարութեան եւ աւարառութեան նկարագրութիւնը, որ նա անմեղ արարածներին կրել տուաւ՝ հակառակ խղճմտանքի եւ գթասիրութեան, ընթերցողները շատ պիտի զարմանան. սակայն եթէ մինը ծանօթ լինի նրա բուն բնաւորութեան եւ եպերելի ունակութիւնների հետ, երբեք չպիտի զարմանայ նրա այդ արարքի վրայ, որովհետեւ Շահաբբաս Մեծը մի թագաւոր էր խիստ անդութ, խստասիրտ, երդմնադրուժ եւ դաշնադանց, կասկածոտ, բստ երեւոյթին թէեւ հաճոյատեսիլ, բայց ի ներքուստ ժանտ. ինչպէս որ իր թագաւորութեան սկզբում իր հայր Սուլթան Մահմադին ինն տարի բանտարկեալ պահեց, մինչեւ որ բանտի մէջ մեռաւ. յետոյ իր երկու անմեղ հարազատ եղբայրներին, որոց մինը — Թահմասպ Միրզան 12 տարեկան էր — կուրացրնելով, "Ալամութ„ բերդում, որ Մազանդարանի եւ Ղազվինի մէջտեղումն է՝ բանտարկեց եւ այնտեղ նրանք թշուառ կեանք վարեցին դեռ 30 եւ 35 տարի, մինչեւ մահն ազատեց անդութ եղբօրից:

"Ինքն Շահաբբաս երեք որդի ունէր. անդրանիկ Մահմատ Բաղը Միրզային մի օր առանց որ եւ է պատճառի, մի ակնարկով սպանելէ տուաւ. մի քանի տարուց յետոյ, դարձեալ առանց որ եւ է պատճառի, միւնակ որդուն՝ Սուլթան Մահմատ Միրզին հրամայեց կուրացընել եւ բանտարկել. մի փոքր ժամանակից յետոյ էլ՝ Խամդուլի Միրզա կրտսեր որդուն կուրացընել տուաւ։ Այժմ թոռ ընթերցողներն նրա այս երեք անօրինակ անգթութեան եւ խստասրտութեան օրինակներից եզրակացրէն թէ ինչ տեսակ բնաւորութեան տէր մարդ էր Շահաբբաս. արդեօք մի անձն, որ իր հարազատ ծնողի, առ որ պէտք է ունենայ անսահման երախտագիտութիւն, իր հարազատ եղբայրների եւ իր մէջքից դուրս եկած անմեղ փոքրահասակ զաւակների հետ, որոնք ոչ գոնութեան որ եւ է առիթ չեն տուել նրան, այսպէս անգթօրէն վարուէ, ուրեմն օտար մարդկանց վերաբերմամբ ինչպէս կը վարուէր։"

Բէհման Միրզայի ասածները հաստատում է եւ Ադամ Օլէարիուս եւ պատմում է ուելի մանրամասն, թէեւ անունների մէջ տարբերութիւն կայ։

"Շահաբբաս երեք օրինաւոր կին ունէր եւ չորս կամ հինգ հարիւր հարճ։ Այդ երեք ամուսնութիւնից երեք որդի ծնուեց, Սեֆի Միրզա, Խոդաբանդա Միրզա եւ Խամմ Գուլի Միրզա։ Վերջին երկուսին աչքերը հանել տուեց կրակով եւ փակեց նրանց Ալամութ բերդում։ Անդրանիկ որդին մի քրիստոնեայ վրացի տարկուհուց էր ծնուած. այդ իշխանը սեսնելով մի գեղեցիկ երիտասարդ Չէրքէզ աղջիկ, որ Շամախեցի մի վաճառական ընծայ էր արել իր հօրը, սիրահարուեց եւ խնդրեց թոռաւորից իրան տալ կնութեան համար։ Թա-

գաւորը, որ սիրում էր երիտասարդ իշխանին, համաձայնուեց. այդ ամուսնութիւնից ծնուեց Սան-Միրզան, որ ապա թագաւորեց Շահ Սէֆի անունով։

"Շահաբբասի խիստ, անգութ եւ բռնական թագաւորութիւնը սկսեց անտանելի դառնալ տէրութեան մեծամեծներին. նրանք մի տոմսակ ձգեցին Սէֆի Միրզայի սենեակը, որով յայտնում էին նրան, որ իրանից է կախուած հօրը յաջորդել, եւ եթէ համաձայնի կատարել իրանց յղացած դիտաւորութիւնը, նրանք հարկաւոր միջոցները կը հայթայթեն իրան։

"Սէֆի Միրզան ղղուեց այդ առաջարկութիւնից, որով կամենում էին մեղսակից անել իրան հօր սպանութեան մէջ. նա տարաւ տոմսակը հօրն ու աշխատեց հաւատացնել նրան իր անկեղծութեան ու կատարեալ հնազանդութեան մասին։ Շահաբբասը՝ ի բնէ կասկածոտ եւ անգութ, առերեւոյթ ցոյց տուեց որդուն, որ շատ գոհ է նրա վարմունքից եւ գովեց նրա որդիական սէրը. բայց այնպիսի տարտափի մէջ ընկաւ, որ այլ եւս հանգըստութիւն չունէր եւ գիշերն երեք շորս անգամ փոխում էր սենեակը, ու վերջն եկաւ այն եզրակացութեան, որ միայն որդու սպանութեամբ կարող է հանգստութիւն գտնել։ Նա որոշեց մեռցնել տալ նրան։ Այդ պաշտօնն առաջ նա յանձնեց իր զօրքերի ընդհանուր հրամանատար Կարճուխայ Խանին, որ ծագումով հայ էր, քրիստոնեայ ծնողների զաւակ, բայց փոքր ժամանակ գերի էր ընկել թաթարների ձեռքը եւ թլփատուելով, ծախուել էր Շահին. սա այնքան յարգում էր նրան, որ կանչում էր միշտ "աղա„ եւ նրան էր յանձնել ամբողջ Պարսկաստանի սպարապետութիւնը։ Սակայն պատկառելի ծերունին դրեց թուրը թագաւորի առաջ եւ հրաժարուեց, ասելով, որ աւելի

լաւ է համարում հաղար անգամ զրկուել կեանքից, քան ձեռները թաթախել իր տիրոջ որդու, դահիճ առանդի արեան մէջ։

"Շահարբան այն ժամանակ առաջարկեց սպանութիւնը Բէհբուդ բէկին, որ ընդունելով, գնաց դուռ Սէֆի Միրզային՝ երբ սա բաղնիքից դուրս էր գալիս մի ծառայի հետ, եւ բռնելով նրա ջորու սանձից, ասաց. "Էր եկ, Սէֆի Միրզա, թագաւորը, հայրդ կամենում է, որ դու մեռնես։" Այս ասելով, նա վէր բերեց նրան ջորուց. խեղճ իշխանը միացնելով ձեռները, բարձրացրնելով աչքերը դէպ ի երկինք, աղաղակեց. "ու�շ, Աստուած իմ, ինչ եմ արել այդպիսի պատժի արժանանալու համար. բայց եթէ այդպէս է հաճոյ Աստծուն, թող կատարուի նրա եւ թագաւորի կամքը։" Խանջարի երկու հարուածով Բէհբուդ բէկը սպանեց նրան եւ դիակը քաշ տալով, ձգեց մի ճահճի մօտ։ Սէֆի Միրզայի մայրը, թագուհին, լսելով որդու սպանութիւնը, այնքան վշտացաւ եւ զայրացաւ, որ վազեց թագաւորի սենեակը, ցասրեց նրա երեսին եւ սկսեց բառնեցքներով խփել. թագաւորը, արտասուքն աչքին, պատասխանեց. "Ի՞նչ անեի, ինձ խորհուրդ էին տուել, որ նա կեանքիս դէմ դաւադրութիւն է սարքում. այլ եւս ճար չկայ. արդէն եղածն եղած է։" Շահն իսկոյն զղջաց. տան օր ու գիշեր փակուեց մի մութ սենեակում, եւ շարունակ լալիս էր. մի ամբողջ տարի նա սուգ էր պահում, եւ մինչեւ կեանքի վերջը ոչ մի զարդարանք չիրեց. որդու սպանութեան տեղում նա մի ապաստանարան շինեց խեղճերի համար։ Նա թէեւ Բէհբուդ բէգին վարձատրեց, ինչպէս խոստացել էր, Ղազվինի Դարբաս կարգելով, խանութիւն տալով, բայց մտադիր եղաւ պատժել նրան՝ յանցաւոր հնազանդութեան համար։ Հէնց որ առաջին անգամ եկաւ Ղազվին, նա հրամայեց Բէհբուդ բէգին գնալ կոթել իր

սեփական ձեռքով որդու գլուխն եւ բերել իրան։ Նա հնազանդեց։ Շահաբբաթ տեսնելով նրան, որ գալիս էր իր որդու գլուխը սինու վրայ դրած, հարցրեց նրան, ինչպէս էր զգում իրան։ Բէհբուդ պատասխանեց. "Լաւ, աբբայ, ինչ ասեմ. ես տիպուտեցայ իմ սեփական ձեռքով սպանել իմ միակ զաւակս, որին աշխարհումս ամէն բանից աւելի էի սիրում. այդ ցաւից ես կը մեռնեմ։" Թագաւորը պատասխանեց. "Գնա, Բէհբուդ, հասկացիր այժմ, թէ ինչ ցաւ ես քաշեցի, երբ դու իմ որդուս սպանութեան լուրը բերիր։ Բայց մխիթարուիր, իմ եւ քո որդին այլ ևս չկան, ուրեմն այդ բանում հաւասար ես քո տիրոջ, թագաւորի հետ։"

"Շահաբբաս մեռաւ 1629ին, 63 տարեկան, 45 տարի թագաւորելուց յետոյ։ Պարսիկները յարգում են այդ թագաւորի յիշատակն եւ համարում են, որ Պարսկաստանը շատ դաբերից ի վեր այդպիսի մեծ թագաւոր չէ ունեցել։ Եւ իրաւ, եթէ նրա կեանքից հանենք անդթութեան այն օրինակները, որոնց մասին վերեւում բնեցինք, տիպուտած կը լինինք խոստովանել, որ եթէ նա չէ կարող դասուել բարի թագաւորների շարքում, գոնէ նա տեղ պէտք է գտնի այն ամենամեծ թագաւորների շարքում, որոնց մասին խօսում է պատմութիւնը։ Նա խնամուն էր եւ քաջ, նա բարձրացրեց Պարսկաստանի փառքն իր տարած մեծ յաղթութիւններովն եւ ընդարձակեց տերութեան սահմանները։ Օգստինեան կարգի կրօնաւորներն ինձ ասում էին, որ նա ամենեւին տաբերութիւն չունէր դէպ ի քրիստոնէական կրօնը, այլ ընդհակառակն նա յաճախ գալիս էր իրանց վանքը, իր հետ ճաշի էր նստեցնում, իրանց "տեր ողորման" ձգում էր վիզը եւ հառաչում էր ասելով, թէ չգիտէ, ինչ կրօն դաւանել։

"Նա շատ զգայուն էր դէպ ի աղքատների թշուառութիւնն եւ առանձին խնամք էր տանում

Նրանց վրայ. այդ պատճառով նա սովորութիւն ունէր մտնել քաղաքը՝ գիւղը՝ դպտեալ, գնալ շուկան, տեսնել չափը, կշեռը, քննել մսի եւ հացի որակութիւնն, եւ սաստիկ պատժել տալ խարդախներին։ Մի անգամ Ալրդաբիլ գալով, նա ձգել տուեց հնոցի մէջ՝ մի հարուստ հացագործաի, որ մերժել էր աղքատներին հաց ծախել, ասելով թէ պէտք է հացը Շահաբբասի եւ նրա զօրքի համար պահէր։ Նա ատում էր կաշառակեր գատաւորներին եւ սաստիկ պատժում էր նրանց։"

Շահաբբասի մասին մեծ գովասանքով խօսում է եւ Շարդէն ասպետը, որ երկու անգամ ճանապարհորդեց Պարսկաստան 1666ին եւ 1671—74ին, ուրեմն Հայերի գաղթականութիւնից 62 տարի յետոյ։ Նա ասում է, որ Շահաբբասը մի արդարադատ թագաւոր էր, որ ջանք էր անում միայն երջանիկ շինել իր ժողովուրդը, սաստիկ պատժում էր կաշառակեր կառավարիչներին, հարստահարիչներին, բայց նա եւս հաստատում է, որ սպանել տուեց իր անդրանիկ որդուն, գահաժառանգին՝ նախանձից դրդուած, թէեւ յետոյ սաստիկ փոշմանեց եւ իր յանցանքը քաւելու համար իրան գահաժառանգ կարգեց սպանուածի որդուն, իր թոռան, եւ որպէս զի իր միւս երկու որդիները չյափշտակեն գահն իրանց եղբօրորդու ձեռքից, նա կուրացրնել տուեց իր այդ երկու որդիներին, որովհետեւ պարսկական օրէնքով կոյրը չէ կարող թագաւոր լինել։

Տեսնենք այժմ ինչ պատճառներ առաջ բերին Հայերի գաղթականութիւնն. եւ այդ

քննութեան ժամանակ մեր առաջ դարձեալ երեւան կը գայ Շահաբբասի անձնաւորութիւնը։

Կան փաստեր, որոնք հաստատում են, թէ Շահաբբաս սկզբում այն դիտաւորութեամբ չեկաւ Հայաստան, որ գաղթեցրնէ բնակիչներին, այլ միայն Օսմանցիներին երկրից դուրս քշելու նպատակով եկաւ։ Հայերին Պարսկաստան գաղթեցրնելու միտքը նրա մէջ ծագեց Հայաստան գալուց յետոյ. նա կամենում էր նախ իր երկիրն ազատել Օսմանցիներից, երկրորդ վաճառականութիւնն եւ արուեստները ծաղկեցրնել. այժ չունենալով դիմադրել Օսմանցիներին, նա մտածեց աւերել երկիրը, որպէս զի նրանք այլ եւս ոչ մի հրապոյր չգտնելով՝ թողնեն հեռանան, իսկ վաճառականութիւնն եւ արուեստները ծաղկեցրնելու համար, նա շինեց բազմաթիւ քարվանսարայներ, կայարաններ. եւ ապա նրա սրատես աչքը շատ շուտով նկատեց, որ վաճառականութեան ընդունակ տարրը Հայերն են եւ նրանք կարող են իր նպատակն իրագործել. այս պատճառով նա որոշեց Հայերին տեղափոխել Պարսկաստանի խորքը։ Եթէ ենթադրենք, որ նա գաղթեցրեց Արարատեան Հայերին միայն այն նպատակով, որ Օսմանեան զօրքը պաշար եւ ուտելիք չգտնէ, ոչ եւս պատսպարան, այն ժամանակ հարկ չկար Ատրպատականի Հայերին եւս վարել Սպահան, Մազանդարան եւայլն, երբ այդ երկրից արդէն Օսմանցիները հեռացել էին։ Մեր կարծիքով, Հայերի տեղափոխութեան

գլխաւոր պատճառն այն էր, որ Շահաբբաս կամենում էր ծաղկեցընել իր երկրում վաճառականութիւնը, արուեստները, իսկ այդ գործը հնարաւոր էր միայն Հայերի ձեռքով։ Եւ այդպէս էլ եղաւ. մենք յետոյ կը տեսնենք, թէ շնորհիւ Հայերի ինչպիսի մեծ բարգաւաճման հասաւ վաճառականութիւնը Պարսկաստանում, ինչքան մեծ համբաւ ստացաւ նա համաշխարհային շուկայում. մենք կը տեսնենք, թէ ինչպէս Շահաբբասն ամէն կերպով պաշտպանում էր Հայերին, պարգեւում էր նրանց զանազան առանձնաշնորհութիւններ, ազատում էր հարկերից, ապահովում էր նրանց գոյքն. եւ այդ պաշտպանութեան շնորհիւ Հայերը շատ շուտով հարստացան եւ ձեռք ձգեցին բոլոր Պարսկաստանի Հնդկաստանի, Միջին Ասիայի վաճառականութիւնը։

Ահա ինչ է գրում Շարդէն ասպետը։

"Այս քաջ եւ իմաստուն թագաւորը նկատելով, որ Օսմանեան մեծ զօրքերը, որոնք իւրաքանչիւր տարի ասպատակում էին իր երկիրը, մասնաւորապէս իրենց մնունդը գտնում էին Հայոց հողում, գնաց եւ իր զօրքով վտարեց Երեւանի, Դաւրիժեւանի, Ջուլֆայի (Երասխի վրայ հիմնուած քաղաքներ) եւ ամբողջ Բարձր-Հայաստանի Հայերին, որպէս զի այդ երկիրը բոլորովին անմարդաբնակ շինէ, եւ տարաւ նրանց իր մայրաքաղաքը, իբրեւ ամենդունակ հպատակներ՝ առաւելապէս անելու համար, թէ Թուրքերի եւ թէ քրիստոնեաների հետ, որովհետեւ այդ Հայերը վերջիններից այնպէս ատուած չէին ինչպէս Պարսիկները, լինելով համակրօն։ Շահաբբասն այդ ժամանակ հաստատապէս

որոշել էր վաճառականութիւնը հաստատել՝ իբրեւ միակ միջոց հարստացրնելու եւ ծաղկեցրնելու իր պետութիւնը։ Դա տուեց Հայերին առաջ հող՝ բնակութիւն հաստատելու համար, յետոյ հայթայթեց նրանց կարեւոր օգնութիւնը. բայց աւելին եւս արաւ. նա տուեց ցանկացողին դրամագլուխ կամ արծաթով կամ ապրանքով, որպէս զի գնան առեւտուր անեն Եւրոպայում եւ Հնդկաստանում. եւ այդ ձեռնարկութեան մէջ թագաւորն այնպիսի հիանալի աջողութիւն ունեցաւ, որ նրա մահից յետոյ, Նոր-Ջուղայում շատ վաճառականներ կային, որ երկու միլիոն կարողութիւն ունէին»։

Մի ուրիշ տեղ, Շարդէն խօսելով Հին-Ջուղայի աւերման պատճառների մասին, ասում է։

«Շահաբաս աւերեց Ջուղան, նոյն պատճառներով, ինչ պատճառներով աւերեց Նախիջեւանն եւ Հայաստանի միւս տեղերը, որոնք մի եւ նոյն գծի վրայ էին, որպէս զի թուրք զօրքերին պաշարից զրկէ։ Այդ նուրբ քաղաքագէտն եւ մեծ հրամանատարը տեսնելով իր այժերն անհաւասար իր թշնամու հետ, եւ մտածելով այն միջոցների վրայ, որոնք կարողանային արգելել նրան վերադառնալու՝ ամէն տարի Պարսկաստան նուաճումներ անելու, եւ պահպանելու, ամենալաւ միջոցը տեսաւ, որ անապատ դարձրնէ այն երկիրները, որ գտնւում են Էրզրումի եւ Թաւրիզի մէջ տեղ, Երեւանի եւ Նախիջեւանի գծի վրայ. որ այն ճանապարհն էր, որ սովորաբար բռնում էին Ցամիկներն, եւ որտեղ նրանք ամրանում էին, որովհետեւ այդտեղ գտնում էին բաւականաչափ մնունդ իրանց զօրքի համար։ Ուստի այդ երկիրների բնակիչներին եւ արջառը տարաւ, աւերեց ամէն տեսակ շինութիւն, կրակ տուեց բոլոր դաշտերն եւ ծառերը. մինչեւ անդամ շատ

աղբիւրներ թունաւորեց, ինչպէս վկայում է պատմութիւնն, եւ աջողեց»:

Մի երրորդ տեղ ասում է:

«Շահաբաս Մեծի ժամանակ Պարսկաստանը սկսեց ծաղկել. նա մի արդարադատ թագաւոր էր եւ միայն ձգտում էր իր տերութիւնը ծաղկեցընել ու իր ժողովուրդն երջանկացընել: Նա իր տերութիւնը գտաւ խիստ յօշոտուած եւ յափշտակուած, մեծ մասամբ աղքատացած եւ կողոպտուած: Բայց դժուար է հաւատալ, թէ նրա կառավարութիւնն ինչքան բարիք բերեց երկրին:»

Ադաջ բերնիք եւ Բէհման Միրզայի վկայութիւնը:

«Երբ որ Զուլ Օղլի սպարապետի գլխատեան լուրն տարածուեց եւ նա սկսեց մտանեալ Երեւանին ու Նախիջեւանին, Շահաբաս նկատելով, որ նրան դիմադրելու ոյժ եւ կարողութիւն չունի, մտածեց քշել Պարսկաստանի խորքերն Երեւանի, Նախիջեւանի եւ նրանց շրջակայ տեղերի բնակիչներին: Այդ բնակիչների մեծ մասը փճացաւ ճանապարհին, մանաւանդ Երեւանի եւ Նախիջեւանի Հայերի մեծ բազմութիւնը հիւանդութիւնից ոչնչացաւ. նրանց քշելուց յետոյ Շահաբաս հրամայեց, որ բոլոր արտերը հրդեհեն, այրեն, որպէս զի Զուլ-Օղլու զօրքը չկարողանայ պաշար գտնել:»

Ինչպէս տեսնում ենք, Բէհման Միրզան վաճառականութեան մասին ոչ մի խօսք չէ ասում:

Ադամ Օլէարիուս եւս ոչ մի խօսք չէ ասում գաղթականութեան եւ նրա պատճառների մասին, այլ միայն հարեւանցի յիշում է, խօսելով Ջուղայի մասին, թէ «Նոր-Ջուղայի

բնակիչները քրիստոնեայ-Հայեր են, մեծ մասը վաճառական եւ շատ հարուստ, որոնց Շահարբաս փոխադրեց Մեծ-Հայաստանից։„

Նոր-Ջուղայի երկհատոր պատմութեան հեղինակ Պ. Յովհան Յարութիւնեան, ահա ինչ է ասում։

"Սա (Շահարբաս) ստացաւ զանուն քաջ աշխարհակալի եւ հանճարամտութեան, այլ յամենայնի ի նոսա առաջնորդէր իւր նրբամիտ հնարագիտութիւն։ Որպէս գործք նորա ապացուցանեն, լեալ է նա այր կրօնամիտ քաղաքագէտ՝ օգտախնդիր՝ եւ ի գործողութիւնս շրջահայեաց, եւ ըստ ժամանակին պարագային յարմարեալ է գործս իւր՝ ուշ եդեալ իւրում օգտի։ Ճանաչէր նա զազգ Հայոց՝ զգործունէութիւն, զժրաքանութիւն, զհանճարամտութիւն եւ զմտադիր հպատակութիւն նոցա, որոց վաճառականութիւնն նախանձելի արար զնոսա յաչս իւր . . . ։ Վասն որոյ վարեաց զժողովուրդս Հայոց ի Պարսկաստան, զորոք երկրագործքն իցեն եւ շինականք զգաւառս եւ զգեօղս Պարսկաստանի ծաղկեցուցցեն մշակական արհեստիւ, եւ որք երեւելիքն իցեն եւ վաճառականք՝ շահարեր տուրեւառութեամբք ճոխացուցցեն զքաղաքս իւր՝ եւ ի համբաւի հարցեն զանուն Պարսկաստանի։

"Ի վարելն նորա զժողովուրդս Հայաստանի, այո, ի գործ եդ զանդուր բռնաւորութիւնս բարբարոսական, այլ այնոքիկ եղեն ի պարտաւորութենէ գործոյն կատարման եւ ոչ ի հաճոյից իւրոց կամաց։ Իսկ մինչ ժողովուրդք Հայոց հաստատեալ եղեն ի Պարսկաստանի սահմանս, տարածեաց առ նոսա զսէր եւ զգութ իւր արքայական։„ (Հատոր I, էջ 73—74)։

Սակայն, ընդելով այդ բոլոր վկայութիւններին, խնդիրը դեռ կարօտ է լուսաբանութեան,

որովհետեւ ուուս մատենագիր Շոպէն ենթադրում է թէ Հայերի, մանաւանդ Ջուղայեցիների դէպ ի Պարսկաստան գաղթելու պատճառն ոչ թէ Շահաբբասի բռնութիւնն էր, այլ այն հանգամանքը, որ հնդկական նոր ծովային ճանապարհի գիւտով առեւտուրը դադարել էր եւ ուրիշ ուղղութիւն ստացել։ Բայց ահա Շոպէնի գրուածը.

"Շատ նշաններից, հին աւանդութիւններից եւ տեղագրութիւնների հետազօտութիւնից պարզ երեւում է, որ հին ժամանակ Հայաստանում ծաղկած էր վաճառականութիւնը։ Վաղուց դէն ձգած քաղաքների փլատակները՝ այն է Աստապատ, Արտաշատ, Վաղարշապատ, Դուին, Անու եւ այլոց՝ բերում են այս եզրակացութեան։ Բայց առանձնապէս հաստատում են այս միտքը Ջուղան եւ Ագուլիսը, որոնք չունենալով մշակելու հող՝ կարող էին պահպանել բնակիչներին միմիայն վաճառականութեամբ։

"Ջուղան 8000 դերդաստանով գանւում էր քարաժայռերի մէջ, որոնք իրանց վայրենութեամբ սարսափեցնում են եւ որոնց վրայի ցցուած ամերը աւելի նման էին թռչունի բների, քան մարդկային կացարանների։ Բայց նրանց հարստութիւնն այնքան գրաւեց Շահաբբասին, որ 1605 թուականին տեղափոխեց նրանց դէպ ի Սպահան։ Ագուլիսը մշակելու հող չունենալով իւր 10.000 դերդաստան բնակիչներին պահպանում էր վաճառականութեամբ։

"Ա.յդպիսի հետեւանքներ նոյն իսկ պատճառներից՝ նկատելի են ամենահին ժողովրդի մէջ Արեւելքում։ Աւազուտ, անբերրի եւ անջրդի առնապատները, որոնք ձգւում են Պարսից ծոցից՝ Սեւ եւ Միջերկրական ծովերի արանքում, շատ դարեր

Քրիստոսից առաջ, ծածկուած էին ծաղկեալ քաղաքներով, որոնց դեղեցիկ փլատակները՝ հակառակ իրանց ամայի շրջակայքին՝ զարմացնում են այժմ։ Մեռեալ ծովի, Եփրատի եւ Պարսից ծոցի մէջերքում պատնեշուել են աւելի քան 30 ընդարձակ քաղաքների հեռաբեր եւ այնպիսի տեղերում, ուր այժմ թափառական արաբը հազիւ թէ գտնում է ուտելիք իւր թշուառ հօտի համար։ Դիւթական այժը, որ արտադրել էր այս քաղաքները, Հնդկաստանի վաճառականութիւնն էր Եւրոպայի հետ՝ Եփրատի վրայով։ Իսկ երբ բացուեց այլ ճանապարհ, այդ քաղաքներն իրանք իրանց ոչնչացան։

"Երեւի "Բաբէյլսոյ գլխի" գիւան եւ Հնդկական վաճառականութեան նոր ծովային ճանապարհի ուղղութիւնն ունէին աւելի ազդեցութիւն Հայոց թագաւորութեան անկման վրայ, քան մահմէդականների եւ դրացի գիշատիչ ազգերի բոլոր ապատակութիւնները։ Արանից յետոյ, հայրենիքում առեւտուրից զրկուած հայ կապիտալիստները՝ հանգամանքից ստիպուած՝ պէտք է գաղթէին Կ. Պոլիս, Պարսկաստան, Հնդկաստան, Ալէքսանդրիա եւ այլն։ Արանց հեռանալով, Հայաստանի վաճառականութիւնը կորցրեց իր նշանակութիւնը։ Գ--ոյ -ս- հանգամանքն է- ալ շ-հ-բ-բ-ի կ-մ-կ-ան-ութիւնը -ոգեղէց ջ-ա-ալ-ոյնիրին գ-ալիլ դեղ է Ս-գ-հ-ն։"

Թէեւ գժուար է ընդունել Շոպէնի այս կարծիքը, քանի որ Ռաբել վարդապետ, Շարդէն, Օլէարիուս, Բէհման-Միրզա խիստ բացայայտ կերպով աւանդում են, որ Շահաբաս բռնութեամբ գաղթեցրեց Ջուղայի բնակիչներին, բայց եւ այնպէս գուցէ Շոպէնի առաջ բերած հանգամանքն ազդեցութիւն է ունեցել

ջուզայի հարուստ հայ վաճառականների կամ խոջաների վրայ։

Սակայն եւրոպական ուրիշ գիտնականներ, օրինակ Կարլ Ռիտտեր, Դուպրէ, Ջ. Մալքոլմ, Ուզելէյ եւ այլք՝ ուրիշ մեկնութիւն են տալիս 1605ի գաղթականութեան եւ այդ պարագայում մտնենում են Ռոսքել վարդապետի ասածին։ Ահա ինչ է ասում Կարլ Ռիտտեր.

"Թուրքերի տիրապետութեան ժամանակ Հայաստանի բնակիչները վերսին պէտք է կրէին այն բոլոր ցաւերը, որոնք կրում է մի հպատակ սահմանակից երկիր երկու մեծ թշնամի տերութիւնների միջեւ։ Սուֆիների կամ Սէֆէվիների նոր դրդիչներն հոգեւորականները շարունակում էր մարդկանց աւերում, գերութիւններն եւ բռնի Հայաստանից ի Պարսկաստան գաղթեցնելը գործադրել, որոնք սկսուել էին Սասանեանների ժամանակ։ Հենց որ Շահաբբաս Ա. համոզուեց, որ չէ կարողանալու Հայաստանի գաւառներն Օսմանեան տիրապետութիւնից պաշտպանել, նա վճռեց թողնել իր թշնամիներին միայն դատարկ երկիրը։ Աւելի քան 24.000 հայ ընտանիք բռնութեամբ վարեց եւ պարսկական թագաւորութեան զանազան գաւառներում հաստատեց, եւ այնտեղ շատերը խառնուելով մահմեդականների հետ, մոռացան իրանց լեզուն, կրօնն եւ ծագումը[1]։"

Նոյնը մի այլ տեղ ասում է[2].

"Շահաբբաս իր դրացի տաճիկների դէմ վարած պատերազմի միջի գործ դրաւ այն արեւելեան

---

1 Die Erdkunde von Carl Ritter, Band VII, Berlin 1843, էջ 601։

2 Նոյն Band VI, էջ 50։

քաղաքականութիւնը, որ սովորական էր, այն է Հայաստանի սահմանակից գաւառներն ամբողջապէս աւերել եւ նոցա բնակիչներին վարել։ Նա բնակեցրեց նրանց իր տէրութեան ուրիշ գաւառների մէջ, մանաւանդ Ռեշտում՝ Գիլանի մէջ եւ Սպահանում։ Սակայն միեւնոյն ժամանակ ի նկատի ունենալով նրանց ջանասիրութիւնը, խնայողութիւնն եւ առեւտրական ոգին, նա առաջ վարեց նրանց ջանասիրական ձեռնարկութիւնները, որոնց մէջ գործ էր դնում եւ իր սեպհական դրամագլուխը, դէպ ի հնդկական վաճառականութիւնը, դէպ ի բամբակի առեւտուրը, դէպ ի մանուածոյ թելերի եւ մետաքսի վաճառականութիւնը։»

Մեր այս բերած վկայութիւններից կարելի է եզրակացնել, որ 1. Շահաբբաս իբրեւ անհատ՝ վերին աստիճանի բռնակալ, անգութ եւ նախանձոտ մարդ է եղել, ինչպէս արեւելքի բոլոր հռչակաւոր բռնակալները. 2. Իբրեւ թագաւոր եւ վարչական անձն՝ նա խիստ Ներքամիտ քաղաքագէտ, հանճարեղ կառավարիչ, ժողովրդասէր եւ իւր երկրի բարգաւաճման ու հզօրութեան նախանձախնդիր անձն է եղել. 3. Հայերի գաղթականութիւնը՝ կատարուել է բռնի կերպով եւ նրա գլխաւոր դրդիչ պատճառն եղել է Շահաբբասի ցանկութիւնը ծաղկեցնել իւր երկիրն ու մասամբ Օսմանցիների արշաւանքն անհնարին դարձնել։

Մեզ հարկաւոր է այժմ իմանալ, թէ գաղթական Հայերին որտեղ բնակեցրեց Շահաբբասն եւ որքան էր գաղթեցրած Հայերի թիւը։ Պէտք է նկատենք առաջ, որ ինչպէս ցոյց տուինք մեր պատմութեան ընթացքում եւ ինչ-

պէս որոշ կերպով յայտնում է Առաքել Վարդապետը, Հայերը գաղթեցին կամ նրանց բռնի գաղթեցրեց Շահաբբաս Արարատեան աշխարհից եւ Արդպատականից մի քանի անգամ, մինչեւ ութը անգամ։ Բաց ի արդէն մեր յիշած տարիներից, 1608ին եւս գաղթականների մի նոր հատուած բերուեց Պարսկաստան։ Այս եւս չպէտք է մոռանալ, որ Հայերի հետ Շահաբբաս գաղթեցրեց եւ շատ Վրացիներ եւ Հրեաներ։

Գաղթականներին Երասխ գետից անցկացնելուց յետոյ՝ Շահաբբաս ընդհանուր վերակացու կարգեց նրանց վերայ Էլեաղ Սուլթան անունով մի պաշտօնեայի, որ քշեց գաղթականներին շատ դժուար ճանապարհներով. շուտով ձմեռը վրայ հասաւ եւ որովհետեւ առաջ գնալ անհնարին էր, ուստի ձմերեցին Ղարաղաղում Խալխալ, Անար ու Մուշկուն գաւառներում։

Երբ գարունը բացուեց՝ նոր սկսուեց միաժամանակ կանգ առնելով եւ հանգստանալով Թաւրիզում, որի հայ ժողովուրդն եւս միացրին ընդհանուր բանակի հետ. վերակացուները քշեցին բանակն եւ բերին հասցրին Ղազվին, որտեղից արդէն սկսեցին բաժանել հատուածների եւ բնակեցնել զանազան քաղաքներում ու գաւառներում. մի մեծ հատուած եւս Շահաբբաս ուղարկեց եւ բնակեցրեց Գիլանի ու Մազանդարանի նահանգներում եւ, որ զարմանալին է, մի մասն ուղարկեց Դարբանդ՝ Բէշտի ու Անզալիի վրայով։ Արդեօք մինչեւ այդ

ժամանակ Դարբանդում կային Հայեր, թէ ոչ՝ մեզ յայտնի չէ, բայց գաղթականութիւնից յետոյ այդ քաղաքում Հայերի մեծ բազմութիւն կար։ Մեծամասնութիւնը, ի հարկէ, Շահաբբաս ուղարկեց Սպահանի նահանգը։ Քաղաքացիներին բնակեցրեց Սպահանում, Քեաշանում, Ղազվինում, իսկ գաւառացիներին՝ Սպահանի շրջակայ աւաններում եւ գիւղերում։ Ահա այն քաղաքները, գաւառներն եւ գլխաւոր գիւղերը, ուր բնակեցրին Հայերին. — Ղազվին, Քեաշան, Սպահան քաղաքները։ Սպահան նահանգի հետեւեալ գաւառները — Ընջան, Ենջան, Գանդիման, Ջղախոռ, Փերիա, Բուրվար, Քեաղազ, Քեամարա, Գեափլա, Քեարվանդ եւ Ղարաղան։ Ընջան եւ Ենջան գաւառները Սպահանից 4—5 փարսախով հեռու են եւ բաղկացած են, առաջինը՝ 7, երկրորդը 10 գիւղերից. Գանդիման եւ Ջղախոռ գաւառները հեռու են 14 փարսախով ու բաղկացած են 5 գիւղերից. Փերիան 22 գիւղ ունի, իսկ Բուրվարը՝ նոյնպէս 22։ Վերոյիշեալ բոլոր 66 գիւղերի անուններն են։ — Մշաղբուր, Փիդուն, Ջաղուն, Քափաչան, Բանդարի, Քուրուջ եւ Մէմիդ. — Փարթուն, Ջուդուն, Ջուզուն, Քիլիսուն, Քելարդ, Բուրուզարդ, Սէմնուն, Խուանապէք, Միտագիւն եւ Քեալէ. — Ամմատաբադ, Սիրաք, Գիշնիգան, Լիւսիան, Ջիրիգիան, Ֆանդիգան. — Հազարջրիբ, Մէդանակ, Քընստան, Ազէայ, Ցաշքեալան, Բոլբան, Խունկ, Խնկիրանայ, Շահբուայ, Շուրիշկան, Միլագերդ,

Թանկի Հայվայի, Խոյգան, Մուղան, Բէկուջան, Սընկրոդ, Մոքէլի գիւղ, Սկանդարի ղուղայ, Թաշբուլաղ, Ներքին Խոյգան, Բէրկէր եւ Խանտարիա. — Զամբասու, Ջաջուն, Զէշմէ-փառայ, Քուարդայ, Ընաւշ, Վերին-Զարբաղ, Ներքին Զարբաղ, Ջղագարկ, Բօրքօք, Ղասումավայ, Ջանխօլ, Փարմիղան, Շավրավայ, Թաբքու, Փառչիս, Փահրոյ, Խոսրովաբադ, Դէյնով, Գուլբրհար, Հմայա, Մէվրստան, Ազգոլ։ — Մնացած գաւառների գիւղերի մասին տեղեկութիւն չէ մնացել։ Արդեօք այդ բոլոր 66 գիւղերը պարսիկների գիւղեր էին, որտեղից Շահաբբասը քշեց Պարսիկներին՝ Հայերին տալու համար, թէ Հայերը իրանք նոր հիմնեցին՝ այդ մասին եւս պատմութիւնը լռում է։ Այդ գիւղերից շատերը եկեղեցի ունէին. Նրանց մի մասի մէջ մինչեւ այսօր եւս բնակւում են Հայեր, իսկ Ընջանի եւ Ընջանի գաւառների գիւղերը բոլորովին դատարկուած են այսօր Հայերից եւ Պարսիկներ են բնակւում նրանց մէջ. մի քանի գիւղերում եկեղեցիներիաւերակներն դեռ մնում են։

Սպահան քաղաքի մէջ Հայերին բնակեցրին զանազան թաղերում։ Երեւանցիներին եւ Գասկեցիներին բնակեցրին Նարընղալայի մօտ Թրսկան թաղում. Թավրիզցիներին եւ Դաշտեցիներին բնակեցրին Շամնաբադ թաղում, ոմանց՝ Փաղալայ թաղում, որի մի փողոցն մինչեւ այսօր եւս կոչւում է "Խիաբանը Արամինա" (փողոց Հայոց) եւ որի եկեղեցին այժմ մզկիթի է վերածուած։ Մի քանի տներ էլ բնակեցրին խառն

Պարսիկների հետ Խորասկան եւ Շխսաբան թաղերում։ Այդ բոլոր թաղերը Սպահանի կամ, ինչպէս մեր պատմագիրները սովոր են ասել, "Շօշի, կենդրոնական թաղերն են։ Այդտեղ Հայերը տներ եւ եկեղեցիներ շինեցին, ինչպէս եւ Ամենափրկիչ անունով մի մեծ եկեղեցի եւ մնացին 51 տարի, բայց Շահաբբաս Բ.ի կամ Փաքրի թագաւորութեան ժամանակ նրանց հանեցին Սպահանի միջից եւ Նոր-Ջուղայի մօտ Մարնուն կոչուած տեղում նոր բնակավայր տուին նրանց 1650 թուին։ Մարնունում Հայերը շինեցին նոր գեղեցիկ տներ, այգիներ, բուրաստաններ, եկեղեցիներ։ Սպահանից հանելու պատճառն այն էր, որ Հայերը գինի եւ օղի էին ծախում եւ Պարսիկների մէջ արբեցողութիւնը սկսել էր սաստիկ տարածուել։

Ջուղայեցի գաղթականներին Շահաբբաս բոլորովին առանձին բնակեցրեց Սպահանից դուրս Զանդարուդ գետի հարաւակողմում, այն տեղում, որ այժմ կոչւում է Նոր-Ջուղայ։ Գետնի մի մասն Շահն ընծայեց Հայերին, իսկ մի մասն եւս Հայերն իրանք գնեցին։ Եօթը տարուց յետոյ, 1612ին, Շահաբբասը Նոր-Ջուղայի գետնի համար հրովարտակ շնորհեց Հայերին։ Նոր-Ջուղայի հիմնարկութեան մասին մի քիչ յետոյ կը խօսենք մանրամասն, առ այժմ պէտք է ասենք, որ Շահաբբաս մի առանձին խնամքով եւ հոգացողութեամբ տեղաւորեց Ջուղայեցիներին եւ ամէն կերպ օգնութիւն ու դիւրութիւններ ընծայեց նրանց։

Մաղանդարանի եւ Գիլանի Հայերի հատուածի մասին շատ քիչ տեղեկութիւններ ունենք։ Առաքել վարդապետ ոչինչ չէ խօսում պարզապէս, բայց Շարդէն ասպետի վկայութիւնը բաւական լոյս է սփռում խնդրի վրայ. բացի դրանից կաթուղիկոսական զանազան կոնդակներ եւս ապացուցանում են, որ այդ երկիրներում եւս մեծ թուով Հայ գաղթականներ են բնակեցրել, բայց նրանք շուտով անհետացել են։ Ահա ինչ է գրում Շարդէն։

"Մաղանդարանը մի շատ պտղաբեր երկիր է, բայց օդն շատ խոնաւ, տաք ու անառողջ։ Շահաբբաս Մեծից առաջ այդ երկիրն կատարեալ անապատ էր, բայց այդ մեծ աշխարհակալ եւ քաղաքագէտ իշխանը տեղափոխեց Հայաստանից եւ Վրաստանից այդ երկրի մէջ մի հիանալի ժողովուրդ թէ՛ այն պատճառով, որ այդ երկիրները աւերուեն, որպէս զի թիւրքերը չկարողանան ամէն տարի գալ եւ իր հետ պատերազմել եւ թէ՛ այն պատճառով, որ Մաղանդարանը մեծ յարմարութիւններ է ներկայացնում շերամի մշակութեան համար։ Բաց ի դրանից նրա մայրը Մաղանդարանցի լինելով, յորդորում էր որդուն շէնացնել այդ երկիրը։ Նա փոխադրեց 30.000 ընտանի, կարծելով, որ այդ տեղ շատ կ'աճեն եւ կը բազմանան, "որովհետեւ — ասում էր նա — Մազանդարանը երկրաներին համար շատ յարմար երկիր է. այդ տեղ քիչն է խոնաւ եւ, քիչ երկրներին համար անբաւական է քիչն է խոնաւ։ Նրանց երբեմն են ձուլվում քիչ, նրանց երբեմն են անում Մոսկվիչներ՝ երանց եղբայրներին հետ կապուած ձուլվելու։"

"Շահաբբաս այդ երկրում քաղաքներ եւ շքեղ պալատներ շինեց, որպէս զի խրախուսի այդ

ժողովրդին, բայց օգի վնասակարութիւնը այնքան հակառակեց նրա ջանքերին եւ նպատակներին, որ երբ եւ Մազանդարան գնացի արքունիքի հետ 40 տարի առաջ[1], քրիստոնեաների թիւն իջել էր 400 ընտանիքի առաջուայ 30.000ի տեղ, ինչպէս հաստատում էին ինձ։ Գարհարդի եպիսկոպոսն, որ մի բարի ծերունի հայ քահանայ էր, եւ լաւ ճանաչում էր երկիրը, ինձ ասում էր յաճախ, որ եթէ չլինէր երկրի արգասաւորութիւնը, որ քաշում է դէպ իրան շրջակայ ժողովրդներին, նա բոլորովին անապատ կը մնար, այնքան օգը վնասակար է։ Մազանդարանի օգի վնասակարութիւնը այնքան յայտնի է, որ երբ թագաւորը որեւէ մի պաշտօնեայի նշանակում է այդ նահանգի պեռ, կամ Գիլանի՝ նրա ամենահարուստ մասի կառավարիչ, ժողովուրդը ասում է. "արդեօք սպանութիւն կամ գողութիւն է գործել, որ նրան ուղարկում են կառավարել Գիլանը։" —

Արդեօք բոլոր 30.000 քրիստոնեայ ընտանիքը Հայեր էին, թէ՝ կային նաեւ Վրացիներ, Շարդէն չէ որոշում. հաւանական է, որ Վրացիներ եւս լինէին, բայց, մեծամասնութիւնը, անկասկած Հայեր էին։ Զինք կարծում, որ 30 տարուայ ընթացքում 30.000 ընտանիքը, ուրեմն մօտ 200.000 հոգի, վատ օդից եւ հիւանդութիւններից ոչնչացած լինեն եւ նրանց թիւը հասած լինի 400 ընտանիքի. անշուշտ, շատերը նորից վերադարձել են իրանց տեղերը կամ փոխադրուել այլ տեղեր։ Բաց ի Շարդէնի վկայութիւնից կան եւ եպիսկոպոսական ու կա-

---

1 Ուրեմն հայերի փոխադրութիւնից մօտ 30 տարի յետոյ՝ 1632—33 ին։

թողեկոսական կոնդակներ, որոնք ցոյց են տալիս թէ Մազանդարանում Հայերի բազմութիւն է եղել։ Մովսէս եպիսկոպոս իր մի կոնդակի մէջ [1] գրում է.

"Շնորհք առաքելական եւ նամակ պահպանողական ի վերայ մերազուն եւ Հայկատոհմ համայնից ժողովրդականաց, որք էք ի Քաշան, ի Ղազվին, ի Գիլան, յԱնզալի, ի Դարբանդ եւ որք շուրջ զդոքաք մեծամեծ եւ մանրամասնեայ գիւղաբայք իցեն ...»։

Սրանից հետեւում է, որ մինչեւ անցեալ դարի գոնէ առաջին քառորդը Գիլանում Հայերի բազմութիւն կար, ուրեմն Շարդէնի ասածը, թէ իր ճանապարհորդութեան ժամանակ 1632ին 400 տուն հայ էր մնացել Մազանդարանում, հաւանական չէ, քանի որ գրէթէ 100 տարուց յետոյ "մեծամեծ եւ մանրամասն գիւղաբայքի» խօսք է լինում։

Բայց կայ եւ մի ուրիշ հանգամանք, որ այժ է տալիս Շարդէնի խօսքին։ Ինչպէս յայտնի է, Ռուսաց Մեծն Պետրոս կայսրը մեծ ջանքեր գործ դրեց գրաւել այսրկասպեան երկիրները— Բագուն, Մազանդարանը, Գիլանը, Դարբանդը։ 1723թ. սեպտ. 12ին Պարսից Թահմասբ. Շահի հետ կնքած դաշնագրի զօրութեամբ Մեծն Պետրոսը հասաւ իր նպատակին եւ այնուհետեւ, ինչպէս վկայում է Սօլովիեվ պատմագիրը, նա ամէն կերպ ստիպում էր, որ Հայերին

1 Մովսէս եպիսկոպոս Նոր-Ջուղայի վեցերորդ առաջնորդը՝ 1706—1725 թ.։

համոզեն գնալ բնակութիւն հաստատել Մաղանդարանում եւ Գիլանում, սակայն Հայերը "լսել անգամ չէին կամենում այդ մասին"։ Դրանից պէտք է ուրեմն հետեւեցնենք, որ Մաղանդարանը եւ Գիլանը գրաւելու բոպէին, 1723 ին, այդ երկրներում Հայեր չկային, բայց այն ժամանակ ինչով բացատրել Մովսէս առաջնորդի կոնդակը։ Եթէ ենթադրենք որ այդ կոնդակը իբրեւ օրհնութեան կոնդակ գրուել է 1706 ին, երբ նա առաջնորդ ընտրուեց եւ միեւնոյն ժամանակ ընդունենք, որ 1723 ին երբ Մեծն Պետրոս գրաւեց Մաղանդարանն եւ Գիլանը, այդ երկրներում Հայ չկար, պէտք է ուրեմն գալ այն եզրակացութեան, որ այդպիսի մի կարճ ժամանակամիջոցում (1706—1723 թ.) Հայերը գաղթել եւ տեղաւորուել էին ուրիշ տեղեր կամ ոչնչացել էին։ Այն հանգամանքը որ այսօր եւս Մաղանդարանի եւ Գիլանի զանազան տեղերում — Անզալիում, Բաշտում, Աստարաբատում, Մեշեդիսարում, Քանարա գեղում Հայեր են գտնում, չէ կարող որեւէ նշանակութիւն ունենալ, որովհետեւ այդ Հայերը նոր ժամանակի եկուորներ են Անդրկովկասի զանազան տեղերից — Ագուլիսից, Ղարաբաղից՝ վաճառականութեան նպատակով։

Ղազվին քաղաքի եւ նրա Հայերի մասին Շարդէն գրում է 1673 ին. "Ղազվինը բաղկացած է 12.000 տներից, նա վեց հազար աշտարակ ունի եւ 100.000 բնակիչ, որոնց մէջ պէտք է հաշուել 40 քրիստոնեայ եւ 100 հրեայ բնտանիք, ամէնքը շատ աղքատ։ Եւրոպական աշխարհագիրներից

շատերը ասում են, որ Ղազվինը նախկին Արշակաւանն է (Arsaciè), Պարթեւների առաջին կայսր Արշակի անունով, որ նա Ցղյների անուանած Բաձէան (Ragea) է, որ Ս. Գրքի մէջ կոչուած է Մեդիայի Բաձէան։ Ոմանք այն կարծիքի են, որ նա Սարաբոնի Կաղբիրան (Cazbira) է։ Ասմբէգ, մի հայ հեղինակ, բոլորովին ուրիշ կարծիք ունի. նա ասում է, որ այդ քաղաքը ստացել է իր կոչումը Ղազրին թագաւորի անունից։»

Թէ ո՞վ է այդ հայ հեղինակը, Ասմբէգը, եւ ե՞րբ է գրել, դժբախտաբար ոչ մի տեղեկութիւն չունենք այդ մասին։

Մնում է այժմ լուծելու մի գլխաւոր խնդիր. ո՞րքան էր տարագրեալների կամ գաղթականների թիւը։ Մենք տեսանք, որ ընդհանուր գաղթականութիւնից (1605 թ.) առաջ եւ յետոյ Շահաբբասը մի քանի անգամ, թէեւ մանր հատուածներով, գաղթեցրեց Հայերին. տեսանք նոյնպէս, որ գաղթականների ընդհանուր բանակը չուեցնելուց յետոյ, Շահաբբաս խմանալով, որ շատերը թագնուել են անտառներում, քարայրներում, լեռների կիրճերում, զրբ ուղարկեց նրանց նոյնպէս գաղթեցնելու կամ կոտորելու։ Հայ պատմագիրներից ոչ ոք որոշակի չէ յայտնում գաղթեցրած ժողովրդի թիւն. չկան այդ մասին տեղեկութիւններ եւ Նոր-Ջուղայի Ամենափրկիչ վանքի ձեռագիր յիշատակարաններում, ինչպէս յայտնում է Ց. Տէր Յովհաննեսը։ Առաքել վարդապետը յայտնում է միայն առաջին գաղթականների, Արծկէ քաղաքից գերուածների թիւն — 23.000

հոգի, իսկ ընդհանուր գաղթականութեան թուի մասին՝ ինչպէս վերեւում տեսանք, ասում է թէ "տարագրեալ ժողովրդի բանակի լայնութիւնն էր Գառնու լեռների ստորոտից մինչեւ Երասխ գետի եզերը, իսկ երկարութիւնն, մի օրայ ճանապարհ, իսկ ուրիշների գրելով 5 օրայ ճանապարհ"։

Շարդէն եւս ոչինչ չէ խօսում գաղթականների թուի մասին, չէ յայտնում ոչինչ եւ այդ մեծ գաղթականութեան ականատես վկայ Անտոն եպիսկոպոս Գօվէան, որ մանրամասն նկարագրում է գաղթականների կրած ծանր աղէտները։ Տեղեկութիւն ունենք միայն Հինջուղայի բնակիչների թուի մասին, որ Շարդէնի ասելով, 4000, իսկ Շոպէնի ասելով 8000 տուն էր։ Եւրոպական յետագայ պատմագիրները, օրինակ՝ Կ. Ռիտտեր՝ ընդհանրապէս 24.000 ընտանիք են հաշուում Հայաստանից Պարսկաստան գաղթեցրած Հայերի թիւն։ Եթէ ամէն մի ընտանիք միջին թուով 10 հոգուց բաղկացած հաշուենք, այն ժամանակ կ'ունենաք 240—250 հազար հոգի։ Բայց, տարակոյս չկայ, որ գաղթականների թիւն աւելի մեծ էր, ի նկատի ունենալով այն ահագին տարածութիւնը, որտեղից քշուեցին Հայերը։ Այս օրերս հրատարակուած մի նոր եւ նշանաւոր աշխատութիւն, որի հեղինակն է Կ. Եղեան, յայտնում է, թէ 60 հազար ընտանիք գաղթեցրեց Շահաբբասը, բայց այդ 60 հազարից միայն 20 հազար ընտանիք հասան Պարսկաստան, մնացածը ոչնչա-

ցին Ճանապարհին սովածութիւնից եւ ցրտից։[1] Ի՞նչ աղբիւրներից է քաղել Պ. Եղեանը այդ տեղեկութիւնը, դժբախտաբար, չէ բացատրուած, բայց այդ թիւն անհաւանական է թւում մեզ, որովհետեւ 60.000 ընտանիքը նշանակում է 600.000 հոգի ու դժուար թէ Ճանապարհին, եթէ կոտորուած լինէին քաղցից ու ցրտից 40.000 ընտանիք, կամ 400.000 հոգի, այդ ահագին թուի մասին պատմագիրները լռէին։ Պէտք է ենթադրել, եւ այդ շատ հաւանական ենթադրութիւն է, որ ոչքան էլ Շահաբասը միջոցներ գործ դրեց դատարկելու Արարատեան երկիրը Հայերից, բայց դարձեալ շատերին յաջողուեց մնալ իրանց տեղերում եւ շատերն էլ գուցէ Ճանապարհից փախչելով վերադարձան իրանց նախկին տեղերը, որովհետեւ Ադամ Օլէարիուս, որ այցելեց Շամախին 1636 թուին, յայտնում է, որ այդ քաղաքում շատ Հայեր կային, եպիսկոպոս ունէին եւ նկարագրում է ՋՕՐՍՀՆԵԱՑ հանդէսը, որ Հայերը, Շամախու խանի հրամանով կատարեցին 1637 թուին յունվարի 6ին, գետի վրայ, Օլէարիուսի եւ Մոսկուայի դեսպան Ալէքսէյ Սավինովիչի ներկայութեամբ։ Նոյնպէս Շարդէն Թիֆլիսից սկսած մինչեւ Թավրէզ ամէն տեղ ցոյց է տալիս Հայերի մեծ բազմութիւն։

Ջուղայեցի Ստեփանոս քահանայ պատմաբանը, որ գրել է իր պատմութիւնը սկսած

---

1 Г. Я. Езовъ, Сношенія Петра Великаго съ армянскимъ народомъ, С. Петербургъ 1898, էջ V.

Հայոց 1114 թուականից (1665 թուին) Նոր-Ջուղայի բնակիչների թիւն յայտնում է 12.000 տուն կամ մօտ 150.000 բնակիչ, բայց այդ թիւն, ի հարկէ, միայն Նոր-Ջուղային չէ վերաբերում, այլ Սպահանում ու նրա մօտակայքում գտնուած բոլոր Հայերին. անկարելի է, որ միայն Նոր-Ջուղայում այդքան բնակիչներ լինէին, որովհետեւ Շարդէնը, որ նկարագրել է Նոր-Ջուղան գրեթէ նոյն ժամանակ (1665ին), ասում է, որ գաղթականութիւնից 6 տարի յետոյ (1611ին) բնակիչների թիւն հասաւ 5000ի։ Ուրեմն, եթէ 50—55 տարուայ ընթացքում բնակիչների թիւն դարձել է 12.000 տուն, պարզ է, որ դրա մէջ հաշուում են եւ Սպահանի ու շրջակայ գիւղերի Հայերին։ Մենք գիտենք եւրոպացի ուրիշ պատմագիրներից, որ Նոր-Ջուղան իր ամենածաղկած դրութեան ժամանակ 12.000 հոգի բնակիչ է ունեցել։ Միւս կողմից մենք գիտենք, որ գաղթականների էկէն հաղիւ հասաւ Պարսկաստան. այդ մասին բացի զանազան ստոյգ տեղեկութիւններից ունենք եւ մի ժամանակակից ձեռագիր յիշատակարան՝ Նոր-Ջուղայի Ս. Մինաս եկեղեցում։

"Եւ եթէ զմտաւ ածեմք՝ քան զկէսն մահուանէ ի կեանս փոխեցան առ Աստուած, ոմանք ջրախեղդ մեռան՝ ոմանք ի ցրտոյ պակասեցան եւ ոմանք ազգի ազգի մահուամբ առ Քրիստոս փոխեցան"[1]։

---

1 Պատմ. Նոր-Ջուղայու Գ. Թ. Տէր-Գոհանեան, Նոր-Ջուղա, 1880թ.

Այս տեղեկութիւնների հիման վրայ, կարող ենք մօտաւորապէս ճշդել գաղթականների թիւը։ Եթէ ընդունենք Նոր-Ջուղայի, Սպահանի եւ մօտակայ գիւղերում բնակուած Հայերի թիւն 150.000, ընդունենք որ 50.000 Հայեր էլ բնակեցուել են միւս քաղաքներում եւ հեռաւոր գիւղերում, ինչպէս եւ Մազանդարանում եւ Գիլանում, ուրեմն 200.000 Հայ պէտք է համարել բուն Պարսկաստան կամ Սպահանի նահանգն հասած։ Հաշուենք 200.000 հոգի էլ ճանապարհին փչացած եւ կոտրված չուի ժամանակ, ուրեմն Հայաստանից քշած Հայերի ընդհանուր թիւն լինում է 400.000։ Մեզ կարող են առարկել, որ Շարդէն միայն Մազանդարան եւ Գիլան ուղարկուածների թիւն 30.000 ընտանիք է հաշուում, բայց Շարդէն ասում է. "30.000 քրիստոնէայ ընտանիք,, որից պէտք է եզրակացնել, որ բոլորը Հայեր չէին, այլ նաեւ Վրացիներ եւ մենք գիտենք Վրաց պատմութիւնից, որ Շահաբաս նոյնպէս Վրացիների մեծ բազմութիւն քշեց Պարսկաստան։ Շարդէն ասում է, որ Շահաբաս Կախեթիայից հանեց 80 հազար ընտանիք եւ բնակեցրեց Պարսկաստանի զանազան տեղերում։

Ուրեմն, Հայաստանից քշած եւ վտարած Հայերի թիւն առ առաւելն պէտք է ընդունել 4—500.000։

ԱԶԳԱՅԻՆ ՄԱՏԵՆԱԳԻՐՔ

Ա. Գալէմքեարեան Հ. Գր. Վ., Ուսումնասիրութիւնք Լեհահայոց դատաստանագրոն: 1. Պիշոֆ, Լեհահայոց հին իրաւունքը: 2. Գոլէր, Իրաւունք Հայոց: 1890: Էջ 85+59: Փր. 1.25

Բ. Մէնէվիշեան Հ. Գ., Ազգաբանութիւն ազնվազարմին Տիզանց: 1880: Էջ 50: Փր. 1.—

Գ. Տաշեան Հ. Յ., Ազաթանգեղոս առ Դէորգայ ասորի եպիսկոպոսին եւ ուսումնասիրութիւն Ազաթանգեղեայ գրոց: 1891: Էջ ԺԱ+159: Փր. 1.25

Դ. Տաճատեան Դ., Արեւելեան Հայք ի Պուրգուինա: Թրգմ. Հ. Գ. Վ. Գալէմքեարեան: 1891: Էջ 79: Փր. —.85

Ե. Տաշեան Հ. Յ. Վ., Ուսումնասիրութիւնք Ստոյնկալիստենեայ Վարուց Աղեքսանդրի: 1892: Էջ Դ+272: Փր. 3.—

Զ. Տրվեն Ա. եւ Գ. Փիսոն, Ուղեւորութիւն ի Փոքր Ասիա: Թրգմ. Հ. Յ. Վ. Տաշեան: 1892: Էջ 82: Փր. 1.—

Է. Մառ Ն., Ամանային ուղեւորութիւնից դէպ ի Հայս: Թրգմ. Ռ. Անուրեան: 1892: Էջ 89: Փր. 1.25

Ը. Կարրիէր Ա., Նորագոյն աղբերք Մովսիսի Խորենացւոյ: Հտ. Ա.: Թրգմ. Հ. Յ. Վ. Տաշեան: 1893: Էջ Ժ+51: Փր. 1.—

Թ. Գալէմքեարեան Հ. Գ. Վ., Պատմութիւն հայ լրագրութեան: Հտ. Ա. 1794—1860: (1 լուսանկարով:) 1893: Էջ 232: Փր. 2.50

Ժ. Կոնիբէիր Փր. Կ., Քննութիւնք գրոց Դաւթի Անյաղթի: Թրգմ. եւ յաւ. Հ. Յ. Վ. Տաշեան: 1893: Էջ Ը+92: Փր. 1.25

ԺԱ. Գովրիկեան Հ. Գ. Վ., Հայր յեղիսաբեթուպոլիս Դրանսիլուանիոյ 1680—1779: (1 զընկատիպ.) 1893: Էջ Ժ+533: Գր. 4.50

ԺԲ. Խաչատրեան Գր., Զենոբ Գլակ, Համեմատական ուսումնասիրութիւն: 1893: Էջ Զ+78: Գր. 1.—

ԺԳ. Տէր-Մովսիսեան Փ., Հայ զիւղական տունը: Թրգմ. Հ. Բ. Վ. Պիէգիկճեանն: (6 տիտկ. 55 պտկ.:) 1894: Էջ Ը+103: Գր. 2.—

ԺԴ. Նադրիեր Ա., Նորագոյն աղբերք Մովսիսի Խորենացւոյ. Հտր. Բ. կամ Բաւելուած: Թրգմ. Հ. Բ. Վ. Տաշեան: 1894: 8° Էջ ԺԱ+43: Գր. 1.—

ԺԵ. Տաշեան Հ. Բ. Վ., Ուսումնասիրութիւնք հայերէն փոխառեալ բառից: Ա.՝ Հ. Հիւպշման, Սեմական փոխառեալ բառեր հին հայերէնի մէջ: Բ.՝ Փրոբէմման Կ., Բունական փոխառեալ բառեր հայերէնի մէջ: Գ.՝ Հ. Հիւպշման, Հայկական Բառարանի անունք: 1894: Էջ Թ+145: Գր. 2.—

ԺԶ. Տաշեան Հ. Բ. Վ., Մատենագրական Մանր Ուսումնասիրութիւնք. Մասն Ա: Ա—Զ. Նեմեսիոս, Պրոկղ Դիադոխոս, Խոսրովիկ, Դիրք Հերձուածոց, Պրոկղ եւ Սեկունդոս: 1895: Էջ ԺԲ+296: Գր. 3.60

ԺԷ. Տաշեան Հ. Բ. Վ., Հայկական աշխատասիրութիւնք հայագէտ Պ. Փէթիէրի, ամփոփուած եւ թարգմ. ծանօթութեամբք: 1895: Էջ Թ+202: Գր. 2.50

ԺԸ. Տիդոնեան Կ., Սեւ Ծովու ոուսական եզերքը: 1895: Էջ 92: Գր. 2.—

ԺԹ. Գովրիկեան Հ. Գ. Վ., Դրանսիլուանիոյ Հայոց Մետրապոլիսը կամ Նկարագիր Կերպա Հայաբաղաքի ի գիր եւ ի պատկերս: 1896: Էջ Թ+352: Գր. 3.60

Ի. Տաշեան Հ. Բ. Վ., "Վարդապետութիւն առաքելոց„ անվաւերական կանոնաց մատեանը. Թուղթ Բակրատայ առ Կողբատոս եւ Կանոնք Թադդէի: 1896: Էջ Թ+442: Գր. 6.—

ԻԱ. Տոմաշէկ Վ., Սասուն եւ Տիգրիսի աղբերաց սահմանները: Պատմական եւ տեղագրական հե-

տազօտութիւն: Թրգմ. Հ. Բ. Պիլէզիկեան: 1896: Էջ Է+62: Փր. 1.—

ԻԲ. Կարդինէր Ա., Արգարու զրոյցը Մովսէս Խորենացւոյ Պատմութեան մէջ: Թրգմ. Հ. Գ. Վ. Մէնէվիշեան: 1897: Էջ ԺԵ+107: Փր. 1.50

ԻԳ. Յովհաննէսեան Հ. Ղ. Վ., Հետազօտութիւնք նախնեաց ռամկօրէնի վրայ: Ուսումնասիրութիւնը եւ քաղուածներ. Մասն Ա. Ռամկօրէն մատենագրութիւնը: Տետր Ա: 1897: Էջ Ը+272: Փր. 4.—

ԻԴ. Յովհաննէսեան Հ. Ղ. Վ., Հետազօտութիւնք նախնեաց ռամկօրէնի եւն: Տետր Բ: 1897: Էջ Ա—Ը: 273—522: Փր. 3.—

ԻԵ. Դէլլէր Հ., Համառօտ պատմութիւն Հայոց: Թրգմ. Հ. Գր. Վ. Դալէմբերեան: Յաւելուածք 1. Ցանկ Հայոց կոտորածներու առթիւ լոյս տեսած գրքերու: 2. Գաւազանագիրք Կաթողիկոսաց եւ Պատրիարքաց Հայոց: 1897: Էջ Ը+130: Փր. 1.50

ԻԶ. Մէնէվիշեան Հ. Գ. Վ., Դիրք (կամ յօդուած) գրելու արուեստը: Յաւելուած՝ Դիրք կարդալու արուեստը: 1898: Էջ Է+118: Փր. 1.25

ԻԷ. Խալաթեան Գր., Մ. Խորենացու նորագոյն աղբիւրների մասին քննադատական ուսումնասիրութիւնը: 1898: Էջ Է+53: Փր. 1.—

ԻԸ. Տաշեան Հ. Յ. Վ., Անկարկ մը հայ հնագրութեան վրայ: Ուսումնասիրութիւն Հայոց գրչութեան արուեստին: (10 գունատիպ պատկերով:) 1898: Էջ ԺԱ+202: Փր. 2.50

ԻԹ. Դաղդաշեան Յ., Փ. Բիւզանդացի եւ իւր պատմութեան խարդախողը: Քննութիւն Մ. Խորենացու աղբիւրների մասին: 1898: Էջ Թ+175: Փր. 2.50

Լ. Մանդենան Լ., Հայերէն բարբառախօսութիւն: Թրգմ. ի ռուսերէնէ Հ. Գ. Վ. Մէնէվիշեան: 1899: Էջ Է+26: Փր. —.50

ԼԱ. Քօսեան Հ. Յ. Վ., Հայք ի Զմիւռնիա եւ ի շրջակայս: Հատոր Ա. Զմիւռնիա եւ Հայք. (պատկերազարդ:) 1899: Էջ ԺԲ+369: Փր. 5.—

ԼԲ. Քանանան Հ. Ե. Վ., Հայք ի Զմիւռնիա եւ ի շրջակայս: Հատոր Բ. Զմիւռնիոյ վիճակին գլխաւոր քաղաքներն եւ Հայք. (պատկերազարդ:) 1899: Էջ Ժ+161: Փր. 2.50

ԼԳ. Գովրիկեան Հ. Գ. Վ., Հայք յԵղիսաբեթուպոլիս Դրանսիլուանիոյ. Բ. Հտր. 1780—1825: 1899: Էջ Լ+554: Փր. 5.—

ԼԴ. Գազանճեան Ե., Եւդոկիոյ Հայոց գաւառապարքառը: 1899: Էջ Լ+120: Փր. 1.—

ԼԵ. Կարրիէր Ս., Հեթանոս Հայաստանի ուխտ մեհեանները Ազաթանգեղոսի եւ Մ. Խորենացւոյ համեմատ: Թրգմ. Հ. Ե. Վ. Տաշեան (1 բարտէզով): 1899: Էջ 43: Փր. —.70

ԼԶ. Տաշեան Հ. Ե. Վ., Ժողովածոյ առակաց Վարդանայ, ըստ Ն. Մառի, տեղեկատուութիւն եւ քաղուածքներ: 1900: Էջ ԺԱ+193: Փր. 2.50

ԼԷ. Տաշեան Հ. Ե. Վ., Մատենագրական Մանր Ուսումնասիրութիւնք. (տես ԺԶ:) Մասն Բ: Է–Ժ. Խիկար եւ իւր իմաստութիւնն, Ազապետոս եւ իւր Յորդորականք առ Յուստինիանոս, Թղթակցութիւն Արգարու եւ Քրիստոսի ըստ Նոբագիւտ արձանագրութեան Եղեսիոսի, եւ Գէորգայ Պիսիդեայ Վեցօրեայք: 1901: Էջ ԺԲ+384: Փր. 4.50

ԼԸ. Տէր-Պողոսեան Գր., Նկատողութիւններ Փաւստոսի Պատմութեան վերաբերեալ: 1901: Էջ Ը+110: Փր. 1.50

ԼԹ. Վէրէր Ս., Աբարատը Ս. Գրոց մէջ: Թրգմ. Հ. Բ. Պիլէզիկճեան: 1901: Էջ Ե+77: Փր. 1.—

Խ. Սանտուրեան Յովսէփ Վ., Ասորեստանեայ եւ Պարսիկ սեպագիր արձանագրութիւնք կամ որոնք Նախիր-Ուրարտու աշխարհին պատմութեան կը վերաբերին: 1901: Էջ 262: Փր. 4.50

ԽԱ. Խալաթեանց Բագրատ, Հայ ժողովրդական դիւցազնական վէպը: 1903: Էջ Ը+72 Փր. 1.—

ԽԲ. Մէնէվիշեան Հ. Գ. Վ., Արդի լեզուագիտութիւնը: Հտր Ա.: 1903: Էջ Ը+204: Փր. 3.—

ԽԳ. Մարկոսեան Ե., Հայ Բդեաշխք: Թրգմ. Հ. Թ Կէտիկեան: 1903: Էջ 39: Փր. —.75

ԽԴ. Գանգեռ Հ., Սկզբնաւորութիւնք Բիւզանդեան բանասաթեմներու դրութեան (1 քարտէզով): Թրգմ. Հ. Գ. Գարանֆիլեան: 1903: Էջ Լ+83: Գր. 2.—

ԽԵ. Կիռլէսէրեան Բ. Վ., Ծովք, Ծովք-Տլուք եւ Հռոմ-Կղայ, պատմական եւ տեղագրական ուսումնասիրութիւն: 1904: Էջ Ը+117: Գր. 1.50

ԽԶ. Կիռլէսէրեան Բ. Վ., Կոլոտ Ցովհաննէս Պատրիարք. պատմագրական եւ բանասիրական ուսումնասիրութիւն: 1904: Էջ ԺԴ+227: Գր. 3.50

ԽԷ. Պէնէրսրն Հ., Նպաստ մը հայ. լեզուի պատմութեան: Թրգմ. Հ. Գ. Գարանֆիլեան: 1904: Էջ Ը+87: Գր. 1.25

ԽԸ. Տէր-Մկրտչեան Գ. եւ Ամատեան Հ. Ե., Քննութիւն եւ համեմատութիւն Եղնկայ Նորագիւտ ճեռագրին: 1904: Էջ Լ+105: Գր. 1.50

ԽԹ. Գովրիկեան Հ. Գ. Վ., Հայք յեղիսաթեթուպրիս Գ. Հտր. 1825–1904: Էջ Ժ+658: Գր. 7.—

Ծ. Շտրէք Մ., Հայաստան, Քրդաստան եւ արեւմտեան Պարսկաստան բաբելական-ասորեստանեայ տեսագրերու համաձայն: Թրգմ. Հ. Բ. Պիլէզիկճեան: 1904: Էջ Լ+222: Գր. 3.—

ԾԱ. Խալաթեանց Գր., Հայ Աբշակունիք ըստ Մովս. Խորենացւոյ, կամ Նոր ուսումնասիրութիւններ Մովս. Խորենացւոյ մասին: Թրգմ. Աբսէն, Ս. Սիմոնեանց: 1906: Էջ Ը+124: Գր. 1.50

ԾԲ. Պէնէրսրն Հ., Հայերէն եւ դրացի լեզուները: Թրգմ. Հ. Թ. Սէտիկեան: 1907: Էջ ԺԱ+257: Գր. 5.—

ԾԳ. Հիւբշման Հ., Հին Հայոց տեղւոյ անունները: Թրգմ. Հ. Բ. Պիլէզիկճեան: 1907: Էջ ԺԶ+443: Գր. 7.—

ԾԴ. Պէնէրսրն Հ., Հին հայերէնի ցուցական դերանունները: Թրգմ. Հ. Ե. Տաշեան: 1907: Էջ Լ+90 Գր. 2.—

ԾԵ. Գաղէմքեարեան Հ. Գ. Վ., Կենսագրութիւն Սարգիս Արքեպիսկոպոսի Սարաֆեան եւ ժամանակին հայ կաթողիկեայք: 1908: Էջ ԺԴ+433: Գր. 5.—

ԺԶ. Ամառեան Հ., Հայերէն նոր բառեր Նորագիւտ Մնացորդաց գրոց մէջ: 1908: Էջ 38: Փր. —.60

ԺԷ. Կիւլէսէրեան Բ. Ծ. Վ., Եղիշէ, քննական ուսումնասիրութիւն: 1909: Էջ ԻԸ+458: Փր. 7.—

ԺԸ¹. Ակինեան Հ. Ն., Տիմոթէոս Կուզ հայ մատենագրութեան մէջ: Էջ 1—60:

ԺԸ². Ամառեան Հր., Հայերէն նոր բառեր Տիմոթէոս Կուզի Հակաճառութեան մէջ: 1909: Էջ 61—106: Փր. 1.50

ԺԹ. Ակինեան Հ. Ն., Զաքարիա Եպ. Գնունեաց եւ իւր տաղերը: 1909: Էջ ԺԲ+87: Փր. 1.—

Կ. Ակինեան Հ. Ն., Կիւրիոն Կաթողիկոս Վրաց: 1910: Էջ ԻԷ+315: Փր. 5.—

ԿԱ. Մէնէվիշեան Հ. Գ. Ծ. Վ., Հայերէն լեզուի ուղղագրութեան խնդիրը: 1910: Էջ 73: Փր. 1.—

ԿԲ. Գիւտունդրոց Կ., Բիւզանդիոն եւ Պարսկաստան եւ անոնց դիւանագիտական եւ ազգային-իրաւական յարաբերութիւնները Յուստինիանու ժամանակ: Թրգմ. Հ. Հ. Համբարեան: 1911: Էջ Ը+162: Փր. 2.50

ԿԳ. Սամոռէլեան Խ., Մխիթար Գոշի Դատաստանագիրքն ու հին Հայոց քաղաքացիական իրաւունքը: 1911: Էջ ԺԲ+344: Փր. 5.—

ԿԴ. Առաքելեան Հ., Պարսկաստանի Հայերը, նրանց անցեալը, ներկան եւ ապագան: Ա. 1911: Էջ Ը+97: Փր. 1.50

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ